



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Pour usage

19 NOV 2011

ԹԱՌՍԻՒՆԻ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Արեւ
1982

ՆՈՒԷՐ

Տարեւի վանքի հազարամեակին

Պարկեշտ, խելօք, որդի սիրող ծնողը
Պիտ մեծացնէ որդուն կաթով մայրական,
Ինքը պ'տի լինի որդուն հսկողը,
Օրօրանում կապկապողը մշտական:
(ՏԽ 241-րդ երգ)

027

Հեղինակութիւն ժողովրդակ սն նուագածուի Է. Երզնի
ՆԵՐՍԷՍ ՍԱԶԱՆԴԱՐԵԱՆ մականունանեալ ԹԱՌՍԻՒՆԻ
1897 թ. Խնձորէսկ գիւղում, (ոչ հեռու Գօրիսից)



1898

Типография М. Вартамянца, Вельям. ул. № 7
Տպարան Մ Վարդանեանցի
Տ Փ Խ Ի Ս:

Дозволено Пензурою Тифлисъ, 6 Ноября 1897 года.



(4050) 1982-2016
41 1982

ՖԱՌԱՋԱՐԱՆԻ ՏԵՂ.

Մի քանի խօսք թառի ընդունակութեան, գործածութեան
և թառսիւնի նոր երգարանի նպատակի մասին:

Թառասէր հայ հասարակութեանը նուիրելով իմ ինք-
նուրոյն քանաստեղծութիւնները, մեծամասնութիւնը թառի
վերայ յարմարեցրած՝ թառի ընդունակութեան, գործա-
ծութեան եւ թառսիւնի նոր երգարանի նպատակի մասին
կամենում եմ մի քանի խօսք ասել, նորա հայկական նուա-
գարանների մէջ ամենաընդունակը ճանաչուած լինելու
պատճառաւ:

Թառը, իր մեղմ եւ քաղցր հնչիւնների շնորհիւ մինչ
օրս պահպանել է իւր գոյութիւնը, մրցելով արեւելեան
ըզլոր նուագարանների հետ. մրցում է եւ այժմ, չհանդի-
պելով իրանից ընդունակին: Թառով կարելի է մրցել
կերտական տնային շատ տեսակ նուագարանների հետ,
միայն թէ նրանց նման ընդունակ ձեռքերի գործիք եւ մեծ
տների զարդ լինելու քաղղը ունենայ:

Որովհետեւ, մեզանում հակառակ են վարվում թառի
ոգուն, քարտաշութիւնից, դարձնութիւնից, դալլաքութիւ-
նից եւ կոշկակարութիւնից խորշած, եւ մեծ հասակում
սովորած լինելու պատճառաւ: Թառը իր նուրբ եւ ազնիւ
թելերով չի կարող դիմանալ այդպիսիների թախանձան-

քին, ընդունելով իր վերայ յաղթական եւ դողացնող ծայ-
ներ: Որովհետեւ թառը սաստիկ փափկութիւն է պահանջում
համաձայն իր նուրբ եւ ազնիւ լարերի, ուրեմն թառով
ժողովրդականութիւն վաստակելու եւ ժողովրդի յարգ ու
պատիւը վայելելու ակնկալութիւն ունեցողները մանկու-
թեան գեղեցիկ ժամերը պիտ գործ դնեն սովորելու հա-
մար, ոչ թէ տարիները վատնած անընդունակ միջոցներ:

Բացի այդքանը գիւղ, քաղաք, հարուստ, աղքատ մեծ
ու փոքր միակերպ ընդունելու գաղափարը պիտի ունենայ,
ոչ թէ մեր համբալ սազանդարների նման այլանդակուած
ոչ մի կարիք չ'զգալով, ոչ մի ցաւի ցաւակից լինելով եւ
ոչ մի գաղափարի տէր, շրջելով ժողովրդի առատ վարձա-
տրութենաները վատնելով:

Իսկ ինչ վերաբերում է Թառսիւնի նոր երգարանի
նպատակին, վաղուց եմ ուխտել այդ նպատակին ծառա-
յել հետեւեալ կերպով: Այս երգարանից գոյացած արդիւն-
քը պիտի գործադրուի երեք որը պատանիների դաստի-
արակութեան համար յատկապէս Զանգեզուր գաւառի
քաղվածարդ Խնձորէսկ գիւղի համար մի ընտիր աստուա-
ծարան քահանայ պատրաստելու դիտաւորութեամբ, որը
մեզանում այժմ անհրաժեշտ պահանջներից մէկն է դար-
ձած:

Բարեգործական այս նպատակը ունենալու առթիւ,
մեր քարեմիտ ազգասէրների վերայ ունեցած յատուկ վրս-
տահութեամբ զրքիս գինը մէկ ըուրլի եմ նշանակում,
յուսալով, որ մեր սիրելի ազգային սիրով կ'վերաբերուին
մի վսէմ գործի հիմնադիր լինելու պարծանք վայելելու,
եւ մեր ազգի ցաւով վշտացած սիրտը սփոփելու դիտաւո-
րութեամբ:

Բացի այդքանը, խրախուսած կ'լնեն մեզ այլ եւս այս-
պիսի մի երգարան լոյս ընծայելու եւ իհարկէ թոյլ չեն
տալ ասելու

Հայի վերայ յոյս դնելով,
Հայերին շատ սիրելով,
Չստացայ ես իմ փափագը,
Շատ քանի սպասելով:

Ներսէս Սազանդարեանց.
Թառսիւնի

1. ԵՐԳԻՉ ԵՒ ԱՄՐՈՒՄ.

Երգիչ, սիրելի այն ամբօխին, որը երգ է հասկանում,
Որը երգին շատ բաներից թանկագին է անուանում.
Ոչ թէ նրանց. որոնք երգի միտք ու իմաստ չգգալով
Լաւերին վատարանում են վատերին գովաբանում:

Խօսքըս հռչականուն երգիչների մասին չէ բնաւ,
Որոնք երեք հատ երգով են մեղանում անմահանում,
Հինգ տարի անդ, հինգ տարին աստ խալիսի փողով
կրթուելով
Կեզծ անուններ են վաստակում հեռու արտասահմանում:

Ձեմ էլ յիշում այն շուռ, շահագ ասող այլակերպներին,
Որոնց հազըն մեծ գին ունի Ղարաբաղում, Շիրուանում,
Թէև վնաս, ոչ թէ օգուտ, թէև մի բան մասխարայ
Յարգվումէ մինչև անգամ Թիփլիզում Երևանում:

Ձեմ էլ յիշում Մշակի դէմ պրոպագանդա անող,
Տգէտ տէրտէրների պաշտպան Կարինին Հաշտարխանում,
Որը Թաթոսից, Մաթոսից, Կիրակոսից օգնուած
Կղերական օրգանի է պահապան հանդիսանում:

Ես յիշում եմ այն երգիչին այն ազգային մշակին
Որը ազնիւ գործերով է գովեստի արժանանում,
Ընկերացած արհեստակից Թառսիւնու նմաններին
Գիւղ, քաղաք, հարուստ և աղքատ մէկ մէկուց չի բաժանում:

2. ՈՐՈՏԵԱՆ ԳԵՏԻՆ ՍԻՒՆԵԱՑ ԱԶԻԱՐՅՈՒՄ.

Անվճիտ անհաշտ գետակ Որոտեան,
Ի՞նչ համբաւ ունիս երկրի խորքան,
Որի մէջ լիբը անթիւ անհամար
Քոյրք եղբայրք անխեղճ տանջվում են համան:

Որը քրդի ձեռքից որը գէշ պարսկի
Որը Ղարադաշտի գաղան ժառանգի,
Որը շահ-սէփան զայլ արիւնարբու
Վայրենի ցեղի ընտիր զաւակի:

Որոնք Մուղանից մինչի Սիսիան
Ոտի տակ տալով հասնում են Սեան,
Զի, գրաստ, մալ, մուլք հետները առած,
Աւար վերցրած ամենայն մի բան:

Այն էլ Սիւնեաց անառիկ երկրից
Անառիկ երկրի զառիվայրերից,
Որի բնակիչք իրար ատելով
Խորշում են թուրից սուրից, սուսերից.

Էլ ինչդ ասեմ ով անպարտաւան
Սիւնիք աւերող գետակ Որոտեան,
Զուր է գոռալըդ սար ձոր բանդելըդ
Քանզի շատ ունիս քեզ Թիւնի Օհան:

3. ԾԱՂԱՐԱՍԷՐ.

Ծաղրասէր, ես չեմ սիրում վիրաւորիչ ժպիտներդ
Որովհետեւ զգում եմ շատէ քո խոթամիտներդ,
Իրաւ է հայթհայթում ես սփոփելու, խնամելու
Նազելայքդ յայտնում են ինձ սարսափահար խիտներդ:

Այդ մասին էլ հալածում եմ վայելուչ պայթումներդ
Ճանկերիցս արձակում ցողիկ հովահար արտներդ,
Թէն սիրտս բարախում է սևորակ աչքերովդ
Շարժուածքդ յայտնում են ինձ անթիւ բթամիտներդ:

Իզուրէ այսուհետեւ քու մօտ գալը խանդաղանօք
Քանզի վիշտը Թառսիւնուս չի բուժիլ նոր օժիտներդ:

4. ԷՆ, ՈՐ ԷՆ.

Էն որ էն թողեց տղայ, կին և այր
Աստանդանուած գէպի գէս ու գէն,
Ամայի թողած հայի սրբավայր
Հիմնարկութիւններ իրաւ էն որ էն:

Միթէ չէր կարող այդ կապանքներից
Արձակէր հային էն իւր օգնութեամբ,
Լիրբ ու մոլեռանդ թշնամու ձեռքից
Արձակէր հային իւր աջակցութեամբ:

Միթէ չէր կարող հայի կաշկանդուած
Զեռքերի շղթան անել ցլրուցան,
Եւ այնուհետեւ հայի պաշարուած
Հողը տար հայի սեպհականութեան:

Բայց էն այսքանը չառ տեսաւ հային
Համար որ մնայ աշխարհիս երեսին,
Գլխին բերք խփեց ձեռքիցը խլեց
Երբ տեսաւ հայն է վնասում հային:

5. ՀԱՅԸ ՀԱՅԻՆ.

Հայը հային թէ օգուտ տայ, ասում են,
Աստուած տուողի վրան կ'ը բարկանայ,
Սուտ չեմ ասում, այսպէս մի բան խօսում են
Մինչև տարին չի քաշիլ կ'մեռնի նա:

Եթէ այսպէս մի արգելք բան չի եղած
Ինչո՞ւ հայը հայից մի բան չի տեսած.
Մէկը զրկուած է, միւսը վնասուած,
Երրորդը քանդուած աշխարհի վերայ:

Ինչ տեղ մի տուն տեսնում ես քանդուած,
Ասում են հայիցն է փլուած ու բէկուած,
Բացի ուրիշ ազգի հասուցած հարուած,
Հայն է միշտ հային տանջել անխնայ:

Այս մի դիրք է հայի համար դրուած է.
Հօրից, մօրից մնացած պարզ զրուած է,
Ամենի մօտ սիրուած համակրուած է,
Ընդունած էլ պիտ մնայ, Աստուած վկայ:

6. ՍՈՒՆԿ.

Ա՛խ, տխուր սոխակ,
Ինչո՞ւ միայնակ
Երգում ես լալում
Ինձի նմանակ:

Մի մութ սենեակում,
Փակուած վանդակում,
Վարդի համար ես
Միշտ աղաղակում:

Դուն էլ ինձ նման
Մտած վարդարան,
Յաւզ կը մնայ
Առանց սպեղան:

Յաջող, անյաջող,
Միշտ քեզի տանջող
Յաւեր պիտ դառնայ,
Դեղեր պահանջող:

Իզուր է, իզուր,
Նազելիս իզուր,
Պէս վարդի համար
Միշտ մնայ տխուր:

Որը առանց փուշ
Թաղնում է ապուշ,

Զի հասկանալով
Քո երգը անուշ:

Ուրեմն ինչո՞ւ
Համար է, միշտ քու
Այիտողորմ լացն,
Անխելք անհլու:

7. ԱՆԲԱՆ.

Որդիքդ անբան
Մէջ անմիութեան
Խորասուզուած են,
Խղճուկ Հայաստան:

Երկչոտ, կրակոտ,
Շատ բանի կարօտ,
Կարդում կրթվում են
Խալիֆայի մօտ:

Որք տուած նիւթ
Հասկացնում է դիւթ,
Ոչ թէ ազգային
Գործք հազուադիւտ:

Զ'ատում սնապաշտ
Թշնամին անհաշտ,
Կռիւ է կանչում
Պատերազմի դաշտ:

Անհրովարտակ
Եւ անուրհանդակ,
Թափել ցանկանալով
Մեր գլխին կրակ:

Իսկ քո ժիրաժիր
Որդին անխնդիր,
Անգիր է անում
Սաղմոս, ժամագիր:

Որից խալիֆան
Իրա փարաջան
Դէռ չի նորոգել
Խղճուկ Հայաստան:

8. ԱՐԱՐԻԶ.

Ռ՛վ փառաց՝ Տէր, երկնի և երկրի արարիչ,
Տիեզերախնամ աջդ ինձ հասցուր,
Դուն ես իմ ապաւէն, դուն ես իմ քաւիչ,
Դու իմ նախախնամով Տէր պարզեատուր:

Ռ՛վ անհուն սէր, հզօր բարեաց բարերար,
Գթած, բազմախնամ փրկիչ կենարար,
Խնդրում եմ, երջանկութեանս համար
Իմաստաբեր պտուղներդ ընդհանուր:

Թառսիւնին եմ, ծնկաչոք ոտքդ ընկած,
Պարզած անդօր թեկերս բազկատարած,
Աղաչում եմ, Աստուած իմ Աստուած
Օգնեցեք ինձ որ միշտ մնամ անախուր:

9. ՈՎ ԾՈՎ.

Գու մինչ երբ ցամաք ու շոր պիտի մնաս, ու ծով անխմատ
Նաւերդ աննաւաւար, խեղճ ձկներդ ցիրուցան անխատ,
Ալիքներդ վտանգաւոր, մակոյկդ լայի մէջ թալուած,
Ափերդ քարուքանդ եղած, յատակդ անամուր անհաստ:

Զկնորսդ անվայել լուրեր է միշտ ըմբռնում օտարուստ,
Վատաբարոյ լրտեսներից, կամ որից ճշշուում է հարգաստ,
Ուրիշ լճեր քանի կողմից ունեն վէճ վէճ գետեր անթիւ
Գու միայն միայնակ խեղճ մնացած անօգտավէտ նուաստ:

Բացի Թառսիւնին, ու ունիս մի հատիկ հարազատ քեզի
Որ նորից խօստանայ քեզի զոհել նորահառ անձր աստ:

10. ՀՈԳՍԸ.

Ամենալարակիւ հիւանդութիւնը
Հոգսը, դարդը, միտքն է մադուս համար.
Այդ է լափում մարդուս առողջութիւնը
Մէկ օր նիհար թողելով, մի օր տկար:

Ինչքան կուգես հեռու կացիր նորանից,
Յետոյ կուգայ, ձեռք չի քաշիլ քեզանից
Մտածելու նիւթ կ'տայ ամեն բանից,
Որ կարենաս քեզի տանջել շարաշար:

Մէկին հարցնում է միւսին չի հարցնում,
Մէկին պինդ ըմբռնած ձեռք չի վերցնում,

Մէկին մաշում չոր կմաղբ է դարձնում,
Տալով նոցա մտածելու մեծ պաշար:

Ահա այս է հոգսի, դարդի շահը գուտ
Որից բացի մնաս չի կայ մէկ օգուտ:
Մարդուս արի օրը կանցուցանէ մութ
Քիշերները սովորականից խաւար:

Թառսիւնին եմ այս տեսակ եմ միտք անում
Խեղդուելով հոգսերի շատրվանում,
Այս տեսակ եմ միտք անում և անուանում
Զգտնելով մի հատիկ բան փրկարար:

11. ՀԱՅ ՏՂԱՅ

Ակնոցը աչքերին, տրոստը ձեռքին
Անդրալարդիկը նեղ, կողերը սրած,
Հայի տղայ, չես դիմանալ այդ բեռին
Այսօր էգուց կ'մնաս լոյստուած:

Հաստ մատերդ թող չը սովրի ձեռնոցի,
Քաշ գլուխդ թանկագին հովանոցի.
Արժանացիր մէկ վարպետի հնոցի
Հալուիր, մաշուիր, մարդ եղիր կամաց կամաց:

Զեռքդ առ մէկ հիւնի լաւ կռկած մահակ,
Եթէ հայ ես հայ լինելու ընդունակ
Մէկից գէնը կլանիր, միւսից թուր, նիզակ.
Երրորդից նժոյգ ձի, սանձահարուած:

Քեզ բացի այդքանը մէկ երեկոյի
 Բան չունես ուստիւ, մարդկանց հաճելի,
 Զի մօռցած մայրենի լեզուն սիրելի,
 Թէ հայ ես, հայ տղայ, հայ մօրից ծնուած:

Ուրեմն դէն ձգիր ակնոց և այլ բան,
 Մի մատնիր աչքերդ այլակերպութեան,
 Հազիր տրեխներդ, Թառսինու նման
 Իբր պաշտպան նախնեաց լաւ օրինաց:

12. ՄԵՐ ԲԷԿԵՐԸ.

Մեր բէկերը միրզաները ինչ ուզում են անում են,
 Օրը մէկի տունը քանդում միւսինը թալանում են,
 Ուտում ձրի, խմում ձրի, հագնում ձրի, ապրում ձրի,
 Իրանց գործը յառաջացնում, խալխինը խափանում են:

Թէ ինչ համախօսականով մի հատ տիտղոս ձեռք բերած,
 Ուռած փրուած տատանում են, մենք բէկ ենք անուանում են
 Թէն մեզ ճնշում, շարշարում ու հարստահարում են
 Դարձեալ պատուի գովեստի տէր մարդկանց շրջանում են:

Տգրուկի պէս ծըրծըրում են արիւնը խեղճ գիւղացւոց
 Որովհետեւ գործի տէր են նստած գիւանխանում են.
 Թառսինուս բազմամարդ գիւղը էլ ո՞նց դպրոց ունենայ,
 Քանզի պէս գեր կատարող թերուսները մեզանում են:

13. ՍԻՆԵՅՈՒ ԿԵԱՆՔԻՑ.

Մեր խալխի մէջը բաւական է մի մարդ ասպարէզ մտաւ
 Օսին, ջնաղին, ճակատին ժեշտի կտուր կսցրաւ,
 Շատ չի քաշիլ, կը տեսնես, որ ամենաընտիր մի տեղ
 Այդ նոր ընտիր մարդը, յանկարծ, թաղայ տունի տէր դառաւ:

Ում փողից է, ում գրպանից, այդ հարցնող մարդ չիկայ
 Կամայ կայր են մեծով, փոքրով, թէ ծեր լինի, թէ պառաւ,
 Քանզի մէկը տանուտէր է, միւսը նորա օգնական,
 Երրորդը մի խաւարամիտ գրգիր է խելքի ծարաւ:

Զորքորդը մի անգրաւարժ ոստիկանատան ծառայ
 Հինգերորդը վատաբարոյ քոխվայ է մեծահամբաւ,
 Վեցերորդը վարժապետ է, թէ ինչ թալակից փախած
 Թէն վարձը ամբողջ տարի վեց հարիւր է, ոչ սակաւ:

Եօթներորդը զօրոգչի է, գառը ոչխար գողանող,
 Ութերորդը կաշառասէր, անտառապահ անիրաւ,
 Իններորդը վաշխառու է, փողի շահով մարդ դառած,
 Տասներորդը քահանայ է, հիւսիսին ասող հարաւ:

Ահա սորանք են մեր տեղի կրթուած գործիչները,
 Որոց մասին մեր գործերը միշտ մ'նացել է խոնաւ,
 Այս մասին էլ խեղճ Թարսինիս վիրաւորուած բորբոքուած
 Քաշում է աշխարհի տանջանք քաշում և, աշխարհի ցաւ:

4050 / 20 1982-2016



14 Բ... ԱՄՈՒՆ ՏԵՊԱՆԱԳԻՐԸ.

Քսան հաղար նաղդ հարստութիւն թողիր,
Կարծելով հոգուդ փրկութիւն թողիր,
Բայց տես, քանիսին դուն անտուն թողիր
Իւր տուն ու տեղից դատարկուն թողիր:

Չարչարուած այդպէս մի գումար թողիր,
Որդոցդ կեանքը անխաւար թողիր,
Բայց տես, քանիսի ճրագը մար թողիր,
Քանի թշուառի խելագար թողիր:

Պարտամուրհակներ անհամար թողիր,
Տղայ և աղջիկ բաւարար թողիր,
Բայց տես, քանիսին դու անճար թողիր,
Քանիսին անհաց, անպաշար թողիր:

Երկու հատ գութան մէկ արօր թողիր,
Յորին ու գարի տասը հոր թողիր,
Բայց տես, քանիսին դու մոլոր թողիր,
Մերկ, ոտաբորիկ, առանց շոր թողիր:

Հինգ ձի, հինգ ջորի, քսան կով թողիր,
Ժառանգիդ կեանքը ապահով թողիր,
Բայց տես քանիսի աչքը ծով թողիր,
Իր տուն ու տեղից դու խռով թողիր:

Մէկ տուն, մէկ սենեակ, մէկ աղբար թողիր,
Փահրատի օրը խիստ պայծառ թողիր,
Բայց ինչ օգուտ, երբ ապիկար թողիր,
Քեզ նման անկարգ, անկատար թողիր:

Հինգ տասը սուրու լաւ ոչխար թողիր,
Մածունը, թանը անհամար թողիր,
Ինչ շահ, Սիմօնին անսատար թողիր
Անկիրթ, անուսում, անտաշ քար թողիր:

Մեռար, գնացիր, դուռդ փակ թողիր
Անունդ քեզ հետ հողի տակ թողիր,
Յիշելու արժան ոչ վաստակ թողիր,
Ոչ մի յիշատակ, ոչ կտակ թողիր:

Էլ այս աշխարհում ինչ ապրանք թողիր,
Ինչ անուն, հռչակ, ինչ պարծանք թողիր,
Թառսիւնուս համար բամբասանք թողիր
Չաղ տեսակ տեսակ հայհոյեանք թողիր:

15. ԻՄ ԳԻՒՂԱԿԱՆԻՑ.

Ինձ վերայ էժան նստող մէկ կոպէկ
Դեռ չի պատահել իմ գիւղականից,
Եթէ եղածն էլ յիշեմ սրտաբէկ
Մէկին հաղար են առել ինձանից:

Հասկանալով ամեն մի բան յուսել եմ
Ինչ եղել է, չի եղել ափսոսել եմ,
Որի խօսքին մէկ համեմատ խօսել եմ,
Նեղացել է տուած պարզ պատասխանից:

Հետները նստելով վեր կենալով,
Ամեն խօսք և ամեն բան իմանալով,
Ամեն մի գէշ խօսքերի գիմանալով,
Թանգ օրերս վառնել եմ, ընկած բանից:

Իրանց նման չեմ նստել զուր բամբասել,
Մէկի տունը քանդել, միւսին վնասել,
Սպիտակին սև, սևին սպիտակ ասել:
Զը վախելով երկնային մեծ իշխանից:

Իմանալով, ներել եմ ամեն մի բան:
Զկանգնելով ամեն խօսքի հանդիման,
Ջան եմ ասել, ջան չեմ լսել մշտական
Օհանների, Թիւնիների շրջանից:

Այս տեսակ մի պատուի տէր եմ անուանում,
Լայնաբերան Թիւնիների ատենում,
Որոնք աչքով տեսնել կուզեն մի անկում,
Բան չ'զգալով Թառսիւնուս պէս թառզանից:

16. ՄԵՐ ՏԱՆԻՅ.

Տափը կոխեմ Խնձորկեցոց, առաջ մէկը մեր տանից,
Մէկէլն էլ միկնոյն օրը մեզ մօտիկ հարեանից.
Այնուհետև թող տարածուի գիւղի տակից մինչ գլուխ,
Որ մի քանի յիմարի կեանք չ'զատուի այդ շրջանից:

Որոնք թե թեի տուած, գլխիս քար ու երկաթ կալան,
Եթէ դիտմամբ մի օգտաւէտ բան խօսեմ վարժարանից.
Իսկ մի գաւաթ օղիով, մի հատ տուն քանդելու գործում,
Կը մասնակցեն մեծով փոքրով ինչ թագցնեմ ձեզանից:

Հէնց այս մասին խեղճ Թառսիւնիս ձեռքեր պարզած դէպ
երկինք,
Մահ եմ խնդրում սուրանց համար երկնային իշխանից:

17. ՕՐԻՆԱՅ.

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Մարդ սիրելով քանդուեց զնաց տունս,
Որին սրտանց սիրեցի, սեր յայտնեցի,
Սրատաւորեց իմ թանկագին անունս:

Ով պատահեց սկսեցի յայտնել սէր,
Իբր աւանդապահ մի հատ անձնուէր.
Ամեն հաստավղի կարծելով ընկեր,
Աղաւաղուած մնաց կարգ ու կանոնս:

Հասկանալով, որ նա ինձ հետ նստելու
Զունի պատիւ, ոչ թէ հետս խօսելու,
Բայց ես իբր մի մարդասէր անքոռ
Սանձհարուած եմ պահել բարկութիւնս:

Սիրել եմ ընկերիս աւել քան իմ անձ
Ոչ ոխ եմ գործածել և ոչ էլ նախանձ,
Թառսիւնիս այս առթիւ վատնել եմ շատ գանձ
Աննախանձելի թողել զբութիւնս:

18. ԲԱՆԴ.

Ուր գնում ես զնա աշխարհի վերայ,
Թէ բաղդ չես ունեցել, չես էլ ունենայ,
Լինիս բարեգուշակ իբր մարգարայ,
Քեզ կանուանեն ամեն մի բանով ախալ:

Միտք անելով իզուր քեզ մի վնասիր,
Յաւը, դարդը աշխարհի սրտում դասիր,
Ով քեզ գնահատում է, նորան սպասիր
Տգէտներէից յարդ ու պատիւ մի յուսալ:

Փոյթ չէ, մարդիկ թող քեզի դաւաճանեն
Թանին մածուէն, մածնին թան անուանեն,
Օրեր կուգայ, քեզ էլ կ'գովաբանեն
Յարգելով քու պատիւդ անզլանալ:

Ուրեմն, դու այդպէսների մօտ նստած,
Մի կռիւլ քեզ, Թառսիւնի, վիրաւորուած.
Մարգարիտը խիտ ցեխի մէջ չաղախուած
Երբէք չի մնացել, և չի էլ մնալ:

19. Ա Ձ Խ Ա Տ Ո Ղ.

Ես էլ չեմ գիտում թէ ինչպէս աշխատեմ
Քեզի նման չատ տեղ, չատ փող ունենամ,
Տներ կառուցանեմ, գիւղեր հաստատեմ,
Արգասաբեր չատ հող ու մող ունենամ:

Ծառաներըս մէկը միւսիցը ազնիւ,
Պահպանել ես իմ գործեր ու հաշիւ,
Վնաս բերողս քիչ, շահ բերողս անթիւ
Քանի մի գունդ գործ կատարող ունենամ:

Ընտիր տեսակներից հագած փքուած
Ոտը ձեռքը մաքուր սոնակը սրած,

Երկու ձեռքը ծալած, կրծքին կպցրած,
Յետիցս ընկած աղա ասող ունենամ:

Փողոցներում տեղից կանգնող, բարեող,
Ձեռքս պագող, երկրպագող, աղաչող,
Դուռս բացող, դիւի էլ եկող գնացող
Հազար տանող, հազար բերող ունենամ:

Հռչակուած ամենայն մի ատեանում
Ամեն գործարանում ամեն շրջանում,
Ինձ աղա ճանաչող կնոջս խանում
Տղիս աղի տղայ ասող ունենամ:

Ձեմ հասկանում, սովրեցրու ո՛վ ամիրան
Ո՛վ դազը կարճ, արշինը սուղ, չար, դաժան,
Թողիր, ես էլ քիչ ծառայեմ այդ կոչման
Թառսիւնու պէս լաւ թառ ածող ունենամ:

20. ՀԵՆՅ ԱՅԴ ԷՐ ՊԼԿԸՍ.

Սուր սուր աչքերիդ հենց այդ էր պակաս,
Այդ էլ որ տիրար թամամեց գնաց,
Էլ չես հասկանում սիրելուդ նորհաս
Կեանքը, այդ մասին, թառամեց գնաց:

Ճշմարիտն ասած, այս օր այդ մասին
Նեղացաւ սիրտս և հոգիս ուժգին,
Այսքան տարիների մէկ տեղ, միասին
Կերած խմածս հարամեց գնաց:

Ել ինչ կեանք, ինչ օր և ինչ միտիժար,
Որ պիտի մաշուիմ, տանջուիմ չարաչար,
Հենց այդքանի դէմ այդքանի համար
Քաղցր բերանս անհամեց գնաց:

Այնքան տղէտ ես, այնքան թլուրիմաց,
Խօսել չի լինում մի բան քո դիմաց,
Ենթակայ եղած աշխարհի չարեաց,
Թառսիւնուս կեանքը դառամեց գնաց:

21. ՕՐ Մ... ԻՆ Բ. ՔԱՂԱՔՈՒՄ.

Պէլին պոզեր չի լինիլ գծին երկար պոչ
Յիմարի ճակատին աստղ իջած,
Գիւի էլ րեզ պէս կ'ընեն յիմար ոչ ու փուշ
Երեսը լստտուած աչքերը պըլզած:

Լսած խօսքը ձեռաց ուրիշին կ'ասեն,
Չեն հասկանալ իրանց շահին վնասեն,
Մէկին կ'բամբասեն միւսին կ'սպասեն
Երբորդից զրկուած, կը մնան նստած:

Բան չ'հասկանալով կատարեալ խօսքից
Կըսկսեն չը ջոկիլ հարուածը սոսկից,
Յակինթը սև քարից, արծաթը ոսկից
Ջատել չ'կրնալով, կ'մնան ապշած:

Թառսիւնի մի ցաւիր այդքանի համար
Ոյդպէս է յիմարի ամբողջ դադափար,

Կ'ձեի կ'կարի անքուն անդադար
Շորերը կարկատած, ոտերը բացբաց:

22. ԷԼԻ ՆՐԱՆ Բ. ՔԱՂԱՔՈՒՄ.

Քսանից անցած, պառաւած աղջիկ,
Ե՞րբ պիտի գայ տուն ձեր նոր փեսացուն,
Մէկ կաթ պաղ ջրի ծարաւած աղջիկ,
Շուտով տարիքդ կ'ընի երեսուն:

Այնուհետև ո՞վ է գծուել քեզ տանի,
Օրը երկու երեք ատամբ հանի,
Թէ ազափ նշանի, պիտի փոշմանի
Թէ որք և այրի մարդ, վայ նրա գլխուն:

Ընկերներդ ամուսնացան, հեռացան
Շատ բաների շատ դործերի տիրացան,
Մէկ տեղ վայելեցին, մէկ տեղ ծերացան,
Կրելով միասին պանծալի անուն:

Մէկ օր բրդի միջում, մէկ օր բամբակի,
Մէկ օր մետաքսի մէջ, մէկ օր դիպակի,
Տէր կ'դառնաս երսուն և հինգ հասակի
Գուն մնալով հօրդ տան հարսնացուն:

Լաւ չարժուիր մարդիկ նայեն քու վրէն
Առնեն տանեն հօրդ տանից հեռացնեն,
Այս կերպ մի ճար գտիր քու քաշալ գլխին,
Բամբասելով վնաս չի գալ Թառսիւնուն:

23. Ա Ն Հ Ա Ի Ա Ն Ը.

Անհաւանք ինքը իրան հաւանած
Խոհեմ մարդկանց վէհ շրջանին չի հաւնի,
Ձննես ամեն կողմից նախատագործած
Ներհունների աստիճանին չի հաւնի:

Բարի օր ասելու մէկ բերան չունի
Գլխին գդակ ոտին ոտնաման չունի,
Մէկ հատ լումա պահելու գրպան չունի
Գանձով լեցուն գանձարանին չի հաւնի:

Երեսը շատի պէս շառագունուած
Գոյնից հիասթափուած պատկերից զրկուած,
Մէջքը քսան տեղից կարծես թէ ճկուած
Արայի պէս գովականին չի հաւնի:

Մէկունաչափ բերմունք չունի օտարուստ
Ազգականից բարեկամից ամենուստ,
Ոչ մէջքին կապում կայ, ոչ հագին հագուստ
Պճնագեղեղալ ամիրանին չի հաւնի:

Չունի մէկ սիրելի մէկ գորովագութ
Որ չ'սիրէ իրա համար խաւար, մութ,
Ոչ բախում ցախ ունի ոչ տան մէջ ագութ,
Մասիս կոչուած սուրճարանին չի հաւնի:

Յիշելու մի հատ բան չունի կենդանի,
Որ մարդ յիշէ նորան իբր արժանի,
Մէկ տուն ունի նման մէկ հաւարանի,
Բիւր հիւրընկալ օթևանին չի հաւնի:

Կենաց առողջութիւն մանկական չունի
Բուն բնակութիւն մայրական չունի,
Տանը մէջ կատարեալ գերդաստան չունի
Ուրիշների գերդաստանին չի հաւնի:

Արօր չունի, եզ չունի, գութան չունի,
Սերմ գցելու մի թիղ անդաստան չունի,
Գաղթական է, հաստատ կեցարան չունի
Մեծ արքայի ննջարանին չի հաւնի:

Ոչ տուն ունի, ոչ տեղ, ոչ փող ոչ կայինք
Ոչ մի հատ սփռոց, ոչ անձեռոցիկ,
Ոչ հագին կայ կօշիկ ոչ կրկնակոշիկ
Հարուստների թանգարանին չի հաւնի:

Մէկ տուն ունի անառաւոտաղ անյատակ
Անդուն, անգպդակ աննախասենեակ,
Անգաւիթ, անդահլիճ, անպատնէշ, անբակ,
Վհհանձնական խոհարարին չի հաւնի:

Խօսացնես հետդ խօսել չի կարող
Խօսածներիդ հեշտ ըմբռնել չի կարող,
Մէկ ջանգիւլում ածել ասել չի կարող
Թառսիւնուս պէս երգաբանին չի հաւնի:

24. Հ Ա Յ Ո Ի Հ Ի Ն.

Անգութ է հայուհին անխիղճ անզգայ
Մերժում է ինքնակամ չատ սէր, ակամայ:

Լափում է շատ սրտեր անխիղճ անխնայ
Փախիր, հոգիս փախիր, փախիր հայ աղայ,
Օր օր օր մի նայիր անգութ հայ աղջիկայ:

Օտարաց լեզու է, օտարաց ուսում,
Որ միշտ ծաւալում է հայուն հոսում,
Հայուն երակում հայ արինն չի հոսում
Փախիր հոգիս փախիր փախիր և այլն:

Հայուն հին ձերը չէ, է միշտ օտարաց,
Օտարաց քաջերի հետ է ճնշուած,
Սիրում է սղմում է հոգսը չէ սպառում
Փախիր հոգիս փախիր և այլն:

Նա դեռ կարօտում է այլազանների
Հեռանում հալածում հայկականների,
Նուստ Թառսիւնում պէս սիրեկանների
Փախիր հոգիս և այլն....

25. ՀԱԶԱՐ ՄԻ ՏԵՍԱԿ.

Ախ իմ սրտի ուզած հազար մի տեսակ
Ցաւեր, երբ պիտի ձեզ ձեռք բերեմ մէկ մէկ,
Ամեն մէկիդ համար մի օր ժամանակ
ձարած, ճնշուած քննադատեմ սրտաբէկ:

Ձեմ իմանում առաջ որ մէկիդ համար
Էստուր էնդուր խնդրեմ գտնեմ մի ճար,
Ամեն մէկդ ինձ տանջողէր չարաչար
Կեանքս մաշող, հալող գիշեր ու ցերեկ:

Թառսիւնիս այսքան շատ ցաւերի միջում
Մի հատի նեղութեան կարիքն եմ զգում,
Նորան եմ ընդունում նորան եմ սիրում
Որին երազիս մէջ տեսել եմ երեկ:

26. Ս Ի Ր ՈՒՆ.

Սիրունը սիրունի դարդը կ'իմանայ
Տգէղը տգէղին մունջն էլ մունջին,
Տուն արի հալածուի այսքանի վերայ,
Փուշի պէս մի մտնիր մէջը իմ վնջին:

Սիրունին էլ սիրուն խելքն է լինում
Որ միշտ սիրունների պատին է պահում,
Ոչ թէ տգէղի պէս մէկին ընդունում
Թէկուզ լինի բուրջին թէկուզ թուրունջին:

Սիրունը սիրունին միշտ բարե կուտայ,
Ընկած տեղում ձեռքեր կուտայ, թե կուտայ,
Ձի խնայիլ ամեն մի տարբե կուտայ
Մասնակցելով նորա ցաւին, տրտունջին:

Ձը հեռանալ Թառսիւնու պէս թառանից
Մերթ զամղայի մերթ քաջարի գուսանից,
Մերթ Ձհանգիր մերթ Ներսէս սիրեբանից
Որոնք իր գերին են, և իր եաւունջին:

Վերոյիշեալ մականուններով շատ ճանաչող լինելու պատճառաւ
աւելորդ չ'համարեցի ով Սիրուն անունով երգի վերջին տունի
մէջ ամփոփել բոլոր անուններս: Հեղ. Է. Ժող. Առաք. Երգիչ.
Ն. Ա. Ս... Էանց:

Ջալալօղլի

27. ՀԱՅ ԿԱՆ ՈՒՋ.

Դարձրու աշքերդ, նայէ դէս ու դէն
Երբեմն աշքերդ ձգէ իմ վրէն,
Տես, թէ ինչպէս է քո հայ գեղանին
Ապշած ու մաշուած պատկերիդ առջին:

Տես թէ ինչպէս է պատուհանիդ մօտ
Տխուր, անընդհատ, վախկոտ ու երկշոտ,
Շլինքը ծռուած երկու ձեռք խաչ,
Նայում է խեղճ խեղճ քեզ ամանչ ամանչ:

Տես թէ ինչպէս է իր երիտասարդ
Կեանքը խոնարհել դէպի քո թակարդ,
Երկբայութիւնից շառագունուած,
Միշտ չքեղաշուր, գոյնիցը զատուած:

Տես թէ ինչպէս է ջինջ հայացք ուղղած
Դէպի ձեր դահլիճ սպառազինուած,
Խանդաղատագին հառաչանք պարծած,
Սրբազան սիրով աստանդանուած:

Տես թէ ինչպէս է գլխաքարչ, խոնարհ,
Կրելու դէմքին ապտակիդ յօժար,
Այդ էլ չի տեսնում իբր սփոփանք
Իբր իւր քաշած հոգսերի փրկանք:

Այո, չի տեսնում, և չի էլ տեսնիլ,
Թէն մինչ օրս շատ, է սիրել.

Շատ, շատ է սիրել, շատ, շատ էլ պաշտել,
Որերը վատնել, այս օրին հասել:

Ջալալօղլի

28. ՀԱՆ Գ Ս Տ ՈՒ Թ Ի Ի Ն.

Ա՛խ տուէք ինձ հանդստութիւն
Անուշ մի քուն այն երկրում,
Որի մէջ սէր, վայելչութիւն,
Աղատութիւն է թնդում:

Անդ է արփին լուսապայծառ
Արեազեղ շողշողում,
Մերթ գողտրիկ, մերթ վառէվառ
Մերթ թարմութիւն ներբողում,

Թող անդ ժպտայ իմ երեսին
Չնաշխարհիկ այն հոգին,
Որի համար ես լալագին
Օր եմ վատնել, թակագին:

Թող փաղարչէ մեղմիկ մեղմիկ
Փարէ զիս նա հերարձակ
Չորս անկիւնս պատած մրրիկ,
Չեմ յիշիլ սարսափ և ահ:

Թողէք, հանգչեմ կիսակենդան
Այն աշխարհի խորքերում,
Որը ունի եղեմական
Սրտաճմիկ մի ցնցում:

Ջալալօղլի

29. Բ Ա Ր Ե Կ Ա Մ.

Ամեն բերնի մի հաւատայ բարեկամ,
Զարն անվախճան է, խօ նորահաս չէ,
Ամեն բերնի մի սանձ ունի և մի համ,
Թողիր, ինչ խօսում են խօսեն, վնաս չէ:

Պէտք չէ հոգիս տգէտ բամբասողներից
Նեղանալ ձանձրանալ, չար ոսոխներից,
Սէր հալածողներից, սիրտ որսողներից
Հանդիպած վնասը վնասի մաս չէ:

Վարդին կ'հանդիպէ միշտ անիրաւ փուշ
Կ'թողնի սոխակին խելագար ապուշ,
Բայց դու խելօք եղիր, չարթուիր զգուշ
Հոգիս, Թաւսիւնուդ թշնամին պակաս չէ:

Ջ ա լ ա յ յ ո ղ ի

30. Ք Ե Զ Ե Մ Ա Ս Ո Ւ Մ

Թիկունքը լայն, մէջքը բարակ,
Ունքերը կեռ որպէս լուսնեակ,
Ինձ մի թողնիլ մէկ ու մենակ.
Հայի աղջիկ իմ գեղունիկ:

Քեզ տեսնելուց սիրտս զգաց
Մի առանձին սէր փոյթընթաց,
Ինձի թողեց հետըք ընկած
Հայի աղջիկ իմ գեղունիկ:

Ունքերդ մանգաղի պէս կեռ,
Սրտիս կալաւ որպէս բեռ,
Թողեց թշուառիս կիսամեռ:
Հայի աղջիկ իմ գեղունակ:

Ունքերդ կեռ ի բնական
Երեք օրուան լուսնի նման,
Ում աղաչեմ որ քեզ ինձ տան:
Հայի աղջիկ իմ գեղունակ:

Հագնուում ես ամանչ ամանչ
Մէկ օր կարմիր, մէկ օր կանանչ,
Սիրիւ ինձ անտես անճանանչ:
Հայի աղջիկ իմ գեղունակ:

Երբ չեմ տեսնում կանգնած մօտիս
Հաղ ասելիս, կամ երգելիս,
Թաթում է սիրտս հոգիս:
Հայի աղջիկ իմ գեղունակ:

Իզուր ես նստել սպասում
Սիրուն, սիրունների դասում.
Քեզ զրկում ես ինձ վնասում:
Հայի աղջիկ իմ գեղունակ:

Անունդ քո Արուսեակ է,
Արուսեակի նմանակ է,
Ինձ աստ թողնիլ կրակ է:
Հայի աղջիկ իմ գեղունակ:

Լսիր իմ ողբ, իմ աղաղակ,
Իմ կարաւիկ, իմ աղունակ,
Իմ լուսնեակ, իմ արեգակ:

Հայի աղջիկ իմ գեղունակ:

Թող պարտէզդ առանց շուշան

Ձը ծլի ծաղկի անման:

Մենակ քեզի սիրող շատ կան:

Հայի աղջիկ իմ գեղունակ:

Արի, արի իմ խորոտիկ,

Իմ խորոտիկ, իմ մորոտիկ,

Իմ Հայկանուշ չնաշխարհիկ:

Սիրուն աղջիկ իմ գեղունակ:

Ջալալօղլի.

31. Կ Ո Յ Մ.

Ա. իս փափուկ կոյս, փափուկ կոյս,

Փափուկների աչքի լոյս,

Թէ արև ես հասցրու

Յովմունքներից ամենուս:

Ձէ ես էլ քեզ պէս փափուկ

Խղճուկներից եմ գեղջուկ.

Անտառապատ վայրերում

Անմայր մեծացած մի գառնուկ:

Խոր մթննկած ձորերում

Ագատութիւն եմ գոռում,

Բայց ով է այդ լսողը,

Որքան գոռում եմ, գոռում:

Ձորս անկիւնս պաշարուած

Գայլ ու վագր կատաղած,

Որոնք հենց ինձ են նայում

Բերանները բաց գալած:

32. Զ Ա Մ Բ Ա Գ.

Հասկանում եմ ում համար է

Ձեռքիդ բռնած զամբագին,

Բայց ավսո՞ւս որ շատ դժուար է

Տալ քու սիրած հայ տղին:

Որը բեղնից հեռու նստած,

Շլինքը ծուռ, ձեռքը խաչ,

Տրտում տխուր մատը գծուած

Նայում է ամանչ ամանչ:

Շատ չի քաշիլ, կը թառամի

Ձեռքիդ բռնած սղմելով,

Նայողը շուտ կը դառամի

Հոգսի տակ ընկղմուելով:

Ինչու է պէտք քեզ և ինձի

Այդ մահը մօտ զամբագին,

Որի առթիւ պիտի տանջուի

Իմ ու քու անմեղ հոգին:

Ուրեմն տար փրթաւի դուրս

Ասիր խօսքով ինչ կուղես,

Տեսնում եմ, քեզ էլ, ով խեղճ կոյս
Ինձի նման փոսոս ես:

Տեսնում եմ դուն էլ ինձ նման
Ամօթխած ես աշխարհում,
Ուզում ես ասել մի հատ բան
Ամաչում ես, կարմրում:

Ուզում ես ասել ի բնէ
Գեղեցկութեան եմ տիպար,
Աստուած մեզի ստեղծել է
Սիրել սիրուելու համար:

Սեղ կուգես բայց չես կարում
Պատճառ բռնած զամբագին,
Որով միայն խեղճ թարում
Սիրտն ես թողում վշտագին:

Ահա այս է գաղտնիքդ քու,
Գաղափարդ, ով սիրուն,
Առանց մարդկանց իմաց տալու
Սիրել կուգես Թառսիւնուն:

Ջալալօղլի

33. Գ Ա Յ Ի Ս Ո Ն.

Կորաւ Կայիսոնս, Կայիսուի թագս.
Սարեր, քարեր, դաշտեր ոտի տակ տալով,
Վայր ընկաւ անունս, մեծ դրօշակս
Թարմ մատղաշ սրտիս թէթ կրակ տալով:

Ձարակամիս համար թողեց ամեն բան,
Թէն նոցա անընդունական արժան.
Իսկ ինձ համար, տրտմութեան մի օթեան,
Վիրաւորուած սրտիս սուր դանակ տալով:

Անցաւ, գնաց առանցի յետ նայելու,
Մի կենդանի բան չը թողեց յիշելու,
Թառսիւնուս այսքանը տուաւ ասելու,
Սլեկոծուած մտքիս մտրակ տալով:

34. Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ.

Քանի քանի տարի առաջ
Գործդ շարունակ, հողագործ,
Ձախ ցանածդ ընկնում էր աջ
Ծլում յաջողակ, հողագործ:

Ասա տեսնեմ ինչի համար
Ել այնպէս չէ ինչպէս որ կար,
Այդ մասին տկար ես, տկար,
Իմ անօժանդակ հողագործ:

Առաւօտից մինչ իրիկուն
Տանջվում ես անդադար, անքուն,
Մէջքդ ուտում է ոջիլ ու լիւն
Երեսդ մոծակ, հողագործ:

Օրը մի վայրկեան մի մնօտ
Ձեռն հանդում գերդաստանիդ մօտ,
Օր էք վատնում իրար կարօտ,
Իմ անընդունակ հողագործ:

Ձայնդ պարպեց դարաւ տալուց,
Էստուր, Էնդուր բարեաւ տալուց,
Մէկին բարձր համբաւ տալուց
Միւսին մէծ հռչակ, հողագործ:

Հաց չես ճարում քաղցածելուս,
Ջուր չես ճարում ծարաւելուս,
Պատիւ չունիս պառաւելուս,
Մէկ ու միայնակ հողագործ:

Անտառներդ գայլ ու արծիւ
Լիքը, արմատացած անթիւ.
Լեռներդ ծախած անհաշիւ,
Անփող անըստակ հողագործ:

Ո՛վ պիտի տայ քեզ անդաստան,
Որ չի մնաս թափառական.
Կառավարես քո գերդաստան
Շատին նմանակ, հողագործ:

Ե՛րբ պիտի յաջողէ գործդ,
Առանց գցան կապուի խուրձդ,
Ո՛վ պիտ գգայ հարց ու փորցդ,
Ախ իմ դառնորակ հողագործ:

Ո՞ւր է քո զարգարուած գութան,
Փոկդ երկար, առանց գցան,
Եղներդ շատ անցիրուցան,
Մէջքդ անհորաք, հողագործ:

Մինչ երբ պիտ մնաս վիզդ ծուռ,
Մուրանալիս դռնէ ի դուռ

Երեխայդ անհաց, անջուր,
Տունդ անճրագ, հողագործ:

Եւ մինչ երբ մնաս մոլորուած,
Ընկած, գունաթափ մաշուած,
Հագուստդ հին, փորդ քաղցած,
Գրպանդ դարտակ հողագործ:

Ինչո՞ւ համար ամբողջ տարի
Չարչարվում ես ան պատճառի,
Գերդաստանդ կառավարի
Եւ մի թող, մշակ հողագործ:

Աշխատելու օրերն անցաւ,
Ես չտեսի գործդ մի լաւ,
Մէկ օր սոված մէկ օր ծարաւ
Այլոց ձեռաց տակ, հողագործ:

Թառսիւնուս պէս մէկ հարադատ
Ո՛վ ունես քեզանից անգատ,
Դարաւ տուր դէպի Արտաշատ
Իբր մի թռչնակ, հողագործ:

Շ ու լ ա վ ե ր

35. Ի Ն 2 Ի Ն Մ Ա Ն Ե Ն.

Ինչի նման են, և ինչ կ'լինեն
Այժմեան թերուս կրթուածները,
Որոնք հաղիւ հազ զատուած դպրոցէն,
Կերպարանափոխում են մութ փողոցները:

Ամեն մի վարմունքով այլանդակուած
Շուկաների շուրջն են վայելում հարբած,
Որսկան կատուի նման պոչները տնկած
Կարծում են իրանք են այս աշխարհ եկած:

Զմեռը տուն ընկած տաք տեղը նստած,
Ամառ սպիտկ գլուզ սաք դառած:
Հով տեղերը ճարած մութ փողոցների,
Թերուսունիների գիրկը ընկզմուած:

Բացի այսքանը ինչ բան են բերած
Այն վարժարանից որից են դատուած,
Որի որբութիւնը սուրբ չէ պաշտպանվում
Այսպիսի թերուս սաներից զրդուած:

Բ ա գ ու .

36. Հ Ա Ր Ց .

Ջարմանում եմ ես քեզանից
Ինչի՞ համար ես շատ ուրախ,
Աշխարհի ամեն մի բանից
Ոչ առնող ես ոչ մեծածախ:

Թէ խելք ունիս, ուսում սովորէ,
Առաջացիր օր ըստ օրէ,
Քանի որ հասակդ նոր է
Երեսդ անամութ, անվախ:

Արի ասածներս իմաց,
Մարդ կ'դառնաս կամաց կամաց,

Էլ չես մնալ անջուր, անհաց
Մեծ մեծ ականջներդ կախ կախ:

Լսիր ասածը Թառսիւնուս,
Եթէ ունիս հաւատ և յոյս,
Էլ չես մնալ խաւար անլոյս
Քաշելով շատի պէս ախ վախ:

37. Թ Ա Ս Ի Բ .

Հայաստան երկիր, քանի՞ դար տրտում
Քանի՞ դար մոլոր, անտէր է տնքում,
Ծալած ձեռքերը գլխաքարչ, խոնարհ,
Քրդի, գէշ պարսկի հարեան երկրում:

Հայաստան, Հայաստան, Հայաստան
Տանջանաց աշխարհ:

Հինգ հարիւր տարի սորանից առաջ,
Ունէր միութիւն, ունէր և շատ քաջ,
Ունէր քաջարի յոյժ վրէժառու
Ունէր ուշադիր սիրուն մանչ ու լաճ:

Հայաստան և այլն...

Բայց այժմ անսէր և անմիարան,
Վարվում են զեղխ իրար դաւաճան,
Եսականութեան դրոշակի տակ
Ստրկութիւնը չ'համարած բան
Հայաստան և այլն...

Ձեն ապաշաւել իրար ատելուց
Իրար ատելուց և նախատելուց,

Կայրի և զոյգի, օրինաւոր կանանց
Վայրենաբարոյ վատ նկատելուց:

Հայաստան և այլն....

Նախատագիրը վերստին մերոց
Գրուած է կարծես, ծառայել այլոց,
Թափառել շրջել, երկրէ երկիր
Կաշկանդուած մնալ ողջ արարածոց:

Հայաստան, և այլն...

28. Ա Ն Զ Գ Ա Յ.

Աղգիս անզգայ
Որդին թիւրիմաց,
Ինձ տալ կ'ցանկայ
Ամեն մի հարուած:

Որի երեսին
Երբ նկատում եմ,
Ս'ի ոյժ առանձին
Իսկոյն զգում եմ:

Կարծելով բոլոր
Աշխարհի չարեաց,
Ես մի հատ հզօր
Բան կ'ընիմ գիմաց:

Իրա անունով
Ես պարծենում եմ,
Իրա հաւատով
Հալվում մաշվում եմ:

Բայց նա ինձ իրան
Կարծելով դուշման,
Քանդում է իր տուն
Եւ իմ օթեան:

39. Մ Ա Յ Ր Ի Մ.

Մայր իմ, թէպէտ այսքան տարի եղած եմ թափառական
Ձեմ մոռացել հայրենիքս և ոչ էլ սէր մայրական,
Թէև չորս չէ, տասնեւչորս տարի մնամ թափառուած
Իրաւ գիտէ ձեր հարազատ սրդին եմ միշտ անբաժան:

Այդ մասին հէջ հոգս մի արա, և մի լար խեղճ մայրիկս
Որտեղ երթայ մարդուս մի մահ ունի գրուած ճակատի վրան,
Ուր որ լինիմ, ուր որ երթամ, թէկուզ աշխարհի ծայրին՝
Ձեմ մոռանալ թանկ անունդ, բաղցր սէրդ յաւիտեան:

Մի կարծիր թէ բաղդի կամքը ինձ կըղրկէ քու գրկից,
Մոռնալ կուտայ քու մայրական գորովագութ ամեն բան,
Ուրեմն չահիր Թառսիւնուդ մի մայրական նամակով
Ղարիբ օրս թող անցկացնեմ տաք երկրում Կասպիան:

40. Ի Ր Ա Ն Թ Ո Ր Ա Ն Ը.

Լսել էի չի տեսել իրան թորանը
Նորա նորանուած արօս սահմանը,
Որի բարգաւաճող մէն հարստամիտ
Ձունի բացի անեկիք հայ գաղթականը:

Որոնք ամայի թողած հայրենիք,
Զգում են նոցա ամեն մի կարիք,
Տաք օդ ծծելով, փոշի կուլ տալով
Յայտնելով սրտանց ամեն մի բարիք:

Մէկը գոյնը փոխած, միւսը վերարկուն
Երրորդը կարգը, չորրորդը կանոն,
Պաշտպան ձեռքած թողոտ թորանին
Երկիրը մոռցած հայրենի սիրուն:

Որի մէջ հայր, մայր, ազգ ու ազգական,
Զինչ հանացք ուղղած իրանց գալստեան,
Կից կից թափելով արիւն արտասուներ
Կաթ կաթ թափելով օձի թոյն համան:

Ա ս ի ա բ ա տ ու մ

41. ԼԱՆԿ ԹԻՄՈՒՐԻ ԶԻՐԻՄԸ.

Այս օր մի կառքով Սամարկանդի մէջ
Պտտում էի ամեն տեղ էջ էջ,
Տեսայ, մէկ կորած գազանի շիրիմ,
Իսկոյն պղտորուեց արիւն իմ անշէջ:

Յառաջ քայլեցի արձակ համարձակ,
Դէպ արիւնարբու ամի Թէմուր Լենկ,
Ի պատիւ նոցա կեղտոտացրի
Յիսոտ ոտերեով մզկիթի յատակ:

Թքելու գնացի նորա արձանին
Նորա զարդարուած սև գերեզմանին,

Այդքանով առայ ես, իմ վրէժը
Մի թանկա տալով սարթ պահապանին:

Յիշեցի հազար երեք հարիւր թուին
Ջարդել տիրելը Հայաստան երկրին,
Օրը չորս անգամ հայի արիւնով
Լողացնելը իւր անպէտք մարմնին:

Այո, տեսածի պատմութեան միջին,
Թէմուրից եղած գործքը զազրագին,
Հինգ հարիւր տարի սորանից առաջ
Յոյց տուած վէրքը մեր թշուառ ազգին:
Ս ա մ ա ր ղ ա ն դ

42. ՄԻՆՉ ԴՊՐՈՅ ՈՒՆԵՆԱԼ ԳՕՐԻՍ ԱԻԱՆԻՆ.

Օրինակ առ գոնէ Հէ փէ շա գիւղից
Ձեռք բեր մի վարժարան, երկգասեան Գօրիս,
Որոնց հողը, ջուրը, զատ չէ քեզանից
Երկրի կենդրոն, նոր աւան Գօրիս:

Քաղաք ես կոչվում բարեբախտաբար,
Ունես քեզնից ստոր, ունես հաւասար,
Նմանների շարքում դուն էլ քեզ համար
Ունեցիր մի հաստատ վարժարան Գօրիս:

Շատերի համեմատ շատերի նման
Ձանա ձեռք բեր մի դպրոց ծխական,
Որով տէր կղաճնաս դուն էլ քո կոչման
Չեն անուանիլ քեզի անարժան, Գօրիս:

Կարիք զգաւ այդքանը ունենալու,
Հարուդ մարուդ միացրած իրարու,
Հեռու եմ, այդ լուրը շուտ ինձ հասցրու.
Իմ աւերակ գիւղի հարեան Գօրիս:

Ինչ ուզում եմ թող լսեմ ուրախանամ
Շատերի մօտ խնդամ ու շախշախանամ,
Հարցնողից ոչ քաշուիմ ոչ վախենամ,
Ունենալով քեզից պատասխան, Գօրիս:

Ինչ ուզում եմ այն եմ ասում, լսացնում
Հարուդներիդ, Թիւնիներիդ խօսացնում,
Օսալներիդ Քալերիտ եմ հասացնում
Որ ճանանչեն քեզի, պատմական Գօրիս:

Ամեն մի բան անցել է ու գնացել,
Ընկել, ոչնչացել, փլթել, հնացել,
Ամբողջ սիւնիքի մէջ գուն հս մնացել
Թառսիւնի երգչի քաւարան Գօրիս:

Բ ու խ ա ր ա լ .

43. ՍԱՄԱՐՂԱՆԴԻ ԼԱԹԻՓԱՆ.

Այժեամ, անտառի գլխի մի որսկան
Կանգնել է, նայում, ձեռքին հրացան,
Կանգնել է նայում լէ, լէ, լէ, ձեռքին հրացան:

Քո եղջիւր, այժեամ ջան
Սրել տուր, այժեամ ջան,
Քանի բիւր, այժեամ ջան
ձխկէ փոր, այժեամ ջան:

Համ ծառի տակ, համ քարի տակ թաքցուր, այժեամ ջան
Քեզ վանողի անտառիցը փախտուր, այժեամ ջան:

Մի վախիր նորա ժանգոտ գնդակից,
Հալածուիր կորչիլ յատուկ բանակից,
Հալածուիր կորչիլ լէ, լէ, լէ, յատուկ բանակից.
Քո եղջիւր այժեամ ջան և այլն....

Մի քաշուիր նոցա գէշ գէշ գունդերից
Զրկուիր քո փափլիկ մափլիկ ձագերից
Զրկուիր քո փափլիկ լէ, լէ, լէ մափլիկ ձագերից.
Քո եղջիւր այժեամ ջան և այլն....

Պահպանիր ձագիդ մեծացուր անտառում
Թող մանգայ, սովրի խրթին տեղերում,
Թող մանգայ, սովրի, լէ, լէ, լէ, խրթին տեղերում.
Քո եղջիւր այժեամ ջան և այլն....

Թող այնքան կանգնէ ոտքերը ուռչի
Սիրտը նեղանայ, հեռանայ կորչի,
Սիրտը նեղանայ, լէ, լէ, լէ, հեռանայ կորչի.
Քո եղջիւր այժեամ ջան և այլն....

Այնուհետեւ դու արձակ, համարձակ,
Փափկասուն ոստեր տուր, ակռիքիդ տակ,
Փափկասուն ոստեր, լէ, լէ, լէ, տուր ակռիքիդ տակ.
Քո եղջիւր այժեամ ջան և այլն....

Թող լսեն այժեամն է վայելում սիրով
Անտառի շուրջը, հանդերձ ձագերով,
Անտառի շուրջը, լէ, լէ, լէ, հանդերձ ձագերով.
Քո եղջիւր այժեամ ջան և այլն....

Յետայնու քեզի գայլ, վագր, արծիւ

Ինչ պիտի անէ թէն անաղնիւ:

Ինչ պիտի անէ, լէ, լէ, լէ, թէն անաղնիւ:

Քո եղջիւր այծեամ ջան և այլն....

Անվախ աներկիւղ խիտ ծառերի մէջ

Մեծցուր ձագերիդ տուր ցաւերիդ վերջ:

Մեծցուր ձագերիդ, լէ, լէ, լէ տուր ցաւերիդ վերջ.

Քո եղջիւր այծեամ ջան և այլն....

44. Գ Ե Ղ Ո Ի Ն Ա Կ.

Վարագոյրի տակ նստած, գեղունակ,

Ու՛մ հետ ես խօսում մէկ ու միայնակ.

Դու սիրուն աղջիկ,

Բանի բուն աղջիկ,

Փափկասուն աղջիկ,

Սիրասուն աղջիկ:

Աչքերը սև ունքերը սև սև սիրուն աղջիկ

Մարդու խելքը գլխիցը հանող ցորնագոյն աղջիկ:

Բաց արա հոգիս, քո կուրծք լայնալիճք,

Թող փաթաթէ զիս որպէս զի մահիճք,

Դու սիրուն աղջիկ և այլն....

Յայտնէ ինձ սէրդ, թէ ես ճշկրիտ,

Չանուանեն քեզ վայրենի կրկիդ:

Դու սիրուն աղջիկ և այլն....

45. Փ Ո Ր 2.

Ելի մի փորձ փորձուածի,

Միշտ ցաւագար խեղճ գլխի,

Որի համար պիտի տանջուի.

Իմ սիրտ, իմ միտք, իմ հոգի:

Եւ իմ համով կեանք մաշուած

Ամեն բանից թանկագին,

Պիտ տատանուի վիրաւորուած

Վշտերի տէր անագին:

Որոնց ոչ դեղ, ոչ էլ դարման

Չէ ստեղծուած աշխարհում,

Եւ ոչ էլ մի գիւտ օգնական

Բժիշկների քանքարում:

Ժամ, օր, ամիս, տարիք, դարեր

Գիշեր, ցերեկ տանջուելով,

Պիտ քաշեմ աշխարհի ցաւեր

Կտած լալով, ողբալով:

Ինչ փորձ է, և ինչո՞ւ համար,

Այդ գիտէ միայն Սատուած,

Գիտէ, որ ես եմ չարաչար

Տանջուող մսկորած:

Սյո՛, էհ գիտէ օր, օր, օր,

Անտեղի ոչ թէ տեղի,

Պիտի մաշեմ կեանքս բոլոր

Փորձով մարդկային ցեղի:

46. ՄԵՐՎԻ ԳԱՂԹԱԾ ՀԱՅԻ ՊԱՐԸ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՕՆ ՕՐԸ.

Ա՛խ վարդավառ, վարդավառ,
Հեր չի անցար պերճավառ,
Շրջապատուած չորս կողմովս
Հայի սերունդներ կայտառ:

Դէ՛հ սուլիր, սուլիր, սուլիր.

Ո՛հ սուլիր, սուլիր, սուլիր:

Հագնուած սիրուն, սիրուն,
Մէկը միւսից փափկասուն,
Իրար ընդ յարգանելով
Կատարէինք քու սուրբ տօն:

Դէ՛հ սուլիր, սուլիր, և այլն....

Սիրուն երգեր անընդհատ
Երգէիք ազատ, ազատ,
Սիրտեր շահող վերք ցրող
Ջան գիւլիմի համեմատ:

Դէ՛հ սուլիր, սուլիր և այլն....

Հայ կանանց շրջանակում,
Աղջըկերանց բանակում,
Ոչ թէ այս տարուայ նման
Սերվու պէս աւերակում:

Դէ՛հ սուլիր, սուլիր և այլն....

Որի օգը հաց ու ջուր
Ընդունում ենք անմաքուր,

Թէ՛հ անսննդարար,

Դիտմամբ ենք ուտում տխուր:

Դէ՛հ սուլիր, սուլիր, սուլիր, և այլն...

Խօսք ունինք, լսող չունինք,

Օգնող, մեծարող չունինք.

Ուրախաց պսակ կոյսից

Սյդ էլ մի ասող չունինք:

Դէ՛հ սուլիր և այլն....

Ժամ չունինք, տէրտէր չունինք,

Քոյր չունինք, հեր, մեր չունինք,

Մենակ մենակ ենք պարում,

Մէկ մէկու հետ սէր չունինք:

Մ Ե Ր Վ Ի.

47. ԳԱՐՆԱՆ ՄԻ ԳԻՉԵՐ ՂԶԱՐՎԱԳՈՒՄ.

Գարնան պարզ գիշեր, լուսինը պայծառ

Շատերի համար փայլում է կայտառ,

Ոչ թէ ինձ նման մի հատիկ, թշուառ,

Պատանու դարդի, ցաւի փրկորար:

Աստղերն էլ նոյնպէս ու նոյա նման,

Նորանց համար է շողջողում համան,

Որոնք մինչ օրս իմ քառորդի չափ

Յաւ չեն ունեցել առանց սպիւզան:

Ա՛խ գիշեր, գիշեր, գարնան պարզ գիշեր,

Ի՞նչդ կ'ապակի, ինչդ կը կորչէր,

Որ լսացնէիր փայլուն աստղերին,
Մէկն էլ ինձ համար դուրս ցայտեր փայլէր:

48. Ա Յ Ծ Ե Ա Մ Ն Ի Կ.

Համ աղեղ է, համ նիզակ է, համ էլ թուր,
Եղջիւրներդ ձիգ, անուշիկ, ծայրը սուր:

Ինչո՞ւ, ինչո՞ւ անտառում

Շարժվում ես միշտ տխուր:

Լէ, լէ, լէ, լէ, այծեամ, այծեամ, այծեամ, այծեամ, այծեամ՝նիկ

Լէ, լէ, լէ, լէ, այծեամ ե այլն....

Խեղճ ձագերդ փախ տալով խրտնացնելով

Այստեղ ձերն է, այնտեղ, ձերն է տածելով,

Որոնց պէտք է ուժ, մէկ մէկ

Ներշնչել, լացացնելով:

Լէ, լէ, լէ, լէ, այծեամ, այծեամ, այծեամ, այծեամ, այծեամ՝նիկ

Լէ, լէ, լէ, լէ, ե այլն....

Խիտ տեղերում նստելով մտածելով

Ձագուկներիդ վերցրած մանածելով,

Մետաքսակերպ խոտերը

Փըշահ փըշ արածելով:

Լէ, լէ, լէ, լէ, այծեամ, այծեամ, այծեամ, այծեամ, այծեամ՝նիկ

Լէ, լէ, լէ, լէ, այծեամ ե այլն....

Ձագուկներիդ այսպէս մեծցուր այծեամ՝նիկ

Ապրիլ խաղաղ շատերի պէս երջանիկ,

Եւ շատերի պէս անկախ

Կունենաս քեզ հայրենիք:

Լէ, լէ, լէ, լէ, այծեամ, այծեամ, այծեամ, այծեամ, այծեամ՝նիկ

Լէ, լէ, լէ, լէ, այծեամ ե այլն....

49. Յ Ա Ն Յ.

Յանցը երեսին, մի կոյս սրընթաց,

Այսօր ինձ սիրեց ի մէջ ընկերաց,

Ա՛խ, անցանց, անցանց, նազելիս անցանց

Այսօր ինձ սիրեց ի մէջ ընկերաց:

Ատեց արգելող ամեն մի չարեաց

Ի նպաստ սիրոյ ազնիւ օրինաց,

Ա՛խ, անցանց ե այլն....

Ինձ իրան կարծեց, իսկ իրան ինձի

Խօսքը չ'լսած ամեն նախանձի,

Ա՛խ, անցանց ե այլն....

Ել ինչ է պէտքը բացի այսքանը,

Որ ինձ ցոյց է տուել իմ աննմանը,

Ա՛խ, անցանց ե այլն....

Ել ինչ բան մ'նաց նա ինձ ցոյց տալու

Ո՛հ իմ սիրուհին հլու է; հլու,

Ա՛խ, անցանց ե այլն.. .

(Ղ.ՂԼԱՐՎԱԴՈՒՄ)

50. Պ Ա Ր Ս Ի Ր Ո Յ.

Հայի տղերք, հայ աղջիկերք,

Եթէ ունինք վիշտ ու վէրք:

Արիք մօտիկ, ձեռք ձեռքի տանք

Մի պար պարենք ու նստենք:

Գուցէ յանկարծ թուրքը մտաւ
Էլ չի թողեց որ պարենը,
Հողը պիտի տանենք այդ ցաւ,
Էլ ո՞ր օրուայ համար ենք:

Այս օրուան օրը երբ նորանք
Պիտի մտնեն, մեր չըջան,
Ինչի՞ համար է մեր պարծանք
Եւ մեր անուն, բաջ հայկեան:

Ձեզ եմ խնդրում, ձեզ աղաչում
Հայի տղերք, նոր է նոր,
Գուցէ մեզ էլ չի պատահում
Այսպիսի մի սուրբ տօն օր:

Ուրեմն արիք ջան ասենք
Մէկս մէկու, ջան լսենք,
Տաճկի նման մի գէշ ազգի
Մեր մէջ մտնել չ'թողնենք:

Բաւական է որքան նորա
Տանջեցին մեզ անխնայ,
Հայի հացով, հայի փողով
Ձեռք բերին մեծ թանթանայ:

51. ԱՅՍ ՕՐ ԷՒ ՄԹՆԵՅ.

Այս օր էլ մթնեց, մութ գիշեր դառաւ,
Իսկի ինձ համար մի բան չի եղաւ,
Ինչ երազումի և ինչ ուզումի,
Մարիս միջիցը դուրս եկաւ, կորաւ:

Ով գիտէ, քանի՞ սար ու ձոր անցաւ
Քանի՞ քարերից վայր զլորուաւ,
Քանի՞ անտառներ, քանի՞ մէջ դաշտեր
Կանգաղայ անիւ ոտքի տակ տուաւ:

Թողած ինձ խափուած մէջ իմ յոյսերի
Մէջ իմ ծաղկեալ նստակների,
Մնացած վաղը միւս օր ասելով
Տէր նոր մտքերի, նոր տենչանքների:

52. Ա Ռ Ն Ա Զ Ե Լ Ի Ն.

Հասիր իմ նաղելի, հասիր իմ սիրուն,
Հասիր ինձ օգնութեան տուր մի սպեղան,
Քաշում եմ ամեն ցաւ, ամեն դառնութիւն
Կարօտ բարեկամական քաղցր տեսութեան:

Թանկ անունդ մոռնալ չեմ կարողանում
Մերթ լալում եմ, մերթ ողբում, մերթ համբանում,
Ինչքան մտածում եմ, ինչքան միտք անում,
Չունիմ բացի բեղնից մի հատ օգնական:

Թառսիւնիդ եմ, վիրաւորուած, բորբոքուած.
Անօգնական, անդեղ ու ճար մնացած,
Քու մասին քարէքար, սարէսար ընկած,
Տատանվում եմ, կարօտ քո սիրոյ տեսիլան:

53 Ա Ղ Զ Ի Կ.

Աղջիկ, ինչու ես այդպէս գծուել
Բարիքներ թողել, չարիք վերցրել,
Մաղերդ գլխիդ, ունեկիքներով կծկել
Քու լայն թիկունքը առանց ծամ թողել:

Շաղ տուր, թող ցրուէ արծակ, համարձակ,
Մինչ կուրծք լայնալիճք, մինչ ծծեր ճերմակ,
Քո սիրած ազգի սիրելի որդին
Թող պատսպարուի այդ վրանի տակ:

Որը քեզ համար տրտում, լալագին,
Օրեր է վատնել, ժամեր թանկագին,
Զմեռը մրսելով ամառն այրուելով,
Շատ օրեր քաղցած, սլատուհանիդ տակին:

Միթէ այդքանը քեզի չէ շարժում
Անգութ կողմերիդ սիրոյ մէջ վարժում,
Ի նալատ քեզի սիրող մի զոհի,
Որը մի կողմից չունի մէկ բուժում:

Գոնէ վարմունքով տուր ինձ գոհացում,
Յրուած մաղերով, եղած մամացում,
Այն թշուառ անձին, այն թշուառ զոհին,
Որը շարժվում է ինչպէս մի ցնցում:

54. Ո Ղ Զ.

Ողջ էլ ինձ ասում են, թողիր այդ բանը,
Եղիր հաշուապահ, կամ գործակատար,
Եկ, այդպէս մի թողիր քու խեղճ գրպանը,
Զեռք բեր մէկ աղայից, մէկ քանի հազար:

Յետ այնու դիր տակդ, վերան պինդ նստէ,
Թող այդ աղան իրան քարերին նետէ,
Այս կերպ և այս տեսակ բանըդ գրստէ,
Խաղաղ անդորր ապրէ քեզ համար:

Տարին երկու անգամ գնա Մօսկուայ,
Երեք անգամ տօնավաճառ, քեզ բօլա,
Միայն թէ խելք ունիս, բերես նիսիայ,
Մնանկութիւն յայտարարես անդադար:

Այնուհետև չլինիդ հաստացրու,
Կամ եղիր գանձապահ, կամ հոգաբարձու,
Կամ լուսարար մի յայտնի եկեղեցու,
Որը ունի հարստութիւն անհամար:

Կամ թէ անուանիր քեզ բան յօրինող,
Լաւ բաներին թողող, վատերին դրող,
Կամ վաշխառու, ձիւր շափող, կարճ կտրող,
Որէն պէտք չէ ոչ գիտութիւն, ոչ հանճար:

Շատերն այս տեսակ են հարստանում,
Ոչ թէ քեզ պէս նստում են խոր միտք անում,

Բերում են ապառիկ շուտ սնանկանում,
Տուն տեղը հաստատում կնոջը, անարգար:

Այսպէս լինես, այնպէս կ'լինես, Թառսիւնի,
Փափագ ունես, այս ձկին շուտ ընդունի,
Քանի նոր է, յարմար կողմեր չատ ունի,
Աւելորդ է թառ ամելդ չարաչար:

55. Զ Ա Ր Մ Ա Ն Ք.

Զարմանում եմ թէ փողը հերի յիմարին չատ սիրում,
Իրա պահող, պահպանող, անմիտ խաւարին չատ սիրում,
Ատում է ներհուններին, գիտուններին, ազնիւներին,
Մեծագլուխ հաստափոր, խելքից տկարին չատ սիրում:

Մերժում է սէր, յոյս, հաւատ ունեցող պարզամիտներին,
Մարդկութեան շարքից հալածուած անկատարին չատ սիրում,
Մտերիմ անձանց ատումէ, անմտերիմ ընդունում,
Ազա զրկող, վնասող գործակատարին չատ սիրում:

Տեսնել անգամ չի կամենում զթաժ ողորմածներին,
Մարդասպան, մարդի տուն բանդող, ապիկարին չատ սիրում,
Թառսիւնուս պէսին ատումէ, Վասակաչատ աշխարհում
Նէ. բէկի նման զինեմով խելագարին չատ սիրում:

56. Հ Ե Ր Ա Թ Ա Փ.

Հերթափ, որոնէ քեզ մի ապագայ,
Մի թող սիրեբանիդ թոյլ, կիսակենդան,

Մի շարժուիր ծոյլ, անուանեն քեզ անզգայ,
Սիրահարի, սէր, հալածող, սիրեկան:

Թող չսսեմ դժուար է միտքերդ դիւրել
Դժուար է, չեմ կարող անկոչ, քեզ դիմել,
Եւ դժուար է ինչպէս արտասահմանել
Քեզ քո հայրենիքից դէպի Հայաստան:

Թէ խելք ունիս, մի վայուիր անգլթաբար,
Ինձի մաշել ու չարչարել չարաչար,
Շահէլ ցանկայ մի Թառսիւնի սիրահար
Թող քու սիրով մխիթարուի յաւիտեան:

57. Ղ Ա Լ Ա Ն Գ Ա Ր Ի.

Հասիր սիրելի, հասիր, հիւանդ եմ սիրովդ ես,
Համ կապկապուած կամարաձև ունքերովդ ես,
Աստանդանուած երկրէ երկիր, որոնելով,
Ո՛ւր ես, ասելով եմ հալվում վշտերովդ ես:

Ո՛ւր, ո՛ւր գնացիր, ո՛ւր կորար, և որ կուման ընկար,
Արի չոչափուել եմ ուզում քո ձեռքերովդ ես,
Տեսնել եմ ուզում, արի, ո՛ւր ես անդրանիկս,
Տկար էլ լինիմ, կըբժշկուիմ պատկերովդ ես:

Եկ, եկ երևոյթ, տեսնեմ չնաշխարհիկս իմ,
Մի թարմութիւն էլա վայելեմ, աչքերովդ ես,
Գիտես քո սիրած Թառսիւնին եմ, սար ու ձոր ընկած
Հալուող մաշուող անդեղ ու ճար վերքերովդ ես:

58. Ն Ա Զ Ե Լ Ի.

Թէ կուգես ճանաչել սիրելիդ սիրած,
Ոչ գինեմօր, ոչ բագոս եմ, նազելի,
Ուրիշների համար հալածուած, կորած,
Քեզ համար մի Հոմերոս եմ, նազելի:

Վառ աչքերդ, վարդ երեսդ բաց արա,
Սիրեկանիդ վառուած սիրտը թաց արա,
Ինչ ուզում ես, միայն չուտ լմաց արա,
Այսպէս մնամ, չատ ավսոս եմ, նազելի:

Թառսիւնիդ եմ մէկ թառածող հայ գուսան,
Աչք ու ունքդ գովաբանող երգահան.
Աշխարհի մէջ մարդի ճնշող ամեն բան
Հասկանում ես, էլ ինչ խօսեմ, նազելի:

59 ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՌԱՅ ՎԱՌԱՅԻ.

Ես քեզ տեսի բազի միջին,
Թռթռալիս աստին, անդին,
Դուր եկար սաստիկ իմ սրտին,
Ախ իմ նազելի, նախշուն նազելի,
Նեցուկը սրտիս, սիրուն նազելի:

Վառայ վառայ ես վառայ
Շրպղը կեանքիս մարայ
Ոչ մէկ բանի տէր չեղած
Արեւ օրս սեւ արայ:

Այն օրուանից ընկած յետագ,
Արտասովում եմ կաթ-կաթ, կաթ-կաթ,
Ինչպէս մի մուրացիկ աղքատ
Ախ իմ նազելի և այլն:

Վառայ վառայ ես և այլն...

Այն օրուանից յետագ ընկած
Զեռքերս խաչ, վիզս ծած,
Մէկ օր ծարաւ, մէկ օր քաղցած
Ախ իմ նազելի և այլն....

Վառայ վառայ ես և այլն....

Աղունակ ես, գոյնդ նախշուն,
Պարանոցդ անդից սիրուն,
Մանգալդ լաւ համեստագոյն,
Ախ իմ նազելի և այլն....

Վառայ վառայ և այլն....

Դուն համ վարդ ես, համ մանուշակ,
Համ արեգակ, համ լուսնեակ,
Համ ծիածան, համ արուսեակ
Ախ իմ նազելի և այլն....

Վառայ վառայ և այլն....

Բացի Յովսէփ, բացի Արայ,
Մարդկանց մէջ էլ այնպէս ո՞վ կայ,
Որ քեզ կոչեմ նրանց արքայ,
Ախ իմ նազելի և այլն....

Վառայ վառայ և այլն....

60. Հ Ո Վ Ի Կ.

Ո՛ւր ես գնում արագ, արագ,
Առաւօտեան քաղցր հովիկ,
Ում պատահէք, բարև կուտար,
Թէ կերթաք դէպ իմ հայրենիք:

Այնտեղ ունիմ մի հատ եղբայր,
Ինձ համար գոյնաթափ, նիհար,
Որի ուրից շատ սար ու քար,
Արտասովում է մեղմիկ, մեղմիկ:

Կայ գունաթափ երկու քրոջ,
Ինձ համար տկար են չեն ողջ,
Գրում են գողգոջուն, գողգոջ
Երբ պիտի գաս եղբայր քաղցրիկ:

Ունեմ մէկ հայրիկ ծերունի,
Որ միշտ մէջ է դառնութիւնի,
Չորս տարի է, չորս անկիւնի
Ակնարկում է արիւր մանկիկ:

Աղ մահւայ կասեն մեր թաղին
Մօտ մեկիքանց շաք օթախին,
Շատ տարի է, որ իմ հաղին
Կարօտ են չեն լսում հովիկ:

Թէ կ'տեսնես, այսպէս կասես,
Մէկ տղայ տեսի սև երես,
Անունը Թառսիւնի Ներսէս
Նուազում էր թառ ճախճախիկ:

61. ՍՈՄԱՅԻ ՂԱԼԱՆԴԱՐԻ.

Արշալոյսի մաքուր հողմ, արի մօտիկ մէկ գիրս տամ, տար,
Ջրերով, արիւններով չրջապատուած այտերս տամ, տար,
Հիւսիսի ամպերով ծեծուած մաշուած պատկերս տամ, տար
Իրա ջինջ գոյնիցը զատուած, սևորակ ունքերս տամ, տար,
Նազելի Հայկանուշիս երբ կ'տեսնես, աչքերս տամ, տար
Իրա սիրած, ընդունած, համակրած հերքերս տամ, տար:

Հովիկ ջան, երբ կ'տեսնես Նորան, կնեքկայանաս հաստատ
Կասես, կը հասկացնես այս քանի հատ խօսքերը ազատ,
Պատասխան կուզէ սիրերանը սիրեկանիցը շատ շատ,
Որովհետև երբ մի լուր չի լսում, արտասովում է կաթ կաթ
Նազելի Հայկանոյշ և այլն....

Հովիկ ջան, մէկ ասա անգութ սիրածդ սիրածիդ պէս չէ,
Ինչ լսար իզուր ես լսած լսածդ լսածիդ պէս չէ,
Երեղ չէ տգեղ է գրվում, այժմ քու գովածիդ պէս չէ,
Թառսիւնիդ հալուել է մաշուել ասածդ ասածիդ պէս չէ,
Նազելի Հայկանոյշ և այլն:

62. Ղ Ա Զ Բ Է Կ.

Մնաս բարեաւ բարձրահամբաւ
Կովկասեան վեհ լեռներ,
Հեռանում եմ քեզից անբաւ
Կաշկանդուած իմ ձեռքի:

Քեզ յայտնի է ինչու համար
Ինչ պատճառով սրտաբէկ,

Այդքանը թող քու սար ու քար
Պատմէ ինձ տեղ քեզ մէկ մէկ:

Այն ժամանակ կը հասկանաս
Թէ ինչպէս քո սառ քամին,
Կապտացրեց դէմքս մաս մաս
Թողեց ինձի լալագին:

Ես գնում եմ պիտ հեռանամ
Աչքերս թաց վշտագին,
Բայց մի կարծիր կը մոռանամ
Քո անպիտան գէշ քամին:

Թողիր այժմ մի հատ սայլակ,
Երեք նժոյգ ձի լծած,
Հեռացնէ ինձ միայնակ
Ոտ ու ձեռքս կապկապած:

Թէ չմեռայ, մ'նացի ողջ
Դարձայ դէպի քեզ կրկին,
Շաղ կուտամ քար քօլդ ամբողջ
Կանխեմ քո Ղազբէկին:

Որը ամբողջ ինն ամիս
Ճերմակ սաւանով ծածկուած,
Ձի յիշում իր հայրիկ Մասիս
Իրան որդի համարած:

Կարծելով թէ նա իրան պէս
Երբէք չի ունեցել դալալ,
Մէկը այսպէս միւսը այնպէս
Տակով արեւ անսխալ:

Ղազբէկ կայարանում,

63. ԼՈՒՍՆԵԱԿ ԳԻՋԵՐ.

Ղուանեակ գիշեր քուն չունիմ,
Պարզիս դարման, ցաւիս դեղ ու ճար չունիմ:

Քեզի համար թանկ օրերս սև արած,
Ձեր պատի տակ տատանվում եմ վիզ ծռած:

Արտասուում եմ երկու կողմս նայելով
Մերթ սգալով, մերթ լալով մերթ ողբալով:

Ձեմ հաւատում իմ աչքերին, ունքերին
Երբ չեմ տեսնում քո գեղեցիկ պատկերին:

Արի, արի, մատաղ չալչալ աչքերիդ,
Երկնային գրիչով բաշած ունքերիդ:

Որոնց համար այս ու այն կուման ընկած,
Տատանվում եմ, իբր մի բան կորցրած:

Խնդբում եմ աստուծոյ նախախնամութեան
Արդասիրը ինձ քեզ համար յաւիտեան:

Որ քեզ ինձ հետ ինձի քեզ հետ ըստ ինքեան
Արժանացնէ յաւիտենական միութեան:

Մինչի գնալ այս աշխարհից հեռանալ
Օրեր տայ մեզ մէկ տեղ մ'նալ ծերանալ:

Արի, արի, մատաղ երկար հասակիդ,
Ձինարու պէս լիախառար հասակիդ:

Որի շուքը սիրող քո հայ տղան
Այդքանով անմահ պիտի կարծէ իրան:

64. ԲԵՉ ՄՕՏ ԱՅՍ Է ՊԵՏՔ:

Հարուստ եմ ես եմ, աղքատ եմ ես եմ,
ձաշակով շինուած մի խրճիթի տէր,
Ոչ թէ քեզ նման մեծ մեծ կը խօսիմ,
Ունայն խօսքերով իբրև ազգասէր:

Այն էլ, այն թերութեան շրջանում,
Բժամիտների, յիմար ատեանում,
Որոնց մօտ գինի շանբան է հաղում
Մեծ փոքր գաւաթ իրար չխկչխկում:

Այդ միջոցին ես միտ բերում ազգիդ,
Կոչուելով նորա հարազատ որդին,
Մօտ արի, պաշնմ հաստ ու լայն ճակտիդ
Որ այդքան անհուն խելք ունի տակին:

Գոռում գոշումիցդ սարեր կը սարսն
Իբր մի սոսկ մարդ և իբր հերոս,
Բայց վախենում եմ մարդիկ շատ ասեն
Ազգասէր չինել ամեն մի բազոս:

65. Մ Ա Ր Դ.

Ապրիլ ինչպէս մարդ, կեցիլ ինչպէս մարդ,
Ուսած մարդկային ամենայն մի պարտք
Քո ձեռքով չինծու մի լարիլ թակարդ
Որսիլ շատերին առանց խղճմտանք:

Մարդ ես, մարդի դատողութիւն ունեցիր,
Մարդի նման վարուողութիւն ունեցիր,
Տեղն ընկնելու համեղութիւն ունեցիր,
Հաստ շլինքիդ չի բարձուի զրպարտանք:

Չարն ու բարին իրարուց բաժանեցէր,
Չարին թողած, բարին գաւանեցէր,
Թառսիւնու էլ մէկ փոքր հաւանեցէր.
Եթէ ունէր խելք ու մտքի հրահանգ:

66. Բ Ժ Ի Ղ Կ.

Մի նայիր վէրքերիս, դարման խօստանար,
Իմ վերքերս չունի դարման, չունի դեղ,
Այդ մասին գործ դրուած է ամեն հնար,
Բժիշկ որոնելով այս տեղ ու այն տեղ:

Պատահողից հարցրիլ եմ չեմ ատել
Չեմ անպէտք անուանել և չեմ նախատել
Օղաչել եմ խնդրել եմ պաղատել
Արտառունքս թափելով ինչպէս հեղեղ:

Թառսիւնիս եկողին չեմ հանդիմանել
Տգէտ խաւարամիտ անպէտք անուանել,
Մօտ եկողին գովել եմ գովաբանել
Խօսքը ընդունելով իբր հալած եղ:

67. ԶԻՔԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱՐ.

Ինչ ասեմ, սիրտս հովանայ, մեր քաղաքի բերդերին,
 Մօռացութեան տալու համար վրացախօս հայերին.
 Որոնք թէ այսպէս, թէ այնպէս, սփռուած աստին անդին
 Դուխաններն են շատացնում, գէշ թիւը պանդոկներին:

Ձեն մտրակիլ, չեն հարուածել, և չեն շանթեր արձակել,
 Ձեն դատադարտել համարձակ այդ լիրբ սրիկաներին
 Մի կողմը աստ, միւսը անդ, մի կողմը Իրան Թուրան
 Կարծես դրանց է վիճակուած հասարակաց տուներին:

Ընկերացած արդանիրտի պատմական կինտօների.
 Չորնի կրասնի թուղթ հաղող, անպիտան ջիբգիրներին,
 Որոնք հայրով, մայրով, քոյրով բարեկամ, աղգակիանով
 Դաւաճան են հանդիսանում բարոյական մտքերին:

Կրթութիւնը գէշ կարծելով, արհեստըն աւելի վատ
 Պահում պաշտում են սուրբ շինած զինով լի տակառներին,
 Հէնց այս մասին խեղճ Թառսիւնիս չարեշար տանջուելով
 Տէր է եղել անսպեղան աշխարհի շատ ցաւերին:

Վ. լ ա դ ի կ ա վ կ ա գ.

68. Ճ Ի 2.

Դարձեալ մի ճիշ դարձեալ մի ճիշ
 Ոհ, ոհ լինչպէս սիրտ գրաւիշ,
 Կարծես մի բան հրապուրիշ:

Այս դարձեալ, դարձեալ
 Ոհ դարձեալ դարձեալ:

Տեսէք ոնց է ինձ շլացնում
 Սև սև օրերի տիրացնում,
 Ցնորմունք բան ողջ եմ զգում:
 Այս դարձեալ, դարձեալ և այլն....

Կարծես մի հրեղէն կրակ
 Ընկած լինի սիրտս տաք տաք,
 Այրում լինի արագ արագ:
 Այս դարձեալ դարձեալ և այլն...

Որտեղից հնչեց յետ դառաւ
 Սիրտս բռնեց հանեց տարաւ,
 Ոչ հիւսիս ասեց ոչ հարաւ:
 Այս դարձեալ, դարձեալ և այլն....

Երեւ, հոգիս մի վախիր
 Ինձ եւ հետդ տար, եւ կախիր,
 Հրեշտակ լինիս չեմ վախիր:
 Այս դարձեալ դարձեալ և այլն....

Ա ր մ ա վ ի ր.

69. Մ Ի Վ Ա Ր Կ Ե Ա Ն.

Միայն մի օր, և մի վարկեան,
 Մի ակնթարթի չափ մի բան,
 Այցելէ դէպ մեր օթեան:
 Դէհ սուլեր, սուլեր, սուլեր:

Մօտ արի մարմալագ կուտամ
 Շաքար կուտամ, նաբաթ կուտամ,
 Ոսկի կուտամ, արծաթ կուտամ:
 Դէհ սուլեր և այլն...

Սիրելի եմ սիրուն աշքերդ
Լուսնի պէս կեռ կեռ ունքերդ,
Վարդի պէս կարմիր պատկերդ:
Դէ՛հ սուլեր և այլն...

Վայր իջիր այդ պատուհանից,
Մի քաշուիր ընկեր, հարևանից,
Հոգիս մի հանիր ինձանից:
Դէ՛հ սուլեր և այլն....

Թողիր այդ վարմունքը բռի,
Վայելենք աշխարհում ձրի,
Առանց պատժի ընկնենք գերի:
Դէ՛հ սուլեր և այլն...

Շատերը թող ինձ, քեզ ատեն
Ասեն իրար անհամեմատ են,
Մերթ վատ ասեն, մերթ նախատեն:
Դէ՛հ սուլեր և այլն...

Ուր գնաս ինձ էլ տար հետդ
Մտնեմ ու ելնեմ խտլաբդ,
Երկար չի քաշի կարօտդ:
Դէ՛հ սուլեր և այլն....

Յետ այնու թող մեզի աշխարհ
Որոնէ ընկած քարէ քար,
Ինչ փոյթ նորանց զեն զինարար:
Դէ՛հ սուլեր և այլն....



70. Ա Ր Ե Գ Ա Կ.

Հայաստանի քաջ եռաց
Փայլուն լուսին, արեգակ,
Ինչո՞ւ այդպէս զայրացած
Սահում էր ամպերի տակ:

Մի՞թէ մերսնք չունեն բաժ
Այդ գէղ ճառաղայթներից,
Որ տեսնեն ամպերի ժաժ
Հայ լեռանց զաղաթներից:

Մի՞թէ չուզեն անմաքառ
Տեսնել քեզի սերճափառ,
Ցոլմունքներով վառէվառ
Պար բռնած երջանկափառ:

Վառուած հայրենեաց սիրով
Երջանկառիթ երգերով,
Իրար ընդ արկանելով,
Մացառախիտ հերքերով:

Մինչ երբ այսպէս ջերմ արև
Շատի նման տարից տար,
Մեզ չունենանք հարատև
Անյարգ հայի հողին ի վայր:

Հայաստանի քաջեռաց
Փայլուն լուսին արեգակ,
Էլ մի սահէք զայրացած
Կապտագոյն ամպերի տակ:

71. Ն ՈՒ Է Ր.

Սարգիս Պետրոսեանցին Գորիսի բանտում

Լաւ է տանջուելը Գորիսի բանտում,
Քան թէ լաւ ապրելը Խնձորիսը գիւղում,
Սյապէս եմ, տեսնումես, այսպէս նկատում,
Վայելչութիւն չը տեսնելով այդ հողում:

Իրանք էլ չը գիտեն, թէ ինչ կտածեն
Ինչ բանի, ինչ գործի վերայ կմտածեն,
Բան չզգալով գիտունների ասածէն
Ոչ խելքում կան, ոչ շնորքում, ոչ փողում:

Անմիութեան դառը լճակի միջում
Խորասուզուած, տակն ու վերայ են անում,
Ոչ պանդուխտ Թառսունու կարիք են զգում,
Ոչ թշուառ Սարգիսի կեանքի սքօղում:

Պարոն Սարգիս Պետրոսեանցը Խ. գիւղականներից մատնուած ան-
տեղի բանի ամիսներ բանտաբերուած լինելու պատճառաւ հեռուից
այս քանով նպատակս նորան պատուելն է եղած.

Ներսէս Սազանդարեանց.

72. ՄԻ ՉԱՐՔ ՏՐՏՄՈՒԹԻՒՆ.

Մէկ բունն հող է ինձ այժմ հարկաւոր,
Եւ մի հատ ջերմ համբոյր իմ որդուց այսօր,
Որի համար օրեր, ժամեր սև արած,
Պահել եմ, մեծացրել արտասուածոր:

Այսօր ինքը ինձի, իսկ ինձի իրան
Սռանց տեսնել բաժանվում եմ յաւիտեան,
Կնքում եմ իմ հողին իմ մահկանացուն
Կարօտ որդիական քաղցր տեսութեան:

Որը մտած պանդխտութեան մի անկիւն
Ընդունում է ամենայն մի դառնութիւն,
Խարուած նոցա թունալից բաժակներէն
Կրում է ամեն մի ցաւագարութիւն:

Պանդխտութեան քաղցր ճաշակէն խաբուած
Օր է վատնում, ամեն բան թոյն չի համարած,
Զգալով ոչ շահ է դարդի դարման
Եւ ոչ էլ սպեղան վերքերին կրած:

Արի որդեակ, արի, տուր ինձ մի բուն հող,
Բացի այդ, էլ ինչ կայ ինձ մխիթարող,
Ընդունիր ծնողիդ վերջին համբոյրը,
Եւ վերջին աղօթքը սրտիդ մեծարող:

Սիրիր քու հայրենիք, քու ծննդավայր,
Որի մէջ թաղվում է բեզ կարօտ մի մայր,
Բացի տուն, բացի տեղ, բացի անդաստան,
Պարգևում է քեզ իր բաժին լոյս աշխարհ:

Մենք մահինն ենք, մահը մերը, որդի ջան,
Ամեն բան թող, եկ մօրդ այցելութեան,
Մինչ հասնելդ մտած սև սառ գերեզման
Կընդունէ մի բուռ հողդ իր վերան:

Որով ես ինձ երջանիկ ծնողների
Նման մեռած մայր կըկարծեմ, ով որդի,
Որոնք անվիշտ, անվերք, անցաւ և անդարդ,
Հանգիստ պարկած աղօթում են միշտ բարի:

Կ'հանգչիմ հողի տակ, սառ գերեզմանում,
Հանգիստ պարկած ծնողների շրջանում,
Որոնք ինձ պէս պանդուխտ որդու նկատմամբ,
Ձեն տանջուել, չեն շարշարուել ախարհում:

Արի որդեակ, արի ամեն բան թողած,
Օտարութեան ամեն շահ թոյն համարած,
Որի առթիւ զոհեցիր խեղճ մայրիկիդ,
Մաշուած տանջուած, մէկ բանի տէր չեղած:

Կարօտիր նաղելի թողած քոյրերիդ,
Կարօտիր կենարար սրբավայրերիդ,
Կարօտիր երկրիդ, կարօտիր հողիդ,
Կարօտիր ամայի դառիվայրերիդ:

Կարօտիր միայնակ թողած եղբօրդ,
Հալուած, մաշուած, կմախք դարցած եղբօրդ,
Կարօտիր երկրիդ, կարօտիր տանդ
Կարօտիր ձեռքերը խաշած կղբօրդ:

Ահա, այս է քեզի իմ վերջին կտակ,
Որ գրում եմ, քեզ կարծելով որդեակ,

Դարձիր դէպ ծնողքդ, սիրած մայրիկդ,
Որին պարկած պիտի տեսնես հօգի տակ:
Բ ա ս տ օ վ ու մ.

73. ԲԱԶՄԵՐԱՆՑ ՄՕՐՍ ԱՆՄՈՒՆԱԼԻ ՅԻԶՏԱԿԻՆ

Բազմավաստակ, բազմաշարշար մայր անդին,
Ինձի կարօտ, խոնարհուար անգութ մահին
Ահա քեզի մի բուռ հողի փոխարէն,
Արտասուներիս կաթիլները բու չիրմին:

Ել ուրիշ ինչո՞վ քեզ պատուեմ անդին մայր
Ինձ համար քաշած տանջանքներիդ համար
Որի առթիւ հեռու երկրներ թողած
Քեզ մօտ եկի, իբր որդի քեզ խոնարհ:

Թէև ինձի, որպէս բանտ մութ ու խաւար,
Մի տեղ լինի ամեն ինչը ինձ օտար,
Փոյթ չէ, հողիս, պիտ համբուրեմ, պիտ գրկեմ,
Գերեզմանդ ինձ համար է սրբավայր:

Ել ինչ ասեմ, լսացնեմ, մայրիկ ջան,
Բազմավաստակ, բազմաշարշար անմահ,
Մինչև ցմահ քու անմահ յիշատակին
Բացի արցունք բան չունեմ նուիրական:

Որի կաթիլները մէկ մէկ քո արժան
Պիտ ընդունէ իբր մի նոր դոյն իրան,
Իբր երախտագէտ պանդուխտ պատանու
Ուղղեալ դափնեայ սրակ պատուական:

Ահա, այս է քեզ համար իմ սրտագին
Պարզեները, վաղաթառամ մայր անգին,
Ինչ կայ թողնեմ յաւերժ անջինջ յիշատակ,
Որ գրաւեմ քու մայրական աղօթքին:

Վ ա ր օ ն ե ժ

74. ՎԱՂԱԹԱՌԱՄ ԵՂԲՕՐՍ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՅԻՉԱՏԱԿԵ
Ի Մ Ո Ղ Բ Ը.

Եղբայր իմ, եղբայր, եղբայր թանկագին,
Դուն էլ խոնարհուար, չար բազդի կամքին,
Վեր կաց տեղիցդ, բացիր դուռ շիրմի,
Դուրս եկ յոյս աշխարհ, երես կրկին:

Տուր ձեռքդ ձեռքիս, մէջքդ իմ մէջքին,
Իմացած բանը գործը աշխարհին,
Առողջ ու թերով գործադիր եղիր,
Իմ քու մէջ թագնուած բնութեան օրէնքին:

Որոնց միայնակ երբէք չէ գիւրին
Գործ դնել տաճկի քարից պինդ ճակտին,
Որը մինչ օրս թուրից ու մրից
Նշան չէ կրած կնճռոտ դէմքին:

Եղբայր, իմ եղբայր, եղբայր թանկագին,
Ինձի միայնակ մի թող լալագին,
Գաղտնապահ, խաւար, չիրմի հովանեւ,
Ինչ ես խոնարհուել չար բազդի կամքին:

Վերկաց տեղիցդ, ապրենք միասին,
Հեռացրած մեզնից դառնութեան փոշին,
Ջաբթ փշուր արած օտարի շղթան,
Մեր ձեռքով ճարած մեր սպեղանին:

Գիտեմ, սրտիդ մէջ մեծ մեծ վաղտնիք կան,
Մինչ օրս կարօտ բացատրութեան,
Որոնք մի հմուտ գննողի կարօտ
Պիտի քեզ տանջեն մինչի յաւիտեան:

Վեր կաց տեղիցդ, եղբայր պատուական,
Առանց պատերազմ մահ մեզ չէ արժան,
Փէկ վաղահաս մահ անդթաբար
Գլորեց քեզի սև սառ զերեզման:
Խ ա ր կ ս վ

75 Տ Ա Ն Ա Գ Ա Յ Լ.

Քանի գունդ հսկայ դօրք հետո առած
Քանի էլ յետաս որպէս թիկնապահ,
Կարող եմ արգիօք ես իմ հայրենեաց
Քշնամուն յաղթել տալ նոցա մեծ մահ:

Որին պաշտպան է երկրի տիպար
Մեր եղբայրները անխոճմտաբար,
Որոնց յոյս հաւատ և սէր ընծայած
Վարվում են մեզ հետ աւելի վատթար:

Քանզի ունին շահ և ունին օգուտ
Որպէս տանազայլ և հանրածանօթ,

Որպէս Մեհրութան, Վասակ և Փառնակ
Մեռած ունէին սրտերի մէջ գութ:

Մի կողմը Սիւնիք, միւս կողմը Ղափան
Մի կողմը Կեկան դաշտը պատմական,
Որոնք տեսած են քանի քանի դար
Իրանց աչքերով հեղեղներ արեան:

Խառնուած Որոտեան և այլ գետերի
Անթիւ անհամար պարզ աղբիւրների,
Մինչ Սրաքս մինչ Կուր հեղեղի նման
Ծփծփուելով գիծ ալիքների:

Կարող եմ արգեօք երկրի խորքան
Հալածել նորանց անել ցիրուցան,
Որոնք Վասակից օրինակ առած
Անաստուածութեամբ գործում են շատ բան:

Գործում են շատ բան ոչ անգիտութեամբ
Այլ թէ գիտութեամբ անաստուածութեամբ,
Պաշտպան Վասակի նիզակիցների
Անդուսպ, սսնձարցակ ապրող ղեղխութեամբ:

76. Վ Ա Ր Թ Ո Ւ Հ Ի.

Բարակամէջր լայնաթիկունք վարժունհի
Միով բանիւ մաքրունհի ես մաքրունհի,
Հիւրընկալէ, նոր եմ եկած ձեր բազար
Մենակ մնալ բեզ էլ լաւ չէ գեղունակ:

Տեսնելուս պէս ներքուստ սիրեցի բեզի
Թէև անյար բարև չտուիր մեզի,
Ուրեմն տար, ուր որ կերթաս աննման
Յետագ կուգամ թէև մինչև Հնդկաստան:

Այնտեղ կապրեմ քեզ հետ խաղաղ երջանիկ
Ունենալով քեզ նման չնաչխարհիկ,
Փափուկ, փափուկ սանուհիների շրջանում
Թողիր նստեմ, կարծեն դաս եմ ստանում:

Որքան անյարմար լինեմ մի հարցրու
Ինձ էլ նորանց ցուցակի մէջ մտցրու,
Թէ քսան է, թող լինի քսան և մէկ
Տուած դասդ անգիր կանեմ ես մէկ մէկ:

Զ ա ք ա ք ա յ ա յ

77. Կ Ե Ր Ո Ւ Խ Ո Ւ Մ.

Ինչ օր հարկաւոր է ինձի կեր ու խում
Ուրախութիւն, զուարճութիւն, պար խնդում,
Այն օր ինձ համար սովորականից
Տրտում է անցնում հեռանում կորչում:

Ստանալ մի գոյն դիմադրական
Սրտով եմ ուզում շատերի նման,
Այդ ինձ չէ ժպտում, չեմ գիտում ինչից
Թէև ես մտած մի զուարճարան:

Ամեն մի գոռում, ամեն մի գոչում
Ամեն տօն օրի հուզում ու շարժում,

Իբար զօրութեամբ կառկառած ձեռքեր
Տրտմութեանս դէմ չունեն մի մրցում:

Թվում է ինձ խորթ ամենայն մի բան
Թէն շահաւէտ մխիթարական,
Դիրք եմ ստանում լի ատելութեամբ
Յորդոր զգալով իմ սրտի խորքան:

Խորթ է նոյնպէս ինձ աշխարհի բարիք
Աշխարհի ամեն բարի արհաւիրք,
Ձի շարժում իմ մէջ կարիք խնդութեան
Թէկուզ հանգիպէ մեծ աւագ զատիկ:

Այս է եղել միշտ տիրօջ սրտագին,
Ինձ համար թողած, խնդութեան բաժին,
Քանզի միշտ այն եմ տեսնում ու զգում
Միշտ լաց ու կոծով շահած իմ սրտին:

78. Հ Ո Ք Ի Ս.

Յոժար եմ կանխ ապտակող դէմքիս
Այդ էլ չեմ տեսնում, վա՛յ թշուառ գլխիս,
Եթէ շրջում եմ գունաթափ դեմքս
Վայ ինձ դէպի քեզ մոլոր է սիրտս:

Թէն սևորակ ջինջ աչքերովս
Վշտացած սրտով սև ունքերովս,
Նայում եմ ուղիղ դէպի ձեր աղբար
Մութ է թվում զիս երկիր ու աշխարհ:

Թէ սիրաւառեալ երբեմն շրջում
Դէպի ձեր տունը քեզի չեմ տեսնում.
Մահ եմ պահանջում ով իմ գեղունակ
Ով իմ արարիող փայլուն արուսեակ:

Թէ իմ դողդոջուն ձեռքովս դրիչ
Աննում եմ գրում անուանվում երգիչ,
Առանց քեզ ոչինչ, կեանքս է խաւար,
Օրս, արևո աւելի վատթար:

Բայց երբ տեսնում եմ արձակ համարձակ
Հոգէառ իբր մի հատ հրեշտակ,
Աշխարհի միջում մի հատ երջանիկ
Ինձ եմ համարում ով իմ գեղեցիկ:

79. Ն Ե Ր Ս Ո Ի Մ.

Նոր Նախիջևանցիք նորեկ եղբայրներին դուրսեցի՝ իրանց ներսեցի
անուանելով, շատ դառն են վերաբերվում դէպի նորեկը. այդ բանի
ազաւորութեան տակ լինելով աւելորդ չ'համարեցի այսքանը գրել՝

Ներսում ծնուած ներսում մեծցած հայ տղայ
Մէկ բարի առ դուրսէն եկած եղբորից,
Անունդ հոս կտրիճ պահելն անմեղ է
Արի մօտիկ ծանօթանանք մանր նորից:

Տե՛ղ ինչ տեսակ աղէկ բանէր քեզ համար
Պիտի դուրցեմ դուրսեն քերած, ո՞վ յիմար,
Վուրս էլ լինենք ձեզ հետ համահաւասար
Եղբայրներ եներ ծնուած հայ հօրից մօրից:

Ուրեմն վատ մի ասիր դուրսէն եկած
Հայ եղբօրդ, որից դէռ չես ազատուած,
Որի հետ միացած, ձեռք ձեռքի տուած
Առանց մի դոյլ, ջուր կ'հանէք խոր հորից:

Եկ, քեզի լաւ, իսկ նրան վատ մի կարծիր
Քեզի հարուստ, նորան աղքատ մի կարծիր,
Թառսիւնուս էլ անհամեմատ մի կարծիր
Չարմացած քո թաւշեայ կարճ նեղ շորից:

Ն ո Ր Ն ա խ ի ջ ե ո ս ն .

80. Մ Ե Ծ Ա Ղ Ի Տ Ա Ն Ը .

Սիգարը ձեռքին, մուշտակը հագին
Շլապան գլխին, մէկ չղթայ վզին,
Մէկ մարդ պատահեց մեծ աղի տանը
Մի հատ խօսք ասեց կպաւ իմ սրտին:

Ճշմարիտն ասած այդ խօսքի մասին
Նեղացաւ սիրտս և հոգիս ուժգին,
Ապերախտ մարդիկ ամայի քաղաք,
Իսկոյն կոչեցի Նոր Նախիջևանին:

Պատճառը, նորա գէշ խօսքի միջին
Խիստ շոշափովում էր մի պատիւ անգին,
Որին պատուեի ենք և պիտի պատուենք
Ի պատիւ թողած անմահ գործերին:

Երախտամոռ պարոնը իւր խօսքերով շոշափում էր մեր ամենիցը
յարգում ու. Պատկանեան անմահ բանաստեղծի պատիւը. այս
քանուկս նպատակս նորա աչքը հանելն է եղած:

Թ ա ո ս ի ո ս ի

81. Է Լ Ի Ն Ա Խ Ի Զ Ի Ի Ա Ն .

Էրեկ Նախիջևան, մէկ հարուստի տան
Աղջիկ կնշնեն եկան ինձ տարան,
Աղէկ չալեցի նուժա երգեցի
Հաստ վիզ հիւրերը բան չ'հասկացան:

Որոնց շրջանում կար մի հատ Տէրտէր
Ոչ հայ կ'սիրէր և ոչ հայ երգեր,
Թէն ինքը հայ, հայի քահանայ
Խօսքս հոս մնայ, կարգաւ չ'գիտէր:

Այս քանի առթիւ մեկէլ հիւրերին
Ինչու գէշ կսեմ թողած Տէրտէրին,
Հէնց այդ մասին էլ ալայի մեղքը
Գէնա պիտ կապեմ նոցա շինքին:

Ան այսպէս մեղքեր տանելում լաւ է
Ոչ կ'նեղանայ ոչ էլ կ'ցաւէ,
Ալայի մեղքը հաստ շինքին առած
Մէկին կ'փրկէ միւսին կ'քաւէ:

82. Խ Ն Դ Ի Ր .

Ա. քաղաքի կօնսիստորիայում և Սուրբ Էջմիածնայ Սինօղում
մի հատ արդար խնդիրը մինչ օրս անհետևանք մնացած լինելու
առթիւ՝ իմ տպաւորութիւնը.

Տէրտէր ևմ Տէրտէր
Պրծաւ ու գնաց.

Միթէ չեմ կարող ես էլ քեզ նման
 Շորերս փոխեմ հագնեմ փարաջան,
 Անունս փոխեմ դնեմ Տէր Գասպար
 Ամենայն մի բան գործեմ անկատար,
 Ժամ գնալ գալը իբր մի արհեստ
 Ինչ հօրս ցաւն է վարուեմ համեստ,
 Որով կունենամ քաջ բարի անուն
 Քանի թիւրիմաց հարուստ մեծատուն
 Որոնց շրջանից հայրական գլծով,
 Բաժինս կըգայ հինգով ու տասնով
 Աղքատից տասը՝ հարուստից քսան
 Ժամոցը մեղեւում կարգ է մշտական,
 Մեռել թաղելիս տուն փաբատելիս,
 Կարծեալ վատ չեն, լաւ փող են տալիս,
 Աւել խօսելու էլ ինչ կարիք կայ
 Կաթ կաթ բաժինս կուղայ ու կուգայ,
 Որի փոխարէն մի հատ սրտաշարժ
 Պահպանիչ կոեմ անսովոր անվարժ:
 Խօսելը մեկսկ է ընդէմ օրինաց
 Տէրտէրեմ Տէրտէր պրծաւ ու գնաց:
 Գլխաւոր բանը իմ վսեմ կոչման
 Զեռք բերելն է երկար փարաջան,
 Գորան էլ կ'օգնէ ըստ սովորական
 Իմ ծխականի համախօսական,
 Ուռած փրուած մեծ քինթո թամբած
 Կրփառարանեմ արանց ու կանանց,
 Գիւրքը առաջիս մաշտոցը ձեռքիս
 Զահել տիրացուն բուրվառով մօտիս,
 Մի հատ էլ տգեղ քաշալ լուսարար,
 Որին պէտք չէ գիտութիւն հանճար,

Բաւ է «եւ ես» ասել իմանայ,
 Յուրտի ու տաքի հետս դիմանայ,
 Բացի այսքանը էլ ինչ կայ դժուար
 Որ ինձ արգելեն կրելու շուրջառ,
 Կլորակ գդակ պարսիկի նման,
 Մի արծաթապատ երկար գաւազան:
 Խօսելը մեղք է ընդէմ օրինաց
 Տէրտէր եմ եւ այլն....

Ի՞նչ ծանր բան է սաղմոս ժամագիր
 Երեք օրուան մէջ չ'կարգամ անգիր,
 Որի մեծ մասը վաղուց եմ ուսած
 Տէր երեխայական հլու զգացմանց:
 Ի՞նչ ծանր բան է ասացէք խնդրեմ
 Եօթը խորհուրդը միայն թէ ծռեմ,
 Մանաւանդ գործը բարւոյ ու շարի
 Քննել զննելը ի մէջ տաճարի,
 Տաճարից զատուած աչք ամենեցուն
 Ինչ տեսնի կուղի, այն է հաստատուն,
 Օրը մի անգամ աղբար կոտրելը,
 Աղբարի համար քեթիկ ուտելը,
 Ինչ ամօթ բանա թող խալին ինձ ատեն
 Այդքանի համար ինձ քննադատեն,
 Գուցէ այսպէս է քրիստոնէական
 Մեզ վիճակուած գործը զանազան:
 Խօսելը մեղք է ընդէմ օրինաց
 Տէրտէր եմ եւ այլն....

Կնստեմ կարգին փառաւոր կերպով
 Բաւականացած քանի մեծ ծխով,
 Ինչիս է պէտքը աղքատ մախքատը
 Օգուտի քիչը վնասի շատը:

Աստուած չէն պահէ՝ չէն մեծատունը,
Տէրտէր շահելու կարգ ու կանոնը,
Որոնց սեղանը բաց է ինձ համար,
Որոնց ժամոցը առանձին սատար
Մեռած օրն էլ, իբր բարի հոտ,
Եղած չեղածը կ'ընդունի ինձ մօտ
Մէկ օր Նազարը մէկ օր Ղազարը
Յաջող կ'ընդունի միշտ իմ բազարը,
Որից օգնուած գնում գալիսա
Չաղ շիլափաւ տար տար հարիսայ,
Սկսած հացից, գինուց արաղից
Բաժինս կուգայ, մեռելից՝ սաղից:

Խօսելը մեղք է ընդէմ օրինաց

Տէրտէր եմ և այլն...

Տընումս նստած բաժինս կուգայ,
Չէ ասած բանը ինձ համար չկայ,
Ումին ապագիկ՝ ինձ համար նազդ է
Հայր այդ մասին կորած մի ազգ է,
Երբ Քրիստոսի կ'ընեն փոխանորդ
Մէկ կ'ընէ յետս շատերի խորհուրդ,
Համերաշխութեան միտք կը քարոզեն
Մէկից չազ կուռ կուռ, միւսից հաւ կուգեն,
Յանկարծ կըտեսնես քանի տարից յետ
Պարումեմ քանի հազարների հետ,
Տիրուհիս խանութ, խաթունի նման,
Նստած քանի հատ նաժիշտի շրջան,
Աղջիկս ուսած մայա տվաեայ
Իրար շաղաղած եւրոպ, ասիայ
Տղաս էլ իբր Տէրտէրի տղայ
Եա կը հայանայ եա կը թուրքանայ:

Խօսելը մեղք է ընդէմ օրինաց
և այլն...

Հասը չհասայ, չհասը հասայ
Թող այդպէս լինի, ինձ ինչ վնասայ,
Մէկին աւագան միւսին գերեզման
Կոխել հանելը դժուար չէ այնքան:
Կը թաղես կուգաս օրը մի Գասպար
Կըբախէ քեզի իր բաժին աշխարհ,
Կուտենը, կ'ըմենը, ողորմի կուտանը,
Վայելչութիւնը հէնց այսէ այս կեանք:
Հողից ստեղծուած ենք, հող պիտի դառնանք
Մէկէլ խօ նորից չենք գալու աշխարհը,
Ինչիս է պէտքը շատերի նման
Գալինեայ պսակ-թանկագին, արժան,
Մեռնելից ետը ինչ կուգեն անեն,
Թէկուզ դայրացած աղբի մէջ նէտեն,
Խաւարամիտ է խիջ մեր կոչման
Ով չի ճանաչում իւրալի թիբան:

Խօսելը մեղք է ընդէմ օրինաց

Տէրտէր եմ և այլն.....

Ուր տանի կերթամ իմ սիրած աղան
Թէկուզ վեր հանի ինձի կախաղան,
Սպիտակին ու, սևին սպիտակ,
Ասել տայ՝ կսեմ, չեմ կանգնիլ ներհակ,
Ո՞վ է կորցրել, ո՞վ է հարցնում
Ամեն մարդ իրա էջն է բշում,
Սյապէս եկել է, այսպէս էլ կերթայ
Ամեն մարդ իրա դարդը կուտենայ,
Սղաթ է մեզնում, մարդ բան կ'խօսի
Ինքը կ'խօսի՝ ինքը կը լսի:

Եթէ չեմ ծռուիլ այս ուղղութիւնից
Պարզեւ էլ կուգայ սուրբ Եջմիածնից,
Քաջալերութեամբ իմ ժողովուրդի
Կարգադրութեամբ սուրբ առաջնորդի,
Կրծքիս կ'կապեմ մի մեծ ոսկէ խաչ
Տակից կ'հագնեմ կարմիր ու կանանչ,
Կդառնամ մի հատ աւագ քահանայ
Կստանամ օգուտ, պատիւ, օվսանայ,
Օրէնքը այս է սկզբնական
Պարտ եմք կատարել մինչի օր մահուան,
Նուիրուած է պարզ ողջ արարածոց
Մէկն էլ այս է հոգեշահ գործոց,
Մինչ բերան լցուած մառանս գինով,
Մի կողմը նորով, միւս կողմը հինով,
Ես էլ երբեմն պարզուած մօտին
Կ'կոնծեմ անվախ բացած իմ գօտին,
Թող ինձ անուանեն երկրորդ Բագոս
Բագոսների մէջ մի հերետիկոս.
Որի օրէնքը մեծ է գերազանց
Տէրտէր եմ տէրտէր պրծաւ ու գնաց:

Արմաւիր.

83 «Հայկ նահապետը մինչ օրս սաղ է թէ մնում», ինձանից
հարցնող վերոյիշեալ քահանայի նկատմամբ.

Մարդ չեղած տեղը՝ գուն էլ մի մարդ ես
Իսկ եղած տեղը չեղածի նման,
Այո իմ հսկայ ու հուժկու բաղկիս
Այդ չէ նպաստում քո վսեմ կոչման:

Օր օր շատանում է խարդախութիւնդ,
Աւագակութիւնդ, սրիկայութիւնդ,
Որոնք վաղուց են պայմանաւորուած
Ապականելու կարգ ու կանոնդ:

Հեռու եմ պահում քո այն մեծ կոշում,
Որի անունը տալ չեմ ցանկանում,
Միայն յիշում եմ քո այն լրբութիւնը
Որոնք շնորհ հաղիւ են գործում:

Մարդ չէ մինչ անգամ այն արարածը
Այն մարդ ծնուածը, մարդ մեծացածը,
Որ ատէրտէր խօսքը դէպի քեզ ուղղած
Կսպասէ լսել քո քարոզածը:

Վատ է՝ վատից վատ, այն մարդի որդին,
Որը կղիմէ քո գէշ խորհուրդին,
Ուղղած սրտաշարժ «օրհնեայ ատէրը»
Կը փափագէ քո ճնկուտ դմբին:

Անիծուած լինի այն հայի տղան
Որ մասնակցէ քո կատակերգութեան,
(Սալամու ալիքիմ) ասած ժամանակ
Դիրք չի ըմբռնիլ դիմադրական:

84. ՊԱՐԶԱՆՈՍԻ ՎԻՃԱԿԸ

Մեր ազգի մէջ պարզախօսի վիճակը

Միշտ վատթար է թողել մեր այլանդակը,

Որը ուղղել չի կրցել իր կտակը

Այնէ եղել պարզախօսի ներհակը:

Մեր ազգի մէջ պարզախօսի վիճակը

Միշտ վատթար է թողել մեր այլանդակը:

Դարից դար է գլորուել այս ախտը

Վայր գցելով պարզախօսի պատիւը,

Բազմանալով այդպէսների գէշ թիւը

Պերճացել է նոցա փայլը փայլակը:

Մեր ազգի մէջ և այլն....

Յարգուել է մածունին թան ասողը

Քան թէ խկական ասող հակասողը,

Շատանալով այս տեսակ վնասողը

Մեծացել է յիմարների բանակը:

Մեր ազգի մէջ և այլն....

Քանի քանի այսպիսի մեծ մեծ բազոս

Չեն ճանաչել ոչ Ներսէս ոչ Հովնաթոս,

Անուանելով իրանց մեծ հրեաթիկոս

Ջնջել են պարզախօսի վիճակը:

Մեր ազգի մէջ և այլն....

Այսպէսները իրանց երկար ու բարակ

Գրուածներով միշտ եղել են ընդունակ,

Ընդունելով անուն ամեն մի տեսակ

Թանկ են ծախել իրանց անպէտք վաստակը:

Մեր ազգի մէջ և այլն....

Այսպէսներն են մեղանում լաւ համարուել

Շատերի հետ յարմարուել հաւասարուել:

Այս տեսակ է յարգուել համակրուել

Ամեն մի վատ գործերի հեղինակը:

Մեր ազգի մէջ և այլն....

Ինչպէս այժմ շատ գիւղում շատ անուն

Շատ քաղաքի յիմարների չըջանում,

Ով մի նամակ գրել է կարողանում

Ատում է վնասակար է Մշակը:

Մեր ազգի մէջ և այլն....

Ա. Բ. Ա. Ի. Բ.

85. Պ Ա Յ Կ Ե Ր .

Պատկերդ յայտնում է ինչ մարդ լինելդ

Քիթդ ու պռօզդ առանձին մի բան,

Բանի չի նման:

Աչքերդ, ունքերդ, կնճռոտ գէմքդ

Հաստատում է քո տիպը յիմարութեան:

Թիւրիմացութեան:

Ասածներիս երկիր աշխարհ է վկայ

Սուտ չեմ ասում բանդի դատ դատաստան կայ,

Մի կողմը Եւրոպայ, միւս կողմը Ասիայ

Տեսած չկամ քեզ նման մի անպիտան

Անասուն հայկան:

Կանգնիր հայելու գէմ նայիր աչք ունքիդ

Հազար մի ախտերով կերուած չըթունքիդ:

Հպարտացիր նայեաժ օգտիդ բերմունքիդ
Եթէ ունիս չոր մէկունի չափ մի բան
Աշխարհիս վերան:

Սաստիկ ամբապնդած, սաստիկ բերքացած
Ատամներիդ մի փութ կեղտ կայ նստած,
Կարծես Ադամից ու Նոյից մնացած
Նմուշ լինի աշխարհի կեկտոտութեան,
Գարշահոտութեան:

Յարմար գ'տայ այս քանը քեզ ասելու
Խրատելու ոչ թէ քեզ վնասելու,
Թառսիւնուս ասածը թէ չես խելու
Էշ ես, էշ էլ կըմնաս մինչի օր մահուան
Եւ մինչ գերեզման:

86. Ը Ն Կ Ե Ր.

Ափսոս իմ երեսուն և քառասուն օր
Որ ես քեզ հետ մթնացրի այս տարի,
Որոնց մասին խելքի եկած նոր է նոր
Շատ ցաւում եմ որ վատնած եմ ոչ բարի:

Որովհետեւ կեանքիս միջում առաջին
Անգամն է պատահում եմ քեզ պէսին,
Տանջելով իմ հոգին և իմ թարմ սրտին
Կրում եմ վերքերը ամբողջ աշխարհի:

Օրերս ես դիտմամբ վատնեցի քեզ հետ
Մի օր վնաս քաշելով մի օր աղէտ,

Մի օր վէրք, մի օր վիշտ, մի օր սուր մի նետ,
Մի օր նեղութիւնը քեզ պէս յիմարի:

Թառսիւնիս ձեռք բերած նոր մի եղանակ
Շահում եմ իմ սրտին այս կերպ այս տեսակ,
Անուանելով քեզ երկրորդ մի Վասակ
Հրէշ Ձանգեղուրի մի հատ դանարի:

87. Փ Ո Ղ.

Դիւի էլ ինձ ասում են թէ ունի շատ փող
Շատ տներ, շատ գիւղեր ու շատ շէն աւան,
Բայց ես այդ քանին իբր հակասող
Հանդիսանում եմ մարդ չասող նորան:

Թող նա անուանէ Պ. ուլ կամ այլ բան
Դարսելով տակին քանի հատ միլիօն,
Թըող շատ կլնէ այդքանի վերան
Երբ նա չի սիրում իւր աղբ ու կրօն:

Թող նա վայելէ այդ մեծ ահապին
Դիզուած գումարը ինքը ըստ ինքեան,
Զը յիշէ թշուառ մնացած աղբին
Մերկ, ոտաբոբիկ ընկեր հարեան:

Թող յիշէ միայն քանի տարից հետ
Ինչը պիտ մնայ աշխարհիս վերան,
Ումի՛ն պիտ թողնի այդքան գանձը ցեղ,
Որը ժանդոտած տնրում է համայն:

Թող նա չ'կարծէ շատերի նման
Քանդակագործած ոսկեղոծ նկար,
Վերան կունենայ իբր յուշարձան
Կատարած բարի գործերի համար:

Միայն թող յիշէ որ պիտ ունենայ
Յիշոց, հայհոյանք ամեն մի տեսակ,
Թէ և ջնջուած աշխարհի վերայ
Մրափած հանգիստ սև սառ հողի տակ:

Ս տ ա վ ր ա պ ո լ ու մ.

* * ԵՐԵՔ ՀԱՏ ՎԱՐԴԻ.

Երեք հատ վարդին
Մի հատ սոխակը
Ինչպէս հասկացնի
Իւր աղաղակը:

Կամ ինչպէս ասի
Որ ես քեզ համար,
Առանց կրակի
Այրուում եմ օտար:

Մէկ ու միայնակ
Ընկած մէկ սենեակ,
Երգում եմ լալում
Առանց օժանդակ:

Ոչ ունի լսող
Ոչ մխիթարող,
Բորբորում սրտին
Ոչ մի ջուր ածող:

Թէև երեք հատ
Վարդի համար շատ,
Տանջանք է կրում
Մէկը միւսից վատ:

Ո՞ւմ հասկացնի
Եւ ում լսացնի,
Ամեն մի վարդի
Հաղար փուշ ունի:

Պարտէզը լցուած
Սաւանով ծածկուած,
Անմեղ վարդերին
Գիրկերը առած:

Ել ի՞նչ եղանակ
Որոնէ սոխակ,
Չաւանդէ հողին
Առանց նպատակ:

Սուրբ խաչ քաղաքում.

89. Վ Ա Ր Դ Ե Ր.

Ի՞նչ շահ ունէք, և ինչ օգուտ, ինչ արդիւնք
Մէկը միւսից չքեղ պճնուած վարդեր,
Սրտիս մէջը ձգելով թիքթուկ թիքթուկ
Հարուածում էք թողում բորբորում, վարդեր:

Շատ մի վստահացէք մայիսի վերան
Վաղամեռիկն է կուհիկն վարնան,
Կեանքը նուազ օրերը համանման
Բերմունքները կարկտահարուած վարդեր:

Համեստ կացէք ձեր կոչմանը համեստ
Սէր մի յայտնիք տատասկի, սև փշի շատ,
Թառսիւնուցս այսքանը ձեզի խրատ
Ընդունեցէք ինձ սիրահարուած վարդեր:

90. Մ Ո Ւ Խ Ա Մ Մ Ա Զ.

Վարդ, վարդ բացուիր բանի որ դարնան ժամանակն է,
Նախշուն օրերի հովերի հնչման ժամանակն է,
Ամպերը բոլոր քաշուած արժան ժամանակն է,
Քոյ բացուելու պճնուելու համան ժամանակն է,
Խեղճ սոխակիդ արի տալու սնայման ժամանակն է,
Քեզ հետ խօսելու, երգելու կենդան ժամանակն է:

Էլ լինէն է քեզ ստիպում այս տարի մնալ փակ
Շատ օրերի շատ ժամերի դարերի նմանակ,
Ոչ կոծ, ոչ ախ ու վախ լսել ոչ լաց, ոչ աղաղակ
Գոնեայ զանազան ցեղերից առած մի օրինակ,
Զեռքից մի թողիլ այսպիսի կենդանի ժամանակ,
Որի միջում ամեն բանի էջան ժամանակն է:

Արի բացուիր յոյս կայ նա քեզ հետ ծիծաղելու
Պերճանալու ուրախանալու սերդ բաղելու,
Այսօր վաղը, միւս օրը քեզ համար նուազելու
Պատրաստել է մարմինը իւր կենդանի թաղելու,
Քանզի իմանում հասկանում է, որ յապաղելու
Սէր չունի քեզ հետ որ ասես դաժան ժամանակն է:

Խնդիրը այս է Թառսիւնու քեզ, փակ չի մնաս դու
Մի փայ ծաղիկի շրջանում անքակ չի մնաս դու,
Նման շուշանի բացուիր անքակ չի մնաս դու
Լցուած է բոլոր աշխարհը դարտակ չի մնաս դու
Լսի սոխակիդ երգը ծմակ չի մնաս դու,
Յոյս տուր բանի որ դարերի իշխան ժամանակն է:

Սուրբ խաչ
քաղաքում

91. ՄԱՋԱՌՅՈՒ ՏԱՄԻ ԹԱՆԸ.

Այս տարի վատ էր անցեալ տարուանից
Իմ սիրած պաշտած Մաջառցի եղբայրը,
Վատ էլ կերթար սկսած այս օրուանից
Նորութեան չի դիմած Մաջառցի եղբայրը:

Շատ ցաւում եմ, երբ ձեզ այսպէս եմ տեսնում
Նուղաների զաւմուխների շրջանում,
Կովկասի հետ ընկած մի մութ անկիւնում
Անհռչակ մնացած Մաջառցի եղբայրը:

Արձակէք օձիքը փեշը հնութեան,
Աջակցեցէք դիմուխներին նորութեան,
Միրէք մէկս մէկու ձեր անձի նման
Սուրբ գրքից օգնուած Մաջառցի եղբայրը:

Ճանաչեցէք աշխարհի չարն ու բարին
Ասածները թողած խելից տկարին,
Ճանաչեցէք բարեկամին օտարին
Շատերից ետ ընկած Մաջառցի եղբայրը:

Լաւ օրերը միք վատնիլ գինէտներում
Մարդ էք համարվում ձեր շրջանում,
Մայրենի լաւ լիզուն ձեր բերաններում
Թող չը մնայ մեռած, Մաջառցի եղբայրք:

Որով ամեն մի դործ և ամեն մի բան
Կարող էք ճանաչել աշխարհի վերան,
Շատերի համեմատ շատերի նման
Մի համբաւ ստացած Մաջառցի եղբայրք:

Խօսքը թողեք պառաւներին, ծերերին
Վիճակ բացող քօռ քաշալ դարվիչներին,
Զարագուշակ այլակերպ ապուշներին
Որոնցից չէք խորշած Մաջառցի եղբայրք:

Ճանաչեցէք ձեր անցքերը պատմական
Ով է Վասակ, ով է Վարդան ըստ ինքեան,
Ով է Փառնակ, ով է դաժան Մեհրուժան
Եւ ով է ազգուրաց Մաջառցի եղբայրք:

Թէ հայ էք, հայ ծնուած արժան հայ կոչման
Հայութեանը միք մնալ դուք դաւաճան,
Սիրեցէք դուք Արամ, Տիգրան ու Վարդան
Նոցա պէս բաջերաց Մաջառցի եղբայրք:

Որոնք միշտ հայրենեաց սուրբ սիրոյն համար
Ունեցել են լաւ միտք ու լաւ գաղափար,
Գործել են մէկ մէկու համահաւասար
Համարած օրինաց Մաջառցի եղբայրք:

Հետեցէք նրանց գործին ու բանին
Վէ՛հ պահելով անունը Հայաստանին,

Պահպանեցէք դպրոցին վարժարանին
Մէկ մէկու աջակցած Մաջառցի եղբայրք:

Բացի այդ ձեռք բերէք երկու երեք հատ
Լաւ քահանայ իրանց կոչման համեմատ
Ոչ թէ եղածի պէս շատ բանի աղբատ
Ոտ ու ձեռքից ընկած, Մաջառցի եղբայրք:

Երեցփոխ էլ է պէտք խելօք հասկացող
Քրտինք թափող կոպէկ կոպէկ աշխատող,
Աստուածանից վախող, մարդից ամաշող
Փողի ցեց չ'դառած Մաջառցի եղբայրք:

Նոյնպէս հարկաւոր է լաւ հոգաբարձու
Հաւատարիմ դպրոցի՝ եկեղեցու,
Ոչ թէ եղածի պէս անխելք անհյուս
Ուռած ու փքուած Մաջառցի եղբայրք:

Ձեր աստ գալը ահա ամբողջ դար եղաւ
Մի պատմութեան մէջ չի մտաւ ձեր համբաւ,
Այս օրս էլ միջնեց մութ գիշեր դառաւ
Իմ հարստահարուած Մաջառցի եղբայրք:

Թուրք, քուրդ հայրենա կից թողել էք եկել,
Ձեր կարծիքով աղատութիւն ձեռք բերել,
Իսկ չէք զգում որքան էք հեռ մնացել
Ախ իմ ընկած, քնած Մաջառցի եղբայրք:

Սիրեցէք վարժարան, սիրեցէք դպրոց
Համար ձեր տղայոց, ձեր երեխայոց,
Որոնք աննպատակ փողոցից փողոց
Վազվզում են քաղցած Մաջառցի եղբայրք:

Փնտուէք գտնելու զուարթ աննուազ
Վարժուհի վարժապետ միշտ և հանապազ
Ոչ թէ եղածի պէս երեսը անմազ
Օրը պակաս ծնուած Մաջառցի եղբայրք:

Ընդունեցէք կարդալու Նոր-դար, Մշակ,
Ընթերցասէր ցոյց տուած ձեզ մի տեսակ,
Այդ քանովը դուք էլ շատի նմանակ
Եղէք լուսաւորուած Մաջառցի եղբայրք:

Թառսիւնին եմ ձեր բարին ուզող մի հատ
Իբր նախածանօթ եղբայր հարազատ,
Թէև հեռու, սրտով ձեզանից չեմ դառ
Հալածուած թափառուած Մաջառցի եղբայրք:

Վաղաթառամ Հ. Գ. Շխարեանցի անմոռանալի յիշատակին,
Ս. խաչ քաղաքում:

92. Մ Ե Ծ Ա Խ Օ Ս.

Ունայն խօստմունքներով բան չի հեշտանալ
Լաւ միտք, լաւ սիրտ, լաւ գործ, լաւ սէր է պէտք մեզ,
Դարդակ բուրբուռով փոր չի կշտանալ,
Քանի գունդ մտերիմ ընկեր է պէտք մեզ:

Ոչ թէ լոկ կեցցէններ ասող լսացնող
Հաստափոր, հաստավիղ մարդիկ արբեցող,
Ծոյլի, թոյլի, մունջի, քնից զարթեցնող
Սրտաշարժ կենդանի խօսքեր է պէտք մեզ:

Մեր ինչին է գծուծ, անուն մրտոող
Բթամիտ հարստի անպէտքացած փող,

Քանի լոկ մի գլուխ երկ ոտ ունեցող
Սի անձ և մի հոգի մի տէր է պէտք մեզ:

Որից օգնուած մենք էլ մէջք մէջքի տուած
Կընթանանք մոլեռանդ թշնամու դիմաց,
Քրդին վերք հասցնող, Տաճկին հարուած
Վարժուած սնուած ձեռքեր է պէտք մեզ:

Ուրեմն լսեցէք խօսքը Թառսիւնու
Յարգ չէ մեզի շարունակ վիղ ճկելու,
Թշնամու քարից բերր ճակտին զարկելու
Ձը վախող չ'ամանչող, պատկեր է պէտք մեզ:

93. Մ Ա Յ Ր Ա Կ Ա Ն Խ Ր Ա Տ.

Որդեակ չուտ մեծացիր ծնողացդ պաշտպան եղիր
Դիւրէ դժուար միտքերը խելճ հայրիդ օգնական եղիր,
Հորսերի խոր մտքերի, մեծ ցաւերի դարման եղիր
Աշխատէ ազգիդ օգուտ բաներ, բարի բերան եղիր,
Հայ ծնուար հայ մեծացիր, իշխանաց իշխան եղիր
Ազգուրաց Վասակ մի լինիր ազգասէր Վարդան եղիր:

Լսիր մօրդ պէս սրտառուչ պաղատանքը որդեակ
Ազատ անվախ թարմ մատղաշ սիրտդ բացիր համարձակ,
Ծոյլութիւնով ոչ մի բան չես կարող դիմել ընդունակ
Որպէս զի շատերի նման կարաս ապրել յաջողակ,
Հայ ծնուար, հայ մեծացիր և այլն.....

Դէ՛հ զօրանաս որդեակ, այս է պահանջս բեղանից
Մեծանաս էլ չհեռանաս հայրենի հայաստանից,
Նորա մէջ քեզ սպասող բարեկամից ազգականից
Թառսիւնիդ կուրախանայ երբ կլսէ գերեզմանից
Հայ ծնուար հայ մեծացիր և այլն....

94. Ք Ն Ա Ր Ի Մ Ք Ն Ա Ր.

Յովբալից մնացած օրինակ մեղի
Դուն իմ քաղցրանուագ քնար իմ քնար,
Անուանել եմ և պիտ անուանեմ քեզի
Քաղցրաձայն իմ սոխակ քնար իմ քնար:

Դուն ես համ լեզուի. նուազ բերանի
Համակարիք եռանդուն երկսբանի,
Կոծուած սենեակի մութ օթեանի
Լուսատու աշտանակ քնար իմ քնար:

Դուն ես ինձի համար ամուր կեցարան
ձարտար լապտերներով պատած օթեան,
Եւ մի լի լիապէս սեղան մշտական
Թէ լինիս ընդունակ քնար իմ քնար:

Դու ես աշխարհի մէջ եռասուզ փափակ
Մարդկանց սրտերի մէջ աշխոյժ նպառակ,
Շատ սրտի սփոփիչ, շատ սրտի ներհակ
Շատ սրտի ոուր դանակ, քնար իմ քնար:

Դուն ես հայր, դուն ես մայր անմայր որբերի
Նորանց մեծաբելու հմուտ ու արի,
Սիրահարուած անբաբախում սրտերի
Մխիթարիչ մենակ քնար իմ քնար:

Քեզանով եմ փսեմ զգում անձս իմ
Կատարելով միշտ բարի նախանձս իմ,
Դուն ես թանգարանս, դուն ես գանձս իմ
Ամեն մի ժամանակ քնար իմ քնար:

Քեզանով եմ ես հայթհայթում պատառ հաց
Թէ մէջ բարեկամաց թէ չարեկամաց,
Լոյս ես, լոյս աշացս պատկեր իմ գիմաց
Ջինջ լուսին արեգակ քնար իմ քնար:

Թող ինձ ասեն լաւ է քնարից թմբուկ
Նորան չեմ գրաւուել, չեմ սիրիր յատուկ,
Լարերին անշիտակ մզբաբը փափուկ
Փարդէրը անշիտակ քնար իմ քնար:

Թող լսէ Ապալօն, թող լսէ Մուսան
Թող լսէ աշխարհի ամեն մի գուսան,
Որքան ծառայելով քու փսեմ կոչման
Վայելում են հոչակ քնար իմ քնար:

Թառսիւնիս անունով այնքան չեմ ստոր
Ձեմ մնացել և չեմ մնալ գլխակոր
Հանիր ձայնդ լսեմ օր, օր, օր, օր, օր,
Սոխակի պէս խօսնակ քնար իմ քնար:

95. Բ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Ն Ր Ա Ղ Ի Ն.

Բնութեան հրաշքն տրեղազոյն հայ աղջիկ
Աշխարհի մէջ երջանիկ ես երջանիկ,
Օգից, լոյսից զրկուած չնաշխարհիկ
Ծաղկի նման անդրանիկ ես անդրանիկ,
Գեղով փայլուն պարկեշտութեամբ հրաշալիք
Հանք քաջութեան Հայաստանի շուշանիկ:

Մի հատիկ ես աշխարհում ու թանկագին
Ընծա, հայոց զօրութիւնէն երկնային,
Բարձրացնող աստիճանը մարդկային
Համբաւաւոր գեղանի ես ազգային,
Յիշիր արին Մուշեղ, հսկայ Աղասին
Աշոտ, Սմբատ Վահան անսփոփ Գագիկ:

Յայտնէ քո նորոգման օրը ու սիրուն
Յոյս տուր ազատ հայ քաջերուդ փափկասուն,
Որոնք մոլոր հառաչում են օրնիրուն
Տեսնալ շուշանիդ պճնուած դարդարուն,
Թառսիւնիս էլ միշտ կարօտ բու բացուելուն
Սպասում է անդադար ու գեղեցիկ

Ղ. Գ. Լ. Կ. Բ. Ն.

96. Ղ Զ Լ Ա Ր Ո Ւ Մ.

Սմբողջ մի ամիս նստած Ղզլարում
Տրտում միայնակ մի մութ համարում,
Երկբայութեան մէջ ապշած ու մաշուած
Թէ ինչի համար, այդ գիտէ Աստուած:

Հարցնող չը կայ թէ հայ պատանի
Հայրենի հողից զրկուած գեղանի,
Ի՞նչ է բաղձանքդ ինչո՞ւ ես կարօտ
Պէս գլխուած վախկոտ ու երկշոտ

Հարցնող չը կայ մի հատ բանիրուն,
Զգայուն ներհուն գիտուն խաւատուն,
Քննէ անհանդուրժ ամեն մի բոլոր
Զը դրժէ տրտէ անխիղճ անողոր:

Հարցնող չը կայ մի հատ վերք ցրիչ
Վսեմ ու հլու հողի համոզիչ,
Կանչէ սիրալիր անյայտ մի անձի
Որին տանջում է գործք մամոնայի:

Հէր է քեզ տանջում այն ամիրանը
Որը մոռացած է իր ազգականը,
Զի ուզում տեսնել այն հայ մանկանը,
Որը կարօտ է իր օգնութեանը:

Բայց նա շարունակ հիւթեր է ըմպում
Սաղ օր ու գիշեր նստած ախոմբում,
Հարսին ու տղին հետը վերցրած
Տուն վերադառնում խմած՝ լուր դառած:

Հէր է քեզ տանջում հայի այն որդին,
Որը չի յիշում իր թշուառ աղբին,
Նստել խօսելում մեծ մեծ բռնալում
Ամենաընտիր տեղն է պարզուում:

Հարցնող չը կայ Աստուած վկայ
Թէ հայի տղան քաղցած հոգին տայ,
Բացի այդպիսի մի մարդաշահ բան
Վերքեր են տալիս առանց սպեղան:

97. Ն Մ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն.

Յովհաննէս Բուշուբէկեանցի յօրինած «Լսեց'ք ով իմ հայեր»
վերնագրով մուսամմազին.

Մ Ո Ի Խ Ա Մ Մ Ա Զ.

Լսեցէք ով սիրելիք ձեզ մի նոր համբաւ եմ ասում,
Մէկի համար վատ էլ լինի, միւսի համար լաւ եմ ասում,
Անտեղի չէ որ ասում եմ, տեղի է իրաւ եմ ասում,
Որին գիժ, որին խելօր, որին անիրաւ եմ ասում,
Բայց բարին չիմացող մարդու համար մի մեծ ցաւ եմ ասում,

Ընթերցողը կ'հասկանայ ի՞նչ է միտքը հեղինակի
Եթէ խեղք ու մտքի տէր է, շտեմարան մեծ ճաշակի,
Խօսքիցս չի նեղանալ ու չի կանգնիլ հակառակի
Մերթ սրի, մերթ դաշոյնի, մերթ վաղելով սուր դանակի,
Նրանց նման, որոնց ես միշտ լաւ խեղքի ծարաւ եմ ասում:

Եկ մի նեղանալ ինձանից, որ ես քեզ վատ եմ ճանաչում
Յանցառութեան մի տիպար, խելքի աղբաւ եմ ճանաչում,
Վարք ու բարբոս ատելի կենդանի դատ եմ ճանաչում,
Հայ էլ լինես, հայերի հետ անհամեմատ եմ ճանաչում,
Սյդ մասին էլ ես քու խելքին ոչ թէ շատ, սակաւ եմ ասում:

Ամեն մարդի մարդ չեն ասիլ, թէև ունի մարդի պատկեր
Մարդի բոյ, մարդի հասակ, մարդի աչքեր, մարդի ունքեր,
Մարդի քիթ, մարդի կզակ, մարդի երես, մարդի այտեր
Մարդի պէս ուտում լինի եփած թխած ամեն բաներ,
Երբ մարդկային գաղափարի տէր չէ, անիրաւ եմ ասում:

Վատ չէ ասել ծեր Սուրէլ մուսամմազի վերջին բանդը
Քանզիս այն կէտին է հասել նորա վառվռուն եռանդը,
Եթէ ես էլ ունենայի Վատկանեանի մեծ տաղանդը
Լաւ լաւ խօսքեր կ'գրէի, աչքի տակ առած մութ բանտը
Սիւննցի Թառսիւնին եմ, այսքանը քեզ բաւ եմ ասում:

Ղ. Գ. Լ. Կ. Բ. Դ. Զ.

98. Փ Ա Դ Ի Զ Ա Զ.

Ի՞նչ է փաղիշահ փաղիշահուհի
Ի՞նչ է և նորա պէս պէս նախարար,
Ի՞նչ է վեհափառ վեհափառուհի
Երբ մեռած բանին կաշառքի համար:

Ազգեր կուլ տալով նման վիշապի
Ազգեր կաշառքով պահել պաշտելով,
Հեղինակ եղած ամեն տագնապի
Դարեր վատնելով փաղիշահ գոլով:

Վայրենաբարոյ շուրջը աշխարհի
Անցկացնելով թախտի պարզուած,
Աջակցած քափուր դեաւուր ասողի
Հինգ հարիւր կնոջ ամուսին եղած:

99 Յ Ա Ի.

Յաւ չկայ որ աշխարհում գեղ չունենայ,
Իսկ իմ ցաւը ոչ գեղ ունի ոչ դարման,
Նոյնպէս հոգսըս, միտքս աշխարհի վերան
Ինձ է մաշում կմախք դարձնում մշտական:

Քշանալու փոխարէն շատանում է
Ամբանում բերքանում հաստատանում է,
Օր օր բազմանում է առատանում է
Թողնելով ինձ աշխարհում անսպեղան:

Մէկ հատ կողմից չունենալով մէկ սատար
Անմխիթար տանջուում եմ չարեշար,
Այս մասին մի օր ողջ ե մի օր տկար,
Թառսիւնին եմ ընկած այս ու այն կուման:

100. ՀԵՔԱՐԻ ԳԵՏԸ ՄԻԻՆԵՆՑ ԱԶԽԱՐՀՈՒՄ.

Մանրակոհակ արագընթաց Հեքարի
Աղմկալի ռըր ես սահում աննման,
Կանգ առ փոքր տիպար սիւնեաց աշխարհի
Պատմիր ինձի քու անցեալը քու ներկան:

Հիւրընկալէ մէկ, կէս քառորդ ժամ ինձի,
Ասիր, խօսիր եղիր բարեկամ ինձի,
Ընդունել ես ձրի շատ անգամ ինձի
Այս անգամ էլ ընդունիր, ով պատմական:

Անցքդ ձրի շատ ես պահել ինձ համար
Ոչ հարազատ ես հարցրել ոչ օտար,
Առ ծարաւս մի քիչ ջրով, ով տիպար
Ծփծփալով էլի հոսիր մինչ Կեկան:

Մարգարտակերպ պարզ ջրովդ զովացուր
Առանց կրակ վառուած սիրտս հովացուր,
Կոհակներով մի ջերմ համբոյր ինձ հասցուր
Իբր հայրենիքի յորդահոս սահման:

Պատմիր ինձի սկզբիցդ մինչի ծով
Ով է անցել, ով գնացել քո գլխով,
Ով է ծաղրել, ով ծիծաղել քեզանով
Ջուրդ լակել, քեզ մնացել դաւաճան:

Թառսիւնին եմ շատ եմ քաշել կարօտդ
Սիրելով երկիրդ յարգելով օգրդ,
Հեռու տեղեր թողած եկել եմ մօտդ
Ընդունած շատ Թիւնու շատ Խաչու շրջան:

Հ Ե Ք Ա Ր Ի Ա Փ Ո Ւ Մ

101. Ս Ա Բ ՈՒ Ղ Ի Ա Փ Ի Ն.

Արագընթաց հեղեղանման Օարուխ
Օձապտոյտ մինչ երբ սահէս միայնակ,
Մաղաւուզից մինչ Հերարի աներկիւղ
Ընկած անդնդային խորխորատ ծորակ:

Ով ինչ տեղով ուզել է անց է կացել,
Ջուրդ խմել, պատիւդ չէ խմացել,
Այդպէս զուր շատ օրեր դարեր է անցել
Գռհհիկ Սիւնիքի Օարուղ սանձարձակ:

Ի՞նչ ես փշփշացնում, որպէս վիշապ օձ
Ըմբշամարտի պէս մերկապարանոց,
Փրփուր հանում ոսկեղօծ արծաթաղօծ
Հորանջելով արտայայտում դառ կոհակ:

Թառսիւնին եմ քեզ կարօտած շատ տարի
Կանգնիր խօսիր, ինձ օտար մի համարի,
Անբաղդները Վասակաշատ աշխարհի
Մէկը ես եմ, մէկը դուն ես, ով գետակ:

102. Ս Ի Ի Ն Ե Յ Ի Ք.

Ժիր ժիրաժիր Սիւնեցիք
Առաջ կացէք յարաժամ:
Սէր, միութիւն կազմեցէք
Աստանդանուած ամէ ամ:

Ուղղած ձեր քաջ արշաւնաք
Դէպ արեւմուտք անկիւնը
Արծարծելով բերկրանք
Դէպի սուրբ միութիւնը:

Այնուհետեւ անընդհատ
Սարեր քարեր խայտալով,
Կոնծեցեր գաւաթ գաւաթ
Անապակ գինի սիրով:

Աշխատեցէք ունենալ
Մի դրօշակ պճնուած,
Չար թշնամին անսխալ
Ձեզնից վախէ զայրացած:

Որից օգնուած կ'տեսնէք
Հայկազունք բերկրացած,
Հայրենիք ամեն տեսակ
Շղթաներից ազատուած:

103. ՔՈՒՎԱՆ ՄԵՐ ԽԱԼԽԻՆ.

Մէկ գաւաթ օղիով մէկ տուն է բանդում
Մեր խալխի ընտրած տանուտէր աղան,
Որը ոչ վախում է, ոչ էլ ամաչում
Ոչ էլ յիշում Աստուծոյ արդար դատաստան:

Մէկ ձեռքում մտրակ, միւս ձեռքում մհակ
Կնքում է հաստատում կեղծ պարտամուրհակ,
Օրը հինգին վեցին այս կերպ այս տեսակ
Դատապարտում է առանց դատարան:

Միակերպ համարած արդար անարդար
Բղաւում է դուն ես յանցաւոր հիմար,
Սրած տեղի, անտեղի գործիդ համար
Քեզի հանել կուտամ անգութ կախաղան:

Առանցի հարցնել, առանցի զննել,
Առանց հետազօտել և առանց քննել,
Կսկսէ անխնայ անխիղճ հարուածել
Հասցնել բիւր տեսակ ցաւ անսպեղան:

Ահա այս տեսակ է վարուում գիւղացուն
Ընտրեալ պաշտպանը և հոգեբարձուն,
Որոնք ոչ գալրոցին ոչ եկեղեցուն
Շահ տալը չեն սիրում ըստ աւանդական:

Այս կերպ է քանդուում գիւղացու տունը
Ձեռքից գնում կայքը հարստութիւնը,
Կրչում աշխատածը ջնջուում անունը
Ունեցած ամեն բան եղած ցիրուցան:

Այսպէս է լաւ կողմը գիւղացու կեանքի
Որը վատնուում է մէջ չարչարանքի,
Մի օր տառապանքի մի օր տանջանքի
Մի օր բոլորովին պարզ երկբայութեան:

Այս տեսակ է վարուում իրա ընտրած
Տանուտէր պաշտպանը շատ օրեր հարբած,
Որի հօրից մօրից փլուած մնացած
Խրճիթն է միայն նորոգուում համան:

Ել ինչո՞վ գիւղացին վարուի գեղեցիկ
Հետևի նորութեան ապրի երջանիկ,

Որպէս զի իրա մերկ տղայ ու աղջիկ
Խրկել կարողանայ դպրոց, վարժարան:

Բացի այդ, ինչո՞վ նա դպրոց վարժարան
Կառուցանել կրնայ շատերի նման,
Քանզի իր միայնակ տանուտէր աղան
Հասցնում է իրան մեծ թշուառութեան:

Կամ ինչո՞վ գիւղացին իր որդու համար
Ձեռք բերել կարենայ մի փոքր գումար,
Որը մի հատ որդու երկրորդ կենարար
Պաշտպան է կոչուում ինքն ըստ ինքեան:

Այս մասին Թառսիւնիս մնացած գերի
Ենթակայ է լինում շատ հարուածների,
Ձեռքում քոխկայ գզիր համարուածների
Որոնց նեղութիւնը շատ է մշտական:

104. Ա Ղ Օ Թ Ք.

Իշխան թաղաւորաց, իշխան իշխանաց
Ամենակարող Աստուած, տուր թշնամուս կեանք,
Որը օր ու գիշեր սուր և սրնթած
Բամբասում է ինձ առանց խղճմտանք:

Իսկ ես Քո ինձ տուած պատուիրաններում
Չարակամիս բարին եմ ուզում, խնդրում,
Որ միւս անգամ ամեն մի քայլափոխում
Չը լսացնէ հազար տեսակ բամբասանք:

Թէն վիրաւորուած սրով սուտերով,
Շրջապատուած վշտերով ու վէրքերով,
Հաստատ քու ինձ տուած հրահանգներով
Ներում եմ ես նորա ամեն մի յանցանք:

Բերած լինեն, հոգիս կոկորդիս հասցրած,
Տունս քանդած, ինձի տուած մեծ հարուած,
Ներում եմ սուրբ գրքի սուրբ խօսքից օգնուած
Թառսիւնիս, կրելով աշխարհի տանջանք:

105 Խ Ե Լ Ք Ո Ի Մ Ի Տ Ք.

Աստուած Խնձորկեցուն խելք ու միտքը տայ,
Որ չխօսի ինձ վերայ տեսակ տեսակ,
Որոնք օր ու գիշեր անխիղճ անխնայ
Թոխր առած քանդում են իմ ոտքի տակ

Ձեն հասկանում սխալում են չարաչար
Խօսելով բամբասելով անգթաբար,
Հէնց այսքանի մասին՝ այսքանի համար
Շատ բաներ է ինձի թւում դառնորակ:

Թառսիւնուս դէմ զինուած վատ սկզբունքով,
Խեղդել կամին թշուառիս գոռ կապանքով,
Այս գէշ վարք ու բարքով ու արարմունքով
Կեանքիս սիւնը տաշում են առանց ուրազ:



106. Զ Ա Ր Ն Ո Ի Բ Ա Ր Ի Ն.

Աստուած իմ գիւղացուն խելք գիտութիւն տայ
Որ հասկանայ իրա չարն ու բարին,
Ձեռք բերած լաւ վիճակ և լաւ ապագայ
Ասածը չի լսած խելքից տկարին:

Որը ամեն մի ժամ ամեն մի վայրկեան
Հէնց ընկած է իրա վնասի յետան,
Ոչ գպրոց յարգելով ոչ ուսումնարան
Պաշտպանում են իգիալը խաւարին:

Եթէ հասկանային այսքանը բոլոր
Եւ ի՞նչ էր ինձ պէտքը և ի՞նչ հարկաւոր,
Կանուանէի ինձ Թառսիւնի բաղաւոր
Տէր մարդկային հանճարի, գաղափարի:

107. Դ Ա Ր Ա Ի Ը Ս Ի Ի Ն Ե Ա Ց.

Վարի վարի իմ անձնիչ
Իմ խեղճ արօր, խեղճ գութան,
Գուցէ մի օր քեզ իմ փրկիչ
Ընծայէ մի անդաստան:

Հոգը փափուկ արգաւաբեր
Լայն ու երկար տափարակ,
Արմատիք քիչ և անքարեր
Ընկած մինչի խոր յատակ:

Արևմուտքից մինչ արևելք
Եւ հիւսիսից մինչ հարաւ,
Գուցէ տան քեզ առանց մի ելք,
Ս.մեն բանից անծարաւ:

Այնուհետեւ մի հատ մաճկալ
Քանի գունդ լաւ եղներով,
Կը ջանայ դէպ քեզ ընթանալ
Քաջարի հոտաղներով:

Որոնց մէկը մտած ամբողջ
Հաստիկ ճալատ ձեռք առած,
Կը ջանայ անդադար անդուլ
Վիրաւորուած բորբոքուած:

Մէկ քանիսը յետատ ընկած
Խուփիւք ծայրը սրփելով,
Մէկ քանիսը սրբիչ առած,
Առջիւք ցեխը մաքրելով:

Դէհա թափալ, հեշայ թափալ
Կրկնակի ստէպ, ստէպ,
Առանց դարաւ մինչ ռափալ
Ընթացիր հապճէպ հապճէպ:

108. Կ Ն Կ Ա Յ 2 Ե Ռ Ք Ի Յ.

Կնկայ ձեռքից քանդուած է, մարդի ձեռքիցաւեր ուտած
Իմ հայրենիք, Սիւնեցի աշխարհ, որի մէջ եմ ես ծնուած,
Որը բացի մի հատ պաղ ջուր չունի բան սփոփարար
Որ նորանով միտթարուի թարմ սիրտս իմ բէկուած:

Այդ մասին անթիւ անհամար ցաւեր մտքեր ու հոգսեր
Տամ են ինձ տրտնջալ, սգալ ողբալ վերայ հայրենեաց,
Մանաւանդ վաշխառուների հարստահարութիւններ
Որոնք կեանքս լափւիւմ են սիրտս թողնում բորբոքուած:

Մանաւանդ երբ տեսնում եմ դեռահաս աղջիկ տղայ
Հայրախնամ վատնում են ուսման սնունդ չի առած,
Անիծելով իրանց չարապուշակ ծեր ծնողներին
Փշանում են սոված, ծարաւ, այս ու այն կուման ընկած:

Էլ ինչ մտքով իւր սիւնիքում խեղճ չի մնայ Թառսիւնին
Որի մէջ տեսնում է բոլոր Վասակներին աղգուրաց:

(Խ Ն Գ Ն Ր Ի Ս Ք.)

109. Մ Ե Ր Գ Ի Ի Ղ Ա Յ Ի Ք

Մեր գիւղացիք խաչ են գնում գիւղը առանց վարժարան
Եկեղեցին առանց տէրտէր խաչ խաչուառը ցիրուցան,
Կանթեղները մի կողմ ընկած ջահ աշտանակ ժանգոտած
Անլուսարար փշանում են կարօտ հոտի օգնութեան:

Տարին մի օր յաճախում են մերթ քամու խաչ մերթ թաղայ
Մերթ հեռու աշղ դարբի որից ուզում են շատ բան,
Էլ ինչ օր ինչ ժամ ինչ վայրկեան բաղդ կունենանք հաղիպել
Այն սուրբ գործին որի համար տանջվում ենք միշտական:

Այս մասին խեղճ ենք մնացել պատկառելի Սիւնիքում
Մինչեւ անգամ չունենալով մէկ քահանայ գիտնական,
Որը կարող կ'ընէր առնել առաջը շատ չարեաց
Ոչ թէ մնալ մինչի ցմահ թառսիւնուն հետ դաւաճան:

110. Խ Ա 2.

Մեր հարսերը աղջիկերբը խաշ են գնում խմբուած,
Խալխի փողով շորեր գնած, կանաչ կարմիր հագնուած,
Ընկերացած ալարուլա հագնուած Օհանների
Ոտը ձեռքը բաց են մանդամ երեսները ծածկուած:

Որովհետեւ ուխտաւոր են և էն խաշի դեհինում
Որի մօտը տարին մի օր հարկադրուած են գնում,
Մարդը լաւ կին կինը լաւ մարդ, աղան աղջիկ է ուխտում
Սմուկ կինը արու զաւակ անկիրթ դաստիարակուած:

Ել ինչ կնենք մենք դպրոց, ուսումնարան, վարժարան
Մեր նորարոյս մանկանց համար, ոչոնց պէտք է ըստ ինքեան
Որոնք իզուր վատնուում են մէջ անբարոյականութեան
Կամ զինեմով կամ խաղատէր, կամ լինում են ազգուրաց:

111. Հ Ա Մ Փ Ա Յ Մ Ա Ր Գ Ի Կ Ը.

Համփայ մարդիկը որէ մեր երկրի
Լակոտ մակոտի հասանք ոչ բարի,
Որոնք ի նպաստ արական սեռի
Գործել են դիտմամբ դարեր ու տարի:

Ո՛ւր է աղտախակալ ու դարասախակալ
Ազա մարդիկը մեզ պատասպարող,
Որոնց տեղ այժմ բռնում է օտալ
Գզիր ու քոխվայ կոշումը սիրող:

Կամ ուրէ վարպետ խալիֆայական
Որ գործ էր ածում իրա վալախական,
Որոնց տեղ այժմ լիրբ ու անպիտան
Խաշիներն են ըմբռնում համան:

Որը բացի ակտ ու սլարտամուրհակ
Ուրիշ բան զրեւ կոշում է յիմար,
Մէկ էլ քանի տող իրր թէ նամակ
Բազու խրկելը առանցի ծրար:

Տէրտէր էլ շունենք, տէրտէր տունաւեր
Ծառայող իրա կոշման գոյութեան,
Միայն կոխել ու հանել է ուսել
Մէկին աւազան միւսին գերեզման:

112. Մ Ե Ր Գ Ի Ի Ղ Ի Ն.

Ախ ինչպէ կուզեմ տեսնալ մեր գիւղին
Այս ձորի միջից դուրս եկած դաշտ,
Թողած երկպառակշական չար ոգին
Խաղաղ անվրդով մէկ մէկու հետ հաշտ:

Ամեն մարդ մի քերծ ծալել է մտել
Ել չի հարցնում ինչ կայ ինչ չկայ,
Ձեռքերը ծալած կնկայ պէս նստել
Արհեստը ուսած կամայ ակամայ:

Տէրտէր էլ չկայ մի հատ գրավարժ,
Համեմատ կոշման հասուն, համողիչ:

Մէկը միւսից կոպիտ քարեր են անշարժ
Յիմար ու ցանցառ գործի արարիչ:

Արժան է ընկնեն այսպէս ոտքի տակ
Քլունկ, բահ, կացին, թոխր ձերք առած,
Ժայռերի տակի լինեն շանսատակ
Երբ որ կարգալու չեն սիրահարուած:

113. ՀԱԶԱՐԱՏԵՐԸ ԳՈՐԻՍ ԱՒԱՆՈՒՄ.

Հազարատէրը գորիս աւանում
Խօսել կարում է մարդի շրջանում,
Թէկուզ նա լինի անմիտ խելագար
Լաւ խելք ու մտքի տէր է անուանում:

Թէկուզ նա լինի անմիտ խելագար
Մի հատ վաշխառու իր շահը սիրող,
Նորան բարեպաշտ մարդ կ'անուանեն
Ոչ թէ ազգուրաց, ազգի տուն քանդող:

Թէկուզ նա քանդէ օրը հազար տուն
Հազարին մորթէ հազարին տայ թոյն,
Նորան ճգնաւոր կոչումը կուտան
Ոչ թէ վայրենի գաղանի անուն:

Թէկուզ նա լինի մի հատ գիշատող
Վազր կամ առիւծ, մարդ պատառոտող,
Նորան մի անմեղ գառը կ'անուանեն
Իրա մօր կաթով միայնակ ապրող:

Թէկուզ լինի անխելք անհոլ
Խօսելու անգամ չունենայ լեզու,
Նորան քարոզիչ կամ ճարտարախօս
Մարդ կ'անուանեն, խաւարից հեռու:

Թէկուզ նա լինի անզուտ սանձարձակ
Մէկ ձեռքում մտրակ միւս ձեռքում դանակ
Նորան ազգասէր աղա կ'անուանեն,
Ոչ թէ ազգուրաց և երկրորդ վասակ:

Ահա այսպէս է Սիւնեաց աշխարհում
Մարդս առաջին մարդ է համարվում,
Հազար ըուբլի չնչին գումարով
Միլիօնատիրոջ դեր է կատարում:

Թէ շահ, թէ սուլթան, թէ խան փաշայ
Սորանք են մեղնում, ուրիշ մարդ չկայ,
Շատ որոնել եմ շատ էլ փնտռել
Լաւին չեմ ճարել Աստուած վկայ:

114. Ա Բ Գ Ա Ր Ի Մ Ե Ղ Ա Ն.

Ես ինչ կանեմ արքայութիւն
Որ հայցեմ մեղքիս քաւութիւն,
Քանզի մինչ օրս մարդի
Արած չ'կամ մի լաւութիւն:

Մեղայ Աստծոյ:

Էլ ինչ մտքով արքայութեան
Կարօտ եմ ինքս ըստինքեան,
Քանզի ես իմ գործիւ բանիւ
Մի տիպար եմ սատանական:

Մեղայ, Աստուծոյ:

Հազար անգամ երգում կերած

Կլնեմ, պարտքս չի վճարած,

Հազարին հազար մի տեսակ

Ինձ տուած պատիւը թափած:

Մեղայ, Աստուծոյ:

Հազար մարդի կլնեմ խափած

Եղած չեղած առած լափած,

Լաւութեան փոխ լաւութիւն

Անիլը մեղք եմ համարած:

Մեղայ, Աստուծոյ:

Հազարից պարտք կլնեմ առած

Մինչև օրս չի վճարած,

Հազարին սպանած կլնեմ

Հազարին տուած մեծ հարուած:

Մեղայ, Աստուծոյ:

Խոհեմութիւն աղնուութիւն

Զ'ունեցել ինձ մօտ գոյութիւն,

Պարտք եմ համարել անիլը

Լաւութեան փոխը վատութիւն:

Մեղայ, Աստուծոյ:

Քանզի կլնեմ հազարի տուն

Քարչ տուած բերած սիւն ու մուն

Ոչ մարդից ամաչած կլնեմ

Ոչ մտաբերած Աստուծուն:

Մեղայ, Աստուծոյ:

Ինչ սիրել է իմ գէշ անձը

Զեռք եմ բցել նորա սանձը,

Մէկի կայքն եմ իմը կարծել

Միւսի համ կլնը համ գանձը:

Մեղայ, Աստուծոյ:

Հարուստ աղքատ ինչ գայ ու գայ

Ողջին տանջել եմ անխնայ,

Պատահական մուրացկանի

Զ'կամ տուած մի հատ փարայ:

Մեղայ, Աստուծոյ:

Եկեղեցի չեմ հաճախել,

Նոցա ծէսերով թաթախել,

Ողջոյն տուէքի փոխարէն

Մարդի գլուխ եմ ջախջախել:

Մեղայ, Աստուծոյ:

Շատ տեղ ես ինձ հայ չեմ ասել

Հայերի շարքումը դասել,

Թուրքի լաւութիւն չեմ արած

Միայն հայի եմ վնասել:

Մեղայ, Աստուծոյ:

Մեղայ Աստուծոյ, հազար մեղայ

Ինչ որ մեղք կայ ասի պրծայ,

Մէկ էլ տասը տարի մատնիչ

Քսան տարի լրտես եղայ:

Մեղայ, Աստուծոյ:

115. ԾԻԿԻՔՆԱՎԱՆՔԻ ԳՈՎԵՍՏԸ.

Հազար ութ հարիւր իննասուն և մէկ թուին
Տեսի կապուած քարդ մամուլ Ծիկիքնավանք,
Մտքով ճանաչեցի ես քեզի հազիւ
Զգեցիր սրտիս մէջ մրմուր Ծիկիքնավանք:

Կամիմ փոքր ձեզի գովասանք անել
Մտաւորուէք մեզի դուք խնամք տանել,
Լուսաւորչի նման վիրապից հանել
Առած աղերսանքս լուր Ծիկիքնավանք:

Տառապանքի միջից ինձի ազատիր,
Չար թշնամեաց խօսքը անաչառ դատիր,
Վաղ գիտէի հնարագէտ վարպէտ 'իր
Չեմ ասում խօսքերս դուր Ծիկիքնավանք:

Իսկն մեզ յայտնի է առաքեալ սուրբ ես
Անուամբ Պետրոս բնութեամբ նուրբ ես,
Թողիր հօրդ ու մօրդ, մարմնով որք ես
Արբեցիր դու կենաց ջուր Ծիկիքնավանք:

Գործդ ուղիղ, հաճոյ տերին քու բանդ
Բղխեալ ասէք կերէք ու սուրբ հնձանդ,
Սուր թշնամեաց Աստուծով ես իշխանդ
Չէ պարտ խնայելդ սուր Ծիկիքնավանք:

Մասունքն ես Պետրոսի սուրբ առաքելոցն
Ծիկինքն յիշեալի մարդկան գովելուն,
Ընդէմ Արիօսի չար նգովելոյն
Արդար ես և գործդ մաքուր Ծիկիքնավանք:

Հաւատացիր Տէրին, հետը գոստացար
Քեզմէ չեմ հրաժարուիլ իսկոյն խօստացար,
Բայց երբ շարշարուելու լուրն ստացար
Ասար ինձ կ'սփեն սուր Ծիկիքնավանք:

Մինչև հաւաթօսը երեք ուրացար
Ազատ պատասխանի իսկոյն սուրացար,
Ուզար ներողութիւն, մեղքից զիւրացար
Ստացար թողութիւն ուր Ծիկիքնավանք:

Քո խաչովն եկար հետն Յիսուսի
Օրհնութիւնը առար Մարիամայ կուսի
Բարեխօս Աստուծոյ կատարող յոյսի
Հազար դու լուսեղէն շոր Ծիկիքնավանք:

Չէիր դու հրեղէն, արարած էիր,
Ազնիւ գերապատիւ միշտ գովուած էիր,
Աստուածային սիրոյն շատ սոված էիր
Առար Տէրից կերակուր Ծիկիքնավանք:

Անպատմելի է քո գործն ու վարքը
Անկար սուրբ խորհրդով ի սուրբոց շարքը,
Ընտրուած առաքեալ, կենաց նշխարքը
Ստացար պատուով, փիւր Ծիկիքնավանք:

Սյն փառքով դու եղար ինքդ քարոզիչ
Դժբախդ տխմար ազգի խոնարհ համոզիչ,
Այսուհետև հարցնեմք Տէրից մենք զինչ
Ազատիր շատ եղբայր քոյր Ծիկիքնավանք:

Իսկն ասեմ եղիր երկնային պիտոյ
Ճշմարիտ քարոզիչ և սիւն հաւատոյ,

Չար իշխանին եգին ի Տէր գանգատոյ
Նոցա և տաս աչքեր կոյր ծիկիրնալանք:

«Գնացէր», Տէրն ասեց, «սուրբ հոգին ընդ ձեզ
Ռամկաց քարոզէր խոնարհ և ի հեզ»,
Որպէս սուրբ Գրիգորն քարոզից և մեզ
Էւր հեղութեամբ անկաւ հոր, Ծիկիրնալանք:

Ասեց չ' ընդունեն, փոշին թափեցէր
Զի մնայ ձեզանում, յոյժ սարսափեցէր,
Անկեղծ ընդունողի դործը չափեցէր,
Պարզեցէր հաւատքը պղտոր, Ծիկիրնալանք:

Սրբաշէն տաճար ես, պատիւդ անգին
Զինոյն բազումք մատաղք ստերիւ տակին,
Գովեց քեզ համառօտ Ներսէս Թառսիւնին
Մի ձգիր նրեսիս մուր, Ծիկիրնալանք:

Ծիկիրնալանքի մօտ.

116. Ն. Բ.—Ի չ Ա Ի Ա Տ Ա Մ Ք Ը.

Թոռն ես եմ Վասակ պապի
Ոչ թէ Արամի Վարդանի,
Նպաստող ամեն տաղնապի
Ամօղին եմ Մեհրութանի:

Ազգակից եմ Վէստ-Սարգսի
Քրոջ որդի վատ Վահանի,
Ամօթ է զիս հայի ճակտի
Զ'զարնեմ օգուտ գրպանի:

Իբր հարազատ Սիւնեցի
Հերոս նոր-աւան Գօրիսի,
Ամօթ է ինձ չի հետեւի
Մեծ գործի մեծ նախարարի:

Որը ինձ ուժ կարողութիւն
Թողել է մինչ օրս անհուն,
Զիրս ոսկու շտեմարան
Տունս ինչպէս պալատ կանգուն:

117. Մ Ո Ի Ս Ա Տ Տ Ա Զ.

Աղջիկ հերաթափ, ինչու դու ընկած թողեցիր ինձ,
ձկուած թողեցիր ինձ,
Միանգամ էլա ձեռքիցս չ'բռնեցիր, պարկած թողեցիր ինձ
Քնած թողեցիր ինձ:

Էլ ինչդ է լաւ ինչդ ասեմ քեզ խօսացնեմ
Մէկ մէկ լսեցնեմ,
Քանդի միայնակ անխնայ խաշուած թողեցիր ինձ
Մաշուած թողեցիր ինձ:

Հէնց այդ մասին էլ ես քեզի մի օր, մի ժամանակ
Կուտամ ուրիշ հռչակ,
Որովհետեւ անգթաբար վառուած թողեցիր ինձ,
Այրուած թողեցիր ինձ:

Էլ ինչու համար ես քեզի լսեղճ լսեղճ պիտի նայեմ,
Խնդրեմ ու հայցեմ,
Թառսիւնին եմ լսեղճ այրուած խորովուած թողեցիր
Խաշուած թողեցիր ինձ:

118. Բ Է Կ Ե Ր Ը.

Բէկերը մեր երկրի ճանճի նման շատանում են,
Լաւ կացութիւնները փոխում, օրըստօր վատանում են,
Ներքուստ փախուստ կրելով մարդահաճոյ շատ բաներից
Անձնական զէշ շտհերի մէջ աճում առատանում են:

Կեղերում հարստահարում չողորթութում են մեզի,
Որից օգնուած գերացած մեղանից ետանում են,
Մէկից գլխարկ միւսից կօշիկ, երրորդից փող պոկելով
Առանց տանջանքի ապրում հաստատ արմատանում են:

Հաւ ճուտ ուղերը չեմ ասում, խաշլի չորաթանի հետ,
Որի նկատմամբ գիւղացիք խսպառ աղքատանում են:

119. Մ Ե Ր Կ Ե Ա Ն Ք Ի Ց.

Մեր խալխի մէջ բաւական է մի մարդ մտաւ մի ատեան
Խալխի համախօսականով ճակտին կպցրուց նշան,
Շատ չի քաշիլ կ'տեսնես որ այդ թալակից փախածը
Քանի հազարի տէր դառաւ խալխին թողեց պարտական:

Կը գովեն կը գովաբանեն բարձրացրած մինչ երկինք
Զիմանալով այդ թերուսր անարժան է այդ կողման,
Թէ մէծի մօտ թէ փոքրի, թէ տղի, թէ աղջկայ
Ամօթ բանէ մարդ չը տեսնի ամեն մարդի մէջ նրան:

Հէնց այդ մասին պէտք է լռել լուռ մ'նալ ինչպէս արձան
Ծառայելով այդ յիմարին, անուանելով ազա ջան,

Զիմանալով փողի ցեց է, արեան ծարաւ մի տղրուկ
Ծառայելով իր գրպանին իբր քոհնա բազերկան:

Թառսիւնիս այս քանն է տեսնում իրա բնիկ երկրում
Որի ազնիւ գործիչները այս տեսակ են մշտական:

120. Մ Ե Զ Ա Ն Ո Ի Մ.

Զիմ իմանում ինչի տէր են մի քանի մարդ մեղանում,
Ոչ մարդկային գործումը կան, ոչ աղգային մի բանում,
Ոչ ազնիւ հողիւր կ'տածեն ոչ հասարակ ողինք
Եւ ոչ էլ մի գաղափարի տէր մարդիկ են անուանում:

Բաւական է մի պսպղուն ժեշտի կտոր ստանան
Կը շարժուին այնպէս, ինչպէս շահ նստած Թէհրանում,
Նա մանաւաղ թէ գիտենայ ռուսնակ գրել կարդալ,
Կսէ ինձ Ն-բէկ կանչեցէք կնօջս էլ խանում:

Վայ է րեզ թէ պատահելուց չի տաս այդ անունները
Մինչի ցմահ րեզ դաւաճան կմ'նայ դիվան խանում,
Ինչպէս Թառսիւնուս դաւաճան մ'նում է մինչ օրս
Մնում է և պիտի մ'նայ այդ ազաթ է մեղանում:

Գօրիսում.

121. Ո՞Վ Է Լ Ա Ի.

Ո՞վ է լաւ մարդը մէջը մեր երկրի
Եւ ով է վայելում պատիւ ու յարգանք,
Ով է հարցրէք ինձ ես պատմեմ ձիւ
Միշտ երկան հանեմ ամեն մի յանցանք:

Որովհետև ժողովուրդն եմ ահագին
Անթիւ ու անհամար նիւթեր այդ մասին,
Այնչ որոնք լսողին ու անգին
Պատկերացած է զիս հաստատ հրահանք:

Ով բնաւ գործ չունի ճշմարտութեան հետ
Նորան են անուանում աղնիւ շահաւէտ,
Թէ կուզ լինի վարակիչ մի չար աղետ
Ելի թանգ են կոչում առաւել քան կեանք:

Ով իրա մօր ծիծը կտրած վախած է,
Տունից տեղից հալածուած ու կորած է,
Ով գողութիւն արած, բանտում նստած է
Ունեցել է և միշտ ունի գովասանք:

Թառսիւնիս համառօտ խօսեցի այսքան
Վատերին լաւ անուն տալու հանդիման,
Այն է և այն էլ կմնայ մշտական
Ով սրտի մէջ մեռած ունի խղճմտանք:

122. Հ Ա Յ Զ Ի Ն Ո Ւ Ռ .

Նուէր նորակոչ հայ զինուորներին Գօրիս:

Գնայ, գնայ հայի տղայ հայ զինուոր
Նոր—նոր բաներ պիտի սովորես ամեն օր,
Թէ և մինչև քու գալը քու հայրենիք
Պիտի մնայ սգազգեստ սգաւոր:

Առանց բեզ էլ նա տխուր է քանի դար
Թողիր քանի ամ էլ գրել բեզ համար:

Ուր է որդիկ, ուր է մանուկ ասելով
Կսպառէ դալտեանդ անդադար:

Գնա հոգիս, ընկերից յետ մի մնայ
Իրաւունքդ լաւ պահպանիր լաւ զգայ,
Բացի այդ նոր ընտիր ինքնակամութիւն
Կակարդ էլ կունենաս ճակատիդ վերայ:

Գնա, գնա, վախ մի կրէ քո սրտում
Թէ ունիս Արամայ արիւն երակում,
Կուգայ մի օր նուագածու Թառսիւնին
Ձեզ պար կածէ հայրենիքիդ դաշտերում:

Գօրիս.

123. ՆՈՐԱԿՈՉ ԵՒ ՍԻՐԱՀԱՐՈՒԸՆ ՀԱՅ ԶԻՆՈՒՐԻ ՀՐԱԺԱ- ՐԱԿԱՆ ԵՐԳԸ.

Մնաս բարեաւ իմ նազելի, փայլուն արուսեակ
Հեռանում եմ տրտում տխուր մէկ ու միայնակ,
Գլխաքարչ ձեռքերս ծալած, կամքիս հպատակ:
Թողում եմ քեզ անմխիթար ով իմ զեղունակ:

Արի հոգիս միաբերան խնդրենք Աստուծու
Երկար ատեն միմեանցից չլթողնի հեռու,
Թէ և ամեն մէկս ընկած երկրէ երկիր
Օտարի հետ կամք չունենար սիրել սիրուելու:

Դու ինձ, ես քեզ սպասելով, երեք կամ չորս ամ
Ինձ կապշտէ իմ զէնքերը, քեզ քո բարեկամ,

Մինչ վերադառնալս իմ սիրուն հայրենիք
Յիշենք մէկս մէկու անուն, լացենք յարածամ:

Երանի տանք այն օրերին և այն ժամերին
Որի մէջ իրարու գրկած կ'շահուէնք կրկին,
Մոռցած ամբողջ երեք տարուայ քաշած տրտմութիւն
Եւ նորա մէջ անցկացրած ժամեր լալագին:

Մօտ արի հոգիս, Արուսեակ, համբուրեմ գնամ
Բաժանուելը մահից վատ է, դուցէ յետ չ'գամ,
Դուն էլ ինձանից պահանջէ համբոյրդ վերջին
Մինչ գալս կարօտ չի մնաս, ով իմ անթառամ:

124. Դ Ա Ր Ա Ի.

Վարի, վարի իմ խեղճ արօր
Իմ անպաշտպան աննեցուկ,
Վարի օրօր, օրօր օրօր,
Հոգամ ցաւերս յատուկ:

Մանուկ էի որ սածելդ
Մտայ առաջ տանելու,
Ձէի դիտում դարաւ տալդ
Միտք ունէի ուսալու:

Ամբուլ սաղկեի առանց մշակ
Մաճդ թուրքի ձեռք տեսայ,
Սերմնացանդ մէկ ու մէնակ
Տանջուելիս անխնայ:

Յորեն չունենք վարի չունենք
Միշտ լի տեսած ամբարում,

Բայց հիմա էլ հարկատու ենք
Խեղճ մնացած աշխարհում:

Վաղինակս կօշիկ չունի
Ձի շարժում, չի հաղ անում,
Շուշանիկս մաշիկ չունի
Դողդողում է դողդողում:

Գարեգինս մերկ տկլոր
Ձի հաճախում վարժատուն,
Տատանվում է ոլոր մոլոր
Մտնում այս տուն ու այն տուն:

Վարի, վարի իմ խեղճ արօր
Իմ անպաշտպան աննեցուկ,
Վարի օրօր, օրօր, օրօր
Հոգամ ցաւերս յատուկ:

Խնձորեսկ գիւղում.

125. ՄԷԿ ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ.

Խեղճ փոքրիկ աղջիկ
Ձիւնապատ չէմքում,
Առանցի մաշիկ
Միթէ չես մրսում:

Ձէ, չէ, չես մրսում
Դողդող, դողդողում,
Որովհետեւ ես
Շատ ցուրտ չես զգում:

Հարցրեցի ես
Ապա հէր այդպէս,
Կապտացրի ես
Քո սիրուն երես:

Մէկ հոգոց քաշեց
Ինձ պատասխանեց,
Աչքերից կից կից
Արտասունք թափեց:

Մէկ ոտաբոբիկ
Եկաւ ինձ մօտիկ,
Ասեց ինչ անեմ
Որբիկ եմ որբիկ:

Ով կայ ինձ համար
Շատերի յարմար,
Կօշիկներ գնէ
Որ հագնեմ, աղբար:

Բացի այդքանը
Եւ այնքան բանը,
Չոր ցամաք հաց էլ
Չի կայ մեր տանը:

Հիմայ լաւ իմաց
Ինչու եմ կապտած,
Եւ ինչի համար
Ոտերս բաց-բաց:

Այս խօսքի վերայ
Ստիպուած եղայ,

Սուս փուս հեռանալ
Չի տալ մի լուծայ:

Չի էլ խօստացայ
Որ ինձ Աստուած տայ,
Կուզարկեմ քեզի
Մէկ հացի փարայ:

Թողեցի կապտած
Շէմքումը կանգնած,
Երկար չի տեց
Լսեցի մեռած:

Գորիս աւանում.

126. ՕՐԳԱՆԻՍՏԻՆ ԳՕՐԻՍԻ.

Քանի մի բերք բռնես դու այդ օրգանից
Ուր սպիտակի տեղ ընդունելով,
Հալածուելով գիտունների շրջանից
Պիմակը դանակի տեղ ընդունելով:

Այդ վարմունքով Գօրիսում վատ կ'մնաս
Ցաւով լցուն, բայց անփարատ կ'մնաս,
Խելօքների անհամեմատ կ'մնաս
Փուշը մանուշակի տեղ ընդունելով:

Կայր մի պահիր քու պլիզիկ աչքերը
Պաշտպանելով աչքի հակապատկերը,

Անդեղ ու ճար կ'մնայ քո վերքերը
Մութը արեգակի տեղ ընդունելով:

Պայծառ է քո վատ լինելու նշանը
Ոչ յառաջադիմութեան աստիճանը,
Մօտ է, մօտ էլ կ'մնայ քո վախճանը
Տատասկը միխակի տեղ ընդունելով:

Խոհեմութիւն ազնուութիւն չես թողել
Խելք գիտութիւն իմաստութիւն չես թողել,
Աշխարհի մէջ բարի անուն չես թողել
Խաւարը լուսնեակի տեղ ընդունելով:

Պահելով պաշտպանելով այդ օրինաց
Ոչ ազդութեան շահ կուտաս, ոչ հայրենեաց,
Ասել կուտաս քեզ երկրորդ ազգութեաց
Վարդանը Վասակի տեղ ընդունելով:

Մի պարծենար պաշտօնով քարտուղարի
Մի հատ հրեշ դառնալով մեր աշխարհի,
Նմանացնող շատ կ'լնէ քեզ յիմարի
Աղասին, Փառնակի տեղ ընդունելով:

Երկրի մէջ մարդ եղիր, մարդաւարի
Ասող խօսող մենակ դուն ես ոչ բարի,
Ել մի տաժիր ծուռ մտրի գաղափարի
Ազաւը սոխակի տեղ ընդունելով:

Պաշտպան եղիր մարդահաճոյ վարմունքի
Տէր եղիր լաւ սկզբունքի, բերմունքի,
Մի աջակցիր վնասակար շարժմունքի
Նոր-դարը Մշակի տեղ ընդունելով:

Եկ, հասկացիր ասածները Թառսիւնուն
Ոչ նեղութիւն համարի ոչ դառնութիւն,
Մեղը համարիր վատին մի կոշիւ սիրուն
Իմ թառը թութակի տեղ ընդունելով:

127. ԿՈՅՐԸ ԿՈՅՐԻ ԴԱՐԴԸ Կ'ԻՄԱՆԱՅ.

Երբ շատ է լինում գրպանումս փող
Ամեն մի գործս ըստ կարգին յաջող,
Այն ժամանակը ես չեմ ճանաչում
Դռանս կանգնած թշուառ մուրացող:

Թէև ոտը ձեռքը սառած փայտ դառած
Խնդրում լինի մի կտոր չոր հաց,
Բայց ես այդ տեսակ չեմ ուզում տեսնել
Թեքերը ծալած կրծքին կպցրած:

Բայց երբ լինումեմ տրտում ողբալիս
Հոգսերով լցուած սգալիս լալիս,
Այն օրն եմ ուզում տեսնել այն խեղճին
Որի մասին ձեռքովս մի բան չի գալիս:

Այսպէս եկել է այսպէս էլ կերթայ
Թէ կուզ աշխարհս իրար վրայ գայ,
Ով ինչ խօսումէ ունայն յոյսեր է
Կոյրը միշտ կոյրի դարդը կ'իմանայ:

128. Խ Օ Ս Ա Լ Գ.

Ոչ մի բանդ ինձ դուր չի գամ, բարեկամ
Նա մանաւանդ ասելդ ու խօսարդ,
Սյդ մասին էլ վատ եմ վարդուում ամեն ժամ.
Ձի սիրելով ոչ գնարդ ոչ գալդ:

Բնութիւնդ յարմար չէ իմ բնութեան
Ինչ անումես խորթ է երևում համան,
Խեղճ եմ, թող չի տանջուեմ այս դրութեան
Յայտարարիր այս տեղից հեռանալդ:

Մնաս էլ մօտս չես ունենալ պատիւ
Պիտ տատանուիս որպէս կոտորուած անիւ
Ձես ունենալ հանգիստ գիշեր խաղալ տիւ
Որովհետեւ շատ վատթար է ավհալդ:

Մի սպասիր որ քեզ ասեմ ամեն բան
Ատելով միշտ ատեմ շատերի նման,
Եթէ մարդ ես, չուտ հեռացիր այս տեղան
Թող չ'լսեմ բարձր բարձր հաղալդ:

Թառսիւնիս այսպէս եմ խօսում այս տեսակ
Չունենալով քեզ պահելու նպատակ,
Որովհետեւ այլանդակ ես այլանդակ
Ոչ նստելդ է սիրուն ոչ մանգալդ:

129. Ջ Ի Ի Ա Ն.

Իրաւ է Ջիւան, ընկեր է առաջին սէրը մարդուն,
Պարգէ է թէ տայ գեղեցիկ ընկեր Տէրը մարդուն
Ընկեր գեղեցիկ ունեցող անյաղթ ունի քաջ բաղդ
Գեղեցկացնող միշտ մաշուած պատկերը մարդուն:

Ազնիւ ու խոհեմ զգայուն ընկերը աշխարհում
Անբոյժ չ'թողնել ամենին վերբերը մարդուն,
Տրտում տխուր վշտահար թողնելու փոխարէն
Արեւից տւել կը ցոլացնէ աչքերը մարդուն:

Ինչքան ծանր գործերի ձեռք բերելու ջանայ
Հոգնել չէ բնաւ գործունեայ ձեռքերը մարդուն,
Աղատող ահից ու դողից, գողից աւագակից
Թառսիւնի գուսան, ընկերն է զէնքերը մարդուն:

130. ԱՅՍ ՏԱՐԻ ԳՕՐԻՍՈՒՄ.

Մէկ քանիսի վարք ու բարքը այս տարի
Ինձ տանջում է անբուժ մի ցաւի նման,
Հանդիպելով ամենայն մի տխմարի,
Վառվռում է սիրտս չոր դաւի նման:

Ամիսներով նստելով վեր կենալով
Շատ դարդ շատ ցաւ շատ բաներ իմանալով,
Ամենայն մի հարուածի դիմանալով
Կարծես վերաս սար կայ մռաւի նման:

Ում չեմ տեսել, մինչ տեսնել կարօտել եմ
Սպասելով ես ինձ խոր խոցոտել եմ,
Փորձ համարած շատին հետազօտել եմ
Սիրամարգին արք շունի չալ հաւի նման:

Այն էլ իմ լաւ համակրած Գօրիսում
Ամեն տեղից լաւ համարած Գօրիսում,
Թառսիւնուս միշտ սիրած պաշտած Գօրիսում
Սոխակին գին շունի աղաւի նման:

131. Մ Ա Ր Դ.

Հետեւելով մեզ պարզեցած օրինաց
Ողջին սիրէ առանց ազգի խտրութեան,
Միայն նորանց, որոնք կ'սիրեն սրտանց
Եւ որոնք կ'մնան քեզնից անբաժան:

Սիրիր նորան, ով որ քեզ կարեկցող է
Ամեն մի բան իմացող հասկացող է,
Ոչ թէ նրան, ով անուն մրոտող է
Վասակի պէս իրա ազգի դաւաճան:

Սիրիր քո ընկերին ինչպէս քո անձը
Գործ մի գնիր ոչ քենը, ոչ նախանձը,
Միշտ ունեցիր այդ միտքը այդ թախանձը
Որպէս պարտաճանաչ, Թառսիւնի գուսան:

132. Գ Ո Ւ Ս Ա Ն.

Ինչից է բան հասկացող մարդիցը միշտ գանգատում են
Մէկ վատ անուն լսելով մէկին հազար հաստատում են,
Զքնադաշէն խօսքերը չի զգալով տգէտները
Խօսում են բանբասում են վնասում են միշտ ատում են:

Էլ ինչ կեանք, ինչ օր բանիմաց մարդին ինչ հանգստութիւն
Քանզի նորան աշխարհից կործանելու աշխատում են,
Մեծ թէ փոքր միանուագ իրար մէջք մէջքի տուած
Մահապարտ է, կախէք դորան, գողում ու աղճատում են:

Այո է մեզի ընդունարան Թառսիւնու սիրած գուսան
Որի մէջ ինձ ու քեզպէսին ինչպէս ուղեն դատում են:

133. ԼԱԻ ԵՍ ԱՍՈՒՄ.

Ինչ ասես ասելու եմ, լաւ ես ասում
Վատ էլ լինի բնաւ չեմ ասելու վատ,
Պարզ խօսելով հեր եմ սրտիդ վնասում
Դարդս անճար թողնում, ցաւս անփարատ:

Թանին մածուն ասես, մածունին էլ թան
Լուելու եմ, չեմ խօսելու հանդիման,
Ամեն խօսքիդ տալով յարմար պատասխան
Մաղանջուկին պիտ անուանեմ Արտաշատ:

Կօրու գիւղին պիտի անուանեմ Մոսկով
Պատերը սուղաղած արծաթով ոսկով:

Կամ Փարիզի պէս զարդարուած մի խօսքով
Ձեր տունն էլ իբր կանգուն մի պալատ:

Ձեր զետակին պիտի Հերար անուանեմ
Հերարին, Արարսի յարմար անուանեմ,
Քեզպէսներին Սիւնեաց տիպար անուանեմ
Ձեր թումբերին որպէս բարձր Արարատ:

Ճշմարտութիւնը այսպէս տալով ոտրի տակ
ձերմակին սև, սևին պիտ ասեմ ճերմակ,
Վասակին քաջ Վարդան, Վարդանին Վասակ,
Մեհրուժանին Բաղրատունեան քաջ Սմբատ:

Այսքանով Թառսիւնիս քեզ մօտ ճշմարիտ
Կարծեմ մի հատ մարդ կ'լինեմ պարզամիտ,
Մարգարտին աղբ, աղբին ասող մարգարիտ,
Փառնակին ազգասէր որպէս Միհրդատ:

134. Գ Ր Ո Ղ Ի Ն.

Ափսոսիր թանաքին, ափսոսիր թուղթին
Ափսոսիր մեծանուն, ազնիւ գրիչին,
Որը ծառայելով քեզ պէսի ուխտին
Հալուել է մոչուել հասել հաստիչին:

Բան գրողին սկզբունք է հարկաւոր
Խելք գիտութիւն զգացմունք է հարկաւոր,
Մարդահաճոյ համոզմունք է հարկաւոր,
Որոնք պարգևներն է Արարիչին:

Թէ խելք ունես նախ այսքանին փափագիր,
Միտքերիդ զարկ տուր քեզի օժանդակիր,
Ինչ լուծ ես թողովիր հանգանակիր
Խօսքը լսած Ձեր Թառսիւնի երգիչին:

135. Հ Ա Տ Ա Խ Օ Ս.

Շատ իմանում ես քիչ խօսիր
Հետեւած քեզանից լուրջին,
Անցած օրերդ ափսոսիր
Ես հայ ճանանչի, ես գուրջին:

Նստէ վեր կաց մարիփաթի
Քիչ խօսիր հազար բարաթի,
Ինձ գլուխ չունեմ երկաթի
Որ զիմանայ ըո այդ մուրճին:

Անգամ աչք ունր բաժանելինս
Կզակ շրթունք բաժանելիս,
Խելք ու շնորհք բաժանելիս
Քեզ չեն տուել պարկ ու խուրճին:

Տունի միջում բոլթայ տալով
Կատուի նման մոմաւով,
Սաք ու ձոր մէկ մէկու տալով
Դուն չես դառնալ Միսկին-Բուրջին:

Մի կարծիր շատերի նման
Քեզ կուտան պատիւ գովասան,
Կամ կանուանեն անհատական
Ինչպէս Սայադը Թորունջին:

Դու քեզ կարծելով Հոմերոս
Օհանների հերետիկոս,
Ոչ տեսանես Յգիպտոս
Թառսիւնուս պէս սիրով սուրճին:

136. Չ Լ Ե Ա Պ Ա Ն.

Խելօք գլխիդ սև մաղերիդ ինչո՞ւտէ ծուռ շինապան
Որի ձեռքից խղճացել է լուսաւորուած Եւրոպան,
Իրանց ձևած, իրանց կարած, իրանց հնարած գտած
Ան տէրն է, իրանց չէ պէտք ինչպէս քեզ ուլ աննման:

Հանիր հագիցդ չալտիր, քանի խորթ է թուում քեզ
Թող ազատ օդ, ազատ օրեր տեսնէ մինչի յաւիտեան,
Թքիր վերան տուր գրացուդ, քեզ կաշկանդող այդ լաթը,
Որի միջում հաստ թևերդ, բարակում է մշտական:

Առանց այդ էլ քիչ չէր ծանր, մէջքիդ կապած միւս չորեր
Որի մասի խեղճ է ապրում, քո սիրտկան հայ տղան,
Ուրեմն լսիր քո սիրած Թառսիւնու ասածները
Փափուկ մարմնիդ, չինար բոյիդ, թող չի տանջէ այդ մօղան:

137. ՈՍԿԻ ԽԱԶ.

Վզիդ կախած ոսկի խաչին ես մատաղ
Աչքիդ, ունքիդ, երկար բոյիդ սաղ աշխարհ,
Լայն թիկունքիդ, վարդ երեսիդ ես մատաղ
Անուշ անուշ խօսքերիդ բալսի բուխար:

Որովհետև ունիս արժանաւորութիւն
Այդքան գովեստ, վայելելու, ուլ սիրուն,

Աշխարհի լաւերուն գեղեցիկներուն
Դիտաւորը դուն ես որպէս մի տիպար:

Ել ասելու, լսացնելու չունիմ բան
Որ աշխարհի տգէղները իմանան,
Թառսիւնուս մօտ աննման ես, աննման
Աննման էլ պիտի մնաս ուլ սիթար:

138. Ն Ո Ի Ն Ո Ի Փ Ա Ր.

Մէջքը բարակ բոյը երկար
Ունքը կեռ թիկունքը լայն,
Հայի աղջիկ, իմ նունուփար,
Քեզ սիրեցի ես միայն:

Քեզ տեսնելու, զիտէ Աստուած,
Թէ ինչեր եմ երազում,
Վաղ միւս օր միտքս առած
Նուագում եմ, նուագում:

Իմ նունուփար իմ անգին վարդ
Քայլէ դէպ ինձ անհանդոյրժ,
Վերաս դիզուած ամեն մի դարդ
Մի թող անդարման, անբոյժ:

Բացի քեզնից էլ ուլ ունիմ
Որ խնդրեմ, ուլ սիրուն,
Քեզ պիտ դիմեմ, որ ճար գտնեմ
Իմ անհամար ցաւերուն:

Որից քաջ Վարդան
Արամ ու Տիգրան,
Ստացան հռչակ
Անուն պատուական:

Թող այդ վայելի
Որդին Յարութիւնի,
Տիպարը եղած
Գորիս աւանի:

Բացի քեզ, ով տէր,
Ո՛վ կայ անհուն սէր,
Արամ մանուկի
Փրկարար հեր մեր:

142. Հ Ե Ռ Ո Ւ Ն Ս Տ Է.

Հեռու նստէ, փէշդ փէշիս չը կպնէ
Ինձ է ասում Ղարաբաղցոյ Օհանը,
Որը նոր նոր բան կառնէ բան կը ծախէ
Թափուր թողած ջիւղերնների շրջանը:

Սպիտակին սե սիին ուղիտակ ասեց,
Թանին մածուն ասողին չհակասեց,
Այս մի խօսքով թարմ սրտիս վնասեց
Թուրեց գնաց, Գորիս կոչուած աւանը:

Այո Թաւսիւնուս պէսին վատ անուանեց
Իր նմանին անհամեմատ անուանեց,
Իրան հարուստ ինձի աղքատ անուանեց
Խնձորէսկու շառլատան բաղերկանը

143. Ո Վ Մ Ե Ծ Ա Հ Ա Ն Ճ Ա Ր.

Ումնից ես, ում տոհմից ով մեծահանճար
Որ Արցախցւոց նուիրեցիր կեղծ անուն,
Օրը մի զոյգ մոմ կայ պատրաստ քեզ համար
Թէ ճանաչեմ գերեզմանդ, ով գիտուն:

Որտեղ նահատակուար որտեղ ես թաղուած
Շիրմիդ վերայ մի բան չկայ կառուցուած,
Քանի քանի բանաստեղծների գրուած
Կորել գնացել են, իսկ քունը փայլուն:

Ով չէ յիշում ով յարգում համակրում,
Ով չէ միշտ գործածում և մտաբերում,
Այն օրուանից մինչև օրս շատ երկրում
Անվախճան է յիշատակդ աննկուն:

Անվախճան էլ դեռ կը մնայ քանի դար
Թէև նոր մեթոդների անուանեն սատար,
Տածած, նոր միտք, նոր գաղափար, նոր հանճար
Փաստ շատ ունի դեռ յիշելու Թաւսիւնուն:

Շուշի քաղաքում.

144. Ա Զ Գ Ա Ս Է Ր.

Լեզուով խօսածներս թէ ձեռքովս գար,
Հարենիքիս աւերակները կը նորոգէի,
Ոչ թէ բեխ սրելով մանգուգամ բուլվար
Եւ ոչ թէ նոցա մագերս կը կոկէի:

Ոչ թէ մէկի հետ թի թի տուած

Բոլորի կուտայի կարատուելով:

Ոչ թէ օրը մէկ տեսակ շոր հագած

Մանկուպայի ես վրիթուելով:

Ոչ թէ ֆնատնոց ժամացոյց սրտին

Քարշ կտամ, մանգամ փողոցից փողոց,

Ոչ թէ քսան հատ մատնիք մատերին

Կը շարեմ տանջուեմ ձեռքի տակ այլոց:

Ոչ թէ բեռ բարձած մէջրիս, արծաթի

Գոտիկ կը կապեմ, եղբայրս բոբիկ,

Ոչ թէ կը լսօսեմ հաղար բարաթի

Խորոտիկ քոյրս առանցի վոտիկ:

Ոչ թէ հարիւր հատ բաշիք ծոցումս

Ամուր կը պահեմ մեր դուռը կոխալած,

Ոչ թէ հազարներ հիւրանոցումս

Կը վատնեմ իզուր, հարեանս բազցած:

Ոչ թէ կը շինեմ շտեմարաններ

Գիւղեր անդալոց, գետեր անկարմունջ,

Ոչ թէ կը քայլեմ հանգիստարաններ

Թողած հայրիկս մայրիկս տրտունջ:

Ոչ թէ սաղ գիշեր ճախ քնարներով

Օրս կանցկացնեմ, նայած իմ քիփին,

Շրջապատուած տունս վարդերով

Ձեմ էլ մտածիլ ինչ օգուտ հային:

Ինչ օգուտ հային, հայի այն տղին

Որը աղգաշահ մտքով է տանջվում,

Իր սիրած ազգի սերելի որդին

Տեսնելով յիմար գործերի միջում:

— այստեղ իմ խոսմանս քննադատական արձագանքները —
145. Ի Մ Վ Ի Ն Տ Ը:

Նազելի բրոջս վաղաթառամ Կոնստանտին որդու անմուտնալի
յիշատակին, որը զոհ գնաց խօլերային Սև քաղաքում, Կասպեան ընկե-
րութեան նաւթագործարանում: 1892 թուին:

Ն Ի Ր Մ Ի Ն:

Ուր ընդ տխուր այս ցուրտ շիրմի հովանեաւ

Անբաղդ Կոնստանդ Սև քաղաքում ի Տէր հանդեաւ,

Թէև ծնունդ լեռնառատ Սիւնիքի

Ապա հատուած առտ զոհ գնաց շատ ծարաւ:

Այս աւագոտ ծովափին Սև քաղաքի

Ձէ պատուարեր պէս մի զգուն բաջարի,

Որը պարծանք տոհմին իւր ու մեր համակ:

Մինչ արիութիւն թիւակոխեր ի հասակ:

Կոչեաց զնա յերկնուստ ի ձայն Արարչին

Անցնել ծրարել երկնից խորան լոյս արփին,

Սակայն ի սուղ անմխիթար աշխարհի

Հայր մայր եղբայր բոյր աղգական կմարի:

Հոգիս Կոնստանդ, արիաջան քաջ զաւակ,

Սիւնեաց վիթխարի երկրի գեղունակ,

Արցունք թողիր անձրևի պէս յորդառատ

Իմ աչքերին յուերժ անջինջ յիշատակ:

Մ Ի Ն Ա.

Հակառակորդներին լսելով ինձանից հեռանալով իմ տալա-
ւորութիւնները այդ մասին, միայն հետեւեալ երգերի մէջ է
պարունակուում:

146. ԴԵՌ ՄԱՆՈՒԿ ԷԻՐ.

Դեռ մանուկ էիր, ոտերդ բոբիկ
Քիթդ լալնոտ, մէջրդ անգոտիկ,
Սպիտակ դոմի դռան քիչ խօսացրի
Տեսի ինձանից շատ շատ ես մօտիկ:

Այն րոպէին կայծակի ուժով
Մի կայծ իմ սրտին իսկոյն հարուածեց,
Փաթաթուեց ամուր իմ մանուկ կամբով
Սիրոյ շանթերով ինձի ըայքայեց:

Շատ օր չի անցած, մէկ ու միայնակ
Ազմահլան հկիր գուլպայ ձեռք առած,
Մերկ պարանոցով առանց թաշկինակ
Փափուկ կափերդ սպիտակ բադ, բաց:

Ես էլ քեզ նման մէջ երեխայոց
Թէն քո սիրոյ կապերով կապուած,
Ցոյց էի տալիս փողոցից փողոց
Սի քերձի տակը աչքի տակ առած:

Մէջ երեխայական հլու զգացմանց
Հերոս եղած էր Խնձորիսքու մէջ,

Պահում պաշտում էր դադսնիքներ սրտանց
Սրբազան սիրոյ կրակը անչէջ:

Թէն քիչ հեռու, բայց զգում 'ի որ
Տածում ես սրտանց մի մեծ սկզբունք,
Թէն մնացած ոլոր ու մոլոր
Քեզ կաշկանդել էր իմ աչք և իմ ունք:

Որոնք քեզ համար իբր գրաւիչ
Լաւ էակներին յիշեալ գիւղում,
Անոյշ քոյրդ էլ նայում էր քիչ քիչ
Սէրը մեր սէրի հետը շաղաղում:

Այդ էլ բնութեան օրէնքներից է
Ունի դրան Տէր ունի ստեղծող,
Ունի նպաստող բան որեւիցէ,
Վարդը առանց փուշ լինել չի կարող:

Օրեր ու ժամեր, շաբաթ ու ամիս
Քովէ քով իրար սահում են արագ,
Մէկ մէկ ձեր տունը դնում 'ի գալիս
Խալիսի ասելով առանց նպատակ:

Բայց ես, ոչ արդէն ուխտ էի արել
Որ քեզ ճանաչեմ իմ հոգի իմ կեանք,
Այդ մասին գիտութեամբ ուշք 'ի դարձրել
Մեղում թափումի ամեն ճիգ ու ջանք:

Մանաւանդ երբ դու և Անուշը
Ինձ տեսնելուն պէս զուգում 'իք պարում,
Իսկոյն հանում 'իք իմ սրտի փուշը
Եւ ես աշխարհս իմ 'ի համարում:

Բայց զգո՞ւմի, որ կոզայ ժամանակ,
Երևան վազան չար ոգիները,
Կը թափեն դիտմամբ մեր գլխին կրակ,
Ոտի տակ տալով իմու բո սէրը:

Այո, զգո՞ւմի չար բաղդի կամբը
Մէկ օր կ'ընդունի քեզ ինձ սրտաբէկ,
Քար դարձնելով շատի խնամբը
Մէյդան հանելով դաւաճան մի բէկ:

Դեռ մանուկ 'ի, ունէի մանուկ կեանք
Մանուկ զգացմունք, մանուկ մտածմունք,
Գուշակումի որ իմ ու բու տանջանք
Այդ քանի արթիւ չ'ունենալ արդիւնք:

Ա՛խ այն օրերը, երբ Անուշի հետ
Երկու գութ, մէկ են իրար ինք փարում,
Ես կարծում էի, թէ մի հատ սուր նետ
Իմ թարմ սրտում գործ է կատարում:

Հեռացայ քեզնից, թերի թողի բան
Երեք չորս տարի աչքիս տակ առած,
Քանզի անուշիկ քոյրդ էր արժան
Իր քեզանից մեծ մի արարած:

Նա պիտի զգար այդ պաղափարը
Համապատասխան իրա հասակին,
Ծուռ էր որոշել այդ ճանապարհը
Հասնելու համար իր նպատակին:

Քանզի յոյս ունէր ինձ հետ կապուելու
Այն էլ կրօնական ամուր կապերով,

Այդ թախանձանքին ինձի դարձնելու
Սմին մի հնար գործում էր խիտով:

Նորան թողելը, քեզ մօտ կենալը
Յարգ չի համարում աննման Սինայ,
Այդ մասին եղաւ իմ հեռանալը
Որ քանի տարով կորայ, անխնայ:

Գնացի եկի, եկի զնացի
Մէկ փոփոխութիւն երբէք չզգացի,
Մէկ օր էլ դիտմամբ, քեզ պատահեցի
Անգութ նէ, բէկի ձեռքով նետուեցի

Հեռացայ քեզնից սիրտս բէկուած
Մինչ օրս խաղաղ հողիս վրդուլուած,
Գոչելով քեզի անգութ արարած
Ապրաշ Ազիզից, Զառուց գրդուած:

Զիլփին էլ այդ տեղ, շատ անխիղճ եղաւ
Քեզի դոստ գալով, ինձի դաւաճան,
Յոյց տալով փեսայ, լինելու համբաւ
Օժիտ պահանջեց, քանի մի թուման:

Ուրեմն յարգիր երկիրը Կասպեան
Գիրկը ընկզմուած խոհարար Թինուէն,
Մոռացած նորան որին միշտական
Սրտով սիրել ես համբուրել թաքուն:

147. Ի Մ Կ Ա Ր Ծ Ի Ք Ն Ե Ր Ի Ց.

Ես կարծում էի թէ քեզ սիրելով
Կը շինեմ դրախտ ինձի օթևան,
Բայց չէի դգում, ունայն յոյսերով
Կը նուիրես խեղճիս վշտեր զանազան:

Ես կարծում էի թէ դու հոտաւէտ
Ծաղիկներից ես, ընկած վարդարան,
Բայց չէի կարծում ամեն մի աղետ
Պատրաստած ունես ինձ համար համան:

Ես կարծում էի թէ դու հովահար
Զեփիւռիկն ես, հնչող զովարար,
Բայց չէի կարծում անխղճմտաբար
Ինձ պիտի տանջես մաշես չարաչար:

Ես կարծում էի դու մի հատիկ
Չնաշխարհիկ ես, մտած Զանգեզուր,
Բայց չէի կարծում թէ լռիկ մունջիկ
Սիրտս պիտ լափես թողնես ինձ տխուր:

Ես կարծում էի թէ դու արուսեակ
Աստղիկն ես փայլուն անխաւար,
Բայց չէի կարծում թէ դու մոլորակ
Աստղներից ես գեշ ու անկայտառ:

Ես կարծում էի թէ աշխարհիս վերան
Ինձնից բարեբաղդ չ'կայ մի հատ մարդ,
Բայց չէի կարծում քեզ նման Մինան
Պատրաստած ունի ինձ համար թակարդ:

Ես կարծում էի թէ քեզ վերաբերեալ
Կրած պանջանքս չ'անցնիլ ապարդիւն,
Բայց չէի կարծում սխալ անսխալ
Նորից կը սիրես խոհարար Թիւնուն:

Ես կարծում էի թէ ե շատ բաներ
Սրտիս մէջ լցուած սէրի օգնութեամբ,
Բայց չէի կարծում ազիզ մազիզներ
Քեզի կը խլին անաստուածութեամբ:

Ես կարծում էի թէ դու ունես սէր
Սէր երջանկութեան, սէր երանութեան,
Բայց չէի կարծում ունես կեղծիքներ:
Կարօտ շատերի կեղծ երանութեան:

Ես կարծում էի թէ դու գիտութեան
Շտեմարան ես լցուած, մինչ բերան,
Բայց չէի կարծում թիւրիմացութեան
Տիպարունին ես ինքդ ըստ ինքեան:

Ես կարծում էի թէ դու մատղահաս
Աղջիկներից ես գեղեցիկ, սիրուն,
Բայց չէի կարծում ամեն մի Մանաս
Ծոցդ մտած է համբուրած թաքուն:

Ես կարծում էի թէ դու անուանի
Մի բան կգառնաս առաւել քան դանձ,
Բայց չէի կարծում շատ Աղաբանի
Ջուրդ հանած է չամիչ ու աղանձ:

Ես կարծում էի, այո, կարծում էի
Կարծում էի քեզ, հարս հաւերթական,

Բայց չէի կարծում ամեն զգուշացումով իմ հետեւիս
 Կանուանես քեզի ազնիւ սիրական: սգմարմար ճաղ
 Ես կարծում էի ոչ թէ այս քերկրում
 Այլ թէ աշխարհում թանկ եմ քեզ համար,
 Բայց չէի կարծում և չէի զգում
 Թիւններէջ էլ ունիս սիրահար:

148. Մ Ի Ն Ա.

Ես ոչ խան եմ, ոչ խանացու
 Ոչ բէկ եմ դալթարխանում,
 Որ անուանեմ քեզ փեսացու
 Անունդ դնեմ խանում:

Միայն մի անձ եմ եռանդուն
 Ազգի սիրով երջանիկ,
 Թէ կը սիրես դու այդ հոգուն
 Անունդ կը մնայ Աստղիկ:

Ահա քեզ երկու բացարձակ
 Լայն ճանապարհ ու Մինա,
 Սիրիք նորան որին չիտակ
 Հասկանում ես անգինայ:

Բաւական է որքան մենակ
 Նստեցիր սգալի տան,
 Յարկէ աշխարհի նստատակ
 Քեզից մեծ քրոջ նման:

Թող քեզանով մի տիրալ բեկւած
 Ստանայ մի ընդհարում,
 Որը մինչ օրս քեզ սիրած
 Տանջուել է աշխարհում:

Ուրեմն առ, մատդ ձգիր
 Իմ թանգակին այս նշան,
 Վատ էլ լինի լաւ համարիր
 Արժանի կարծած համան:

Հետ այնու որքան էլ տառափիկ
 Քարասիրտ հանդիսանաւ,
 Այդ ինձ չէ փոյթ, ու զեղեցիկ
 Աստ պիտի գուծ ունենաւ:

149. Ա Զ Ի Զ Ի Ն Ք Ա Լ Ի Ն.

Ինձի երգիչ է ասում, Ազիզին Քային
 Իրան վաճառական և աղա Քալուստ,
 Շանը ռեխին եշեցէք, չի հասկանալին
 Ասածներս չի էլ հասկանում ներբուստ:

Խալխի փողով դառել է վաճառական
 Չեւք բերիլ քանի թուփ, կտաւ ու քաթան,
 Մէկ օր Մահմուդում, հինգ օր Սիսիան
 Օրերը կորցնելով առանց հագուստ:

Անունն էլ աղա է հրատարակել
 Պատահով տունը տեղը կրակիլ,
 Չեմ հասկանում, ինչ արել ինչ մշակել
 Խալխի փողով իրան կարծելով հարուստ:

Մէկ հատ աղջիկ ունի, քաշել է մէյդան
Տամ գինու արաղի, լաւում մշտական,
Որը մեծացել է դառել պղկաթան
Տկերի մէջ լրկլրկալիս անդրուստ:

150. Հ Ա Ս 2 Ը Հ Ա Ս.

Մինան չհաս ա
Անուշը հաս ա,
Թող այդպէս լինի
Ինձ ինչ վնաս ա:

151. Յ Ի Մ Ա Բ.

Յաւերժական տանջանքների
Մեծ տունն է այս աշխարհ,
Ոչ թէ մի հօր հաստ ճանկերի
Մէջ դու հաղաս ով յիմար:

Որը քեզի բնաւ լաւ բան
Ձի ցանկանում ունենաս,
Դու ինքդ էլ ըստ ինքեան
Ձես զգում օգուտ, վնաս:

Թէև նա քեզ խնամատար
Հայր է կոչուում մշտական,
Բայց նա ունի ջոկ գաղափար
Դէպի իր դադարի գրպան:

Հասկացիր ինչ է իմ ասած
Ով անշնորհ անհիշու,

Հայրդ քեզի ծախս է բռնած
Իբր քոհնայ վաշխառու:

Քեզնով կուգէ իւր ապագան
Բարւոքել կարողանայ,
Քանզի միջոցը նիւթական
Դարդակել է անխնայ:

Հէնց այս մասին բարոյական
Նորան չունի մի անկիւն,
Որ ծառայէ արդարութեան
Պաշտպանելով կարգ կանոն:

Պրեմն, զուր է, որ կսեն
Հեռու Մելիքանց կտրից,
Ափսոս Մինա, որ գրկել են
Փւր կուսական քայլերից:

Կարելի է բամբասանք է
Իբր մարդի չար ոտիս,
Բայց ինձ համար մի տանջանք է
Երբ մարդ չատ կայ հաւատող:

Սկնից է գալիս միշտ լուր
Հարս աղջիկով, անդադար,
Մինի գոյնը թառամել է,
Էլ այնպէս չէ ինչպէս կար:

Սյուքանը լաւ հասկանում են
Խօսքաշէն մեր գիւղացիք,
Սյս մասին քեզ անուանում են
Գիւղի մէջ ոչ գեղեցիկ:

Ուրեմն դու խախտուել ես
Ել չես կոյս և անարատ,
Այդ մասին էլ ինչ ասեմ ես
Ափսոս իմ սէր իմ խրատ:

Դէհ, ուրեմն կորիր, գնա
Կեցիր նորա շրջանում,
Որը քեզի մարուր կը զգայ
Անմեղ մի գառ աշխարհում:

Իմացիր ինչ է իմ ազած
Ինչ է իմ նախադասած,
Շատ սիրելուն չատ ատել կայ
Այդ պապից է մհացած:

152. ՏԱՍՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ.

Ափսոս իմ տաան մէկ, տաան երկու տարի,
Որ անտեղի փշացրի քո մասին,
Քամերս վառնեցի, օրս սե արի,
Ունեցածս քշացրի քո մասին:

Հասկանալով կատարեցի ամեն բան,
Որպէս քեզի սրտով սիրող սիրաբան,
Մինչ օրս հետեւելով այդ դոյութեան
Շուն, գել, վրաս հաջեցրի քո մասին:

Բաղմացնելով չարակամիս թիւր գէշ,
Ինձնից աւել պատիւ տեսաւ ամեն էշ,
Ունենալով քեզ պէս անխելք մի հրէշ
Ցաւ ու դարդս շատացրի քո մասին:

Զիմանալով մի հատիկ թշուառական
Արարած ես, ամեն կոշումի տրժան,
Մէկ օր Մանաս սիրելով, մէկ օր Թինան
Թանգ օրերս վատացրի քո մասին:

Քեզ սիրելով ամեն ցաւի տիրացայ,
Յարգ ու պատուից ընկայ ու ստորացայ,
Զարակամիս մօտեցայ, բարեկամացայ
Բարեկամիս եղացրի քո մասին:

153. Ա Զ Ի Զ Ի Ն Մ Ի Ն Ա Ն.

Մինչ օրս ինձ սիրող Ազիզին Մինան
Այժմ ինձ նախատում է ու հալածում,
Հեռանալով ծննդավայր Խ. շինան
Թանկ սէրը Գօրիսի մէջ է տարածում:

Բաժանում է իւր նախկին սիրերանից
Կարծես խորշած ամեն վայելուչ բանից,
Անջատուելով իր սիրած սիրեկանից
Թինանի, Մինանի կեղծ սէր է տածում:

Վայելչութիւնը նրանց մէջ է նկատում
Բուժում վէրքը, ցաւը դարդը փարատում,
Թողնում է սիրելուն, իսպառ նախատում,
Ոչ խորհում է, ոչ քննում, ոչ մտածում:

Երջանիկ է համարում իր նմանը,
Թէ կմտնէ այնպիսիների շրջանը,
Այս մասին էլ նորա ամեն մի բանը
Ով հասնում է միայն նա է արածում:

Ահա այս է վարք ու բարքը իմ Մինուն
Թէ և մոռցած, իր շատ սիրած Թառսիւնուն,
Որը համակրելով աշպաղ Թիւնուն
Փթած սէրը գէպ նորան է արծարծում:

154. Ս Է Ր Ը.

Սէրը մարդուս գիտութիւն է ներշնչում,
Իսկ յիմար աղջկան անգղամութիւն,
Որովհետեւ նորա սրտի խորքերում
Կայ խաբուսիկ մի խոշոր փոփոխութիւն:

Աչքով ունրով գրաւիչ է ձեանում,
Կեղծ թէ անկեղծ միտքը զգալ չես կարում,
Երբ փողի ձայն գլխանումէ չի լսում
Յայց է տալիս մի առանձին դառնութիւն:

Սկսում է հեռանալ կամաց կամաց,
Մէկ քանիսին, քեզ հետ աչքի տակ առած
Մէկին ներքուստ, միւսին սիրելով սրտանց,
Չորրորդին համբուրելով թաքուն թաքուն:

Այսպիսիների սէրը թան է, ոչ թէ սէր,
Թթու ամեն բանից աշխարհաւեր,
Այսօր քեզի վաղը միւսին է ընկեր
Քանզի ունի, մազից կախուած կարգ կանոն:

Մի խնձորը գրաւիչ կ'հանդիսանայ
Քան թէ հազար մանկութների թանթանայ,
Ով փորձ չ'արել, թող փորձ անի իմանայ
Այս անգամ խօսքը լսելով Թառսիւնուն:

155. Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն.

Ի՞նչ ես տանջում քեզ հոգսի տակ, վաճառական հայ տղայ
Ամեն բանի համար ատեան դուրս գալուց ինչ օգուտ կայ,
Սուտ չեն ասել, փորձուելով առակախօս մեր նախնիք
Մօրը տես աղջիկն ուղիր, հօրը տես տղին գնա:

Փորձ համարիր, թէ չես փորձուած, այս մի հատ զեկուցումը,
Տես ինչ տեսակ կեանք կունենաս, և ինչ ընտիր ապագայ,
Այս խրատը ընդունողը, այս առածը լսողը
Բոլորովին վատ չի ապրիլ, ինչ երկրում որ մնայ:

Այս մի այնպէս առևտուր չէ, որ համ առնես, համ ծախես
Քեզ վրայ նստող փթող է, ոսկի չէ որ պսպղայ,
Թառսիւնի, դու էլ հետևիր պապերի այդ օրինաց,
Հեշտասէր շատ Մինաների, շատ մի լինիլ ենթակայ:

156. Ա Յ Դ Ս Է Ր Ը.

Մ ու լ ա մ մ ա գ.

Ի՞նչ ասես ինձ չի արել անտէր մնացած այդ սէրը,
Գիշեր ցերեկ պաշտպանելով, ոչ շահը տեսի ոչ խիրը,
Խոր ցաւի, խոր վէրքերի գերի տուի իմ այտերը
Թէ կարգաս կ'հասկանաս, քո մասին գրած երգերը,
Որի մէջ նկարուած է պատմութեանս իմ պատկերը
Նորա հետ պարզ գրուած, քո տուած բոլոր վէրքերը:

Յիշում եմ, չեմ մոռացել, ինչ օրեր քեզ հետ եմ քաշել
Քեզ սիրելով, քու մասին խեղճ մանուկ կեանքս եմ մաշել,

Տասը տարի չարունակ մտիկ տալով սիրտ եմ քաշել,
Հաստազլուխ Ն.-բէկի, բորիկ Մուսուհետ եմ ճաշել,
Քեզ կնութեան առնելու հարմար ժամերի եմ աշել,
Ձեմ գտել մի օր, մի ժամ, համբուրելու այդ աչքերը:

Թանկ օրեր եմ կորցրել մէկը միւսիցը աննման,
Լսելով թոխօքերը, կորցրել եմ ամեն մի բան,
Մերթ Շուշի, մերթ Քարաշէն, մերթ վանել եմ Գօրիս աւան,
Որի մէջ ինձ թողեցիր, ընտրեցիր մի հատ Թունան,
Թէ տեղի, թէ անտեղի, բերք բռնելով ձեռքը նորան,
Չիմանալով այնպէսին անարժան է թոռնքերը:

Ինչ եղաւ, ինչ չի եղաւ, դարձեալ թոխազանդ եմ,
Հեռացած, չի մոռացած, Թառսիւնի սիրեբանդ եմ,
Մեծի մօտ, փոքրի մօտ, երգիչ ու երգաբանդ եմ,
Մերթ ատոյ, մերթ հալածոյ, մերթ դելդ սպեղանդ եմ,
Անունիդ լարայ քցոյ մի հատիկ դաւաճանդ եմ,
Որովհետեւ խոհարար Թիւնաների ես ընկերը:

157. Ն Ե Ր Ե Յ Է Ք.

Ցաւս չատ, է բայց արօղ եմ, չեմ լացում
Ցնորուած ու խեղաղար եմ, ներեցէք,
Նոր է նոր եմ դգում, ձեզ տամ իմացում
Կորած Մինու սիրահար եմ, ներեցէք:

Որի սիրոյ շանթը ինձի կաշկանդեց
Ներշնչեց ուժերը, հոգիս աւանդեց,
Կեանքս մաշեցրուց տունս իմ բանդեց
Կիսակործան մի տաճար եմ, ներեցէք:

Ներեցէք ինձ, թէ եղբայր էք հարազատ
Խօսէք հետս ցաւ ու դարդիս համեմատ,
Սիրտս բորբոքուած է, դրութիւնս վատ
Միով բանիւ անստար եմ, ներեցէք:

Ազատելով յիմար Մինու կնութեան
Ինչ արել եմ, ես եմ ինձ արել համայն,
Թառսիւնին եմ, շատի համար երգաբան
Շատի համար սաղանդար եմ, ներեցէք:

158. Մ Ի Ն Ա

Գուն ազաչէ ես քեզ սիրեմ, Մինա ջան
Եթէ ցանկանում ես ունենալ լաւ կեանք,
Ոչ թէ ես քեզ, հասկանալով ամեն բան
Ներելով ամեն մեղք և ամեն յանցանք:

Այնպէս արա իմ սիրտը չի սառցնեմ,
Մինչ օրս լաւ, այժմ սեւ քար դարձնեմ,
Պահած պաշտած սէրդ սրտումս մեռցնեմ
Անուանելով քեզ մի հատ անխղճմտանք:

Մինա էիր, անունդ կոչեցի Սիթար
Աղօթեցի Աստուած լինի քեզ սատար,
Պահեցի պաշտպանեցի կէս քառորդ դար
Որ մեծանաս ինձ նուիրես չարչարանք:

Տէրը քեզ հետ, ուր կամենում ես գնա
Թող իմ սէրը սրտումդ մեռած մնայ,
Թառսիւնին եմ թէ Աստուած իմանայ
Քեզ չի թողնիլ որ ապրես անտանջանք:

159. Օ Ր Ը Մ Է Կ Ի Ն.

Օրը մէկին սիրելով, մոռանալով,
Կը մեծանաս տանը կ'մնաս, Մինա ջան,
Նորանց տուած խօստմունքդ ուրանալով
Անպէտքը մի բան կը մնաս, Մինա ջան:

Այդ քան գոռոզամիտ ինքնորոյն մի կաց,
Մէկ թիչ էլ հետեիր սիրոյ օրինաց,
Կաթնից ու մածունից հալածուած, կորած
Առանց կարագ թան կը մնաս, Մինա ջան:

Մի ծածկուիր, կամաց կամաց երես
Շատից քիչից մարդիկ նայեն բո վերայ,
Ամիսներ կը կորչի, տարիքներ կերթայ
Առանց զաւակ նան կը մնաս, Մինա ջան:

Լսիր քո սիրելի Թառսիւնու ասած
Կարգա, սերտիր նորա ամեն մի գրած,
Անթիւ ու անհամար ճորտերից զրկուած
Անչքանշան խան կը մնաս, Մինա ջան:

160. Մ Ի Ն Ա:

Սիրուն փեսացուի ման եկող կոյսը
Եա խոշ պիտի ճարէ, եա մունջ, եա դանդաղ,
Այդ շրջանին հասցնելով իր յոյսը
Եա կոյր պիտի ճարէ, եա քաշալ, եա կաղ:

Ինչքան տանջուով է շատ մտածողը,
Նոյնքան երջանիկ է թիչ մտածողը,
Պապի ասած, լաւին յետան ընկնողը
Եա գէշ պիտի ճարէ, եա էշ, եա սարսաղ:

Պարզ խրատ է, այսքանը, ինձ քեզ համար
Թէ հետեներ, մեզ չի տանջենք չարաչար,
Թառսիւնու տանջողը պէս անգթաբար
Եա համր պիտ ճարէ, եա ծոյլ, եա արմախ:

161. Մ Ի Ն Ա.

Մինա, սիրավառեալ քեզ տեսած չը պիտի ես
Ժպտաշաղախ խօսքերդ լսած չը պիտի ես,
Արծարծողը չես երևում, սրտիս մէջը սէրդ
Իզուր ցաւերդ ինձ վերայ, դասած չը պիտի ես:

Անմահ է սէրը ասելով, քեզ չեղայ դաւաճան,
Զուր շատ զուր անցաւ, ինձի վնասած չը պիտի ես,
Էլ ինչ ասեմ, ինչ լսացնեմ, քեզի ով անգութ
Բնաւ քո մասին, այս օրին հասած չը պիտի ես:

Այսքան օրերի, ժամերի, վայրկեանների միջում
Քեզ ասելու ինչ ասել եմ, ասած չը պիտի ես,
Ուրեմն կորիր հեռացիր Թառսիւնու շրջանից
Ափսոս քեզ համար այսքանը խօսած չի պիտի ես:

162. Ա՛, Պ Ա Ռ Ա Ռ.

Ա՛ պառաւ, վեր կաց կորի այս տանիցը
Քիչ էլ մնաս, քեզ կը կապեմ շանիցը,
Աչքիս սև ու սպիտակ մի հատ թռչունը
Քո պատճառաւ դուրս չի գալիս բունիցը:

Ա՛, պառաւ վեր կաց և այլն...

Ինչ ես տեղդ բերքացրել, սատանայ,
Ինչ տուել ես առ հեռացիր մեղանայ,
Թող կարօտս առնեմ, չը մեռնեմ իզուր
Կեանքիս մէջ հազիւ պատահած մէկ քանայ:
Ա՛, պառաւ վեր կաց և այլն...

Նա ինձ նման քեզ ամեն բան չի ասում,
Ինչ որ ունի փափուկ սրտումն է դասում,
Հիմա էս ժամ վեր կը կենայ կը կորչի
Այս պառաւը, ասելով, սպասում:

Ա՛, պառաւ վեր կաց և այլն...

Պառաւել ես, խելքդ պառաւ մի պահիր,
Տեսած բանդ, մտքիդ դարաւ մի պահիր,
Լսիր խօսքս, վեր կաց կորի այս տեղից,
Այս ջերմութեան մէջ ինձ ծարաւ մի պահիր:
Ա՛, պառաւ վեր կաց և այլն...

Այսուհետեւ քեզ հոգի է հարկաւոր
Մի պղտորիր մեր սրտերը նորէ նոր,

Ժամ յաճախէ, մեղրիդ քառութիւն հայցէ,
Այս մասին թող քեզ չը կոչեն յանցաւոր:

Ա՛, պառաւ վեր կաց և այլն...

Նորից ինչ ես երազում, ինչ փափաղում,
Ինչ ուզել ես տեսիլ ես մեր հասակում,
Այժմ եկել սև փուշի պէս մէջ մտել
Մեր ալեկոծուած սրտերը կրակում:

Ա՛, պառաւ վեր կաց և այլն...

Թող քո քաշած օրերը մենք էլ քաշենք
Քո հասակին հասնենք, օրեր չը մահենք,
Ամեն մէկս մի սուր կացին ձեռք առած
Կամաց կամաց մեր կեանքի ծառը տաշենք:

Ա՛, պառաւ վեր կաց և այլն...

Էլ ինչ միաց ինչ ասեմ լսացնեմ
Քեզ այս տեղից այս երկրից հեռացնեմ,
Ամեն բան էլ սև երեսիդ կարդել եմ
Ապա տեսնենք, քեզ հալածուած կը գտնեմ:
Ա՛, պառաւ վեր կաց և այլն...

Խնձորիս գիւղում.

163. Ս Ի Ս Ի Ա Ն

Եթէ ահանջ գնեմ Աղալի խօսքին
Պէտք է շատացնեմ արծաթ ու ոսկին,
Կապ տամ մէկ տեղից քանի թոփ քաթան
Զիանը բռնեմ, զնամ Սիսիան:

Որի նկատմամբ իմ անհատական
Կեանքը պիտ թողնեմ, դառնամ բաղերկան,
Օրը հազար անգամ սուտ Աստուած վկայ:
Ասելը ուսած աշխարհի վերայ:

Այն էլ Ուշթափի քամին կուլտալով
Ղարաբուլաղից ձիուս թող տալով,
Երկար չափելով, կարճ կտրելով,
Հոգիս վատնելով, սատանին տալով:

Ազալ, չեմ կարող ես քեզի նման
Ղապաս հինացած դառնամ բաղերկան,
Խոխերքս քաղցած, մերկ ոտաբորիկ
Կնիկս անշոր, անշալ, անգոտիկ:

164. ՍԻՆԵՆՅԱ ԱՂԽԱՐՀՈՒՄ.

Սինեայ աշխարհում իմ ծննդավայր,
Պաշտել եմ ինչպէս մի մեծ սրբավայր,
Բայց նորա միջի մարդիկը անգուլթ
Տանջել են ինձի անխղճմտաբար,
Տրտում ու տխուր ես եմ միայնակ
Ինչպէս վանդակում կապկապած սոխակ,
Ինձ համար միայն Մինան էր սիրուն
Նա էլ ձեռք բերաւ անզգամութիւն:

Ազգ և ազգական, ընկեր, հարեան
Ոչ մէկը չեղաւ իմ դարդին դարման,
Թէն ամենքին սիրած ու պաշտած,
Յարգած ու պատուած իմ անձի նման,
Տրտում ու տխուր և այլն...

Մէկը մէկից գէշ, մէկը միւսից վատ,
Օրիկաններ են անարդարադատ,
Սեխն սպիտակ, սպիտակին սեխ
Ասող խօսող են, իրար համեմատ:
Տրտում ու տխուր և այլն...

Որին սիրում եմ, ինձի ատում է
Ինձի վնասում և նախատում է,
Ջան ասելիս էլ չոռ է իմանում
Տեղի անտեղի հա դանդատվում է:
Տրտում ու տխուր և այլն...

Որին կարծում եմ խելօք, ընդունակ,
Անուանում իբր մարգարիտ խոտակ,
Աւելի վատթար մարդ է ձեանում
Թէն սենեցող մարդկայն գգակ:
Տրտում ու տխուր և այլն...

Որին յայտնում եմ իմ արդար սէրը,
Ընդունում ձեռք սիրում պատկերը,
Տեսնում ես յանկարծ առանց ի պատճառ
Կատարել ուղեց Վասակի դերը:
Տրտում տխուր և այլն...

Որը իմ ձեռքից խլեցին տարան
Մինչևի Իրան, մինչևի Թուրան,
Բռնակալութեամբ, անաստուածութեամբ
ձանաչել տուին երկիրը Կասպեան:
Տրտում ու տխուր և այլն...

Էլ ինչ է մնում ինձի ասելու
Աշխարհի մարդկանց լսանքներու,
Քանզի անձանթ բան չըմհաց
Իմ խեղճ բալարու գլխին բերելու:
Տրտում ու տխուր հայն...

Իմ աղեկտուր հառաչանքները,
Իմ սիրտը կծող պաղատանքները,
Ոչ մէկը նոցա գուժը չը շարժեց
Լսելով շատի վայրահաչները:
Տրտում ու տխուր հայն...

Միայն Մինան էր մէջ մեր աշխարհի
Տէր մի ուղղութեան մի գաղափարի,
Երկար չը տեկց նա էլ փոխարկեց
Յարգելով անպէտք մի խոհարարի:
Տրտում ու տխուր հայն...

Ահա այս տեսակ դեր է կատարում
Իմ պահած պաշտած ծննդավայրում,
Որի մէջ լցուած նոր-նոր Վասակներ
Անխղճմտաբար սրտեր են լափում:
Տրտում ու տխուր հայն...

165. Մ Ի Ն Ա.

Սիրել անհատ մի գուսանի
Գնալ աշտաղ մի Թիւհանի,
Որի ջիւրը մինչև այսօր
Կարօտ է երկու թումանի:

166. Ե Ր Ա Ն Ո Ի Թ Ի Ն

Երանի նորան, ով որ իւր աչքով
Կը տեսնի Գալին քուչերը ընկած,
Մինան մի կողմով, Ջառին միւս կողմով
Ձեռքիցը բռնած, մուրանալիս հաց:

167. Մ Ի Ն Ա.

Չարշարուիր Մինա մութ անկիւններում,
Անթիւ ցաւերից թաղցրու սէրդ,
Լացիր երբեմն քո սրտի խորքում,
Թող որ բոռանան սիրուն աչքերդ:

Յիշիր անցեալ երջանիկ օրեր,
Երջանիկ տարիք, երջանիկ ժամեր,
Որոնք մանկական անմեղութեան մէջ
Բիրք կապկապել ին իմ ու քու ձեռքեր:

Յիշիր վառվռուն սիրոյ այն պաշար
Որին պաշտում իր փոխադարձաբար,
Ձգալով սիրոյ ամենայն մի խանդ
Կռիւ մղելով մօտ կէս-քառորդ դար:

Յիշիր, լաւ յիշիր սե բերծի տակը
Ապաշ Աղիզի կեղտոտ դանակը,
Որի մէջ համբալ Մանու նկատմամբ
Անհանգչելի էր իմ քու կրակը:

Յիշիր Ակնիցը ջուր վերցնելը
Դէպի Աղմահլան աչքեր ձգելը,
Լրտես Թաղայի խօսքերից օգնուած
Օրը չորս անգամ շորիւր փխելը:

Յիշիր Խ. զիւղից Գօրիւս գնար
Ինձանից փախչել առանձնանալը,
Մանասին թարուն-թաքուն պապ տալը,
Ուղայ Ներսէսի հետը խնդալը:

Յիշիր այժմեան երկիրը Կասպեան,
Որի մէջ ունես մի հատիկ Թիւնան,
Որի հազիւհազ վաստակած փարան
Կաշառք վերցրուց քո Ազալ ապան:

Չարչարուիր հոգիս մութ անկիւններում,
Անթիւ ցաւերից թագցրու սէրդ,
Էացիր երբեմն քո սրտի խորքում
Թող որ քոռանան սև սև աչքերդ:

168. Մ Ր Տ Ո Վ.

Մինչ օրս քեզի սիրելի եմ սրտով,
Բայց այժմ քեզի սիրում եմ հողւով,
Քանզի քեզանից դադանի պահելով
Սիրտս չի մնում խաղաղ անվրդով:

Ինչ պիտի անէ Ազիզդ գաժան,
Ազալդ, Մուսադ, Ն.-դ դաւաճան,
Որոնք գիտութեամբ ինձ ու քեզ համար
Խօսել կարացին ամենայն մի բան:

Թէև զգում էին սիրոյ արհաւիրք
Հալում մաշում է մեզի զողտրիկ,
Դարձեալ անխիղճ և անզթաբար
Վարուում էին մեզ հետ լուիկ ու մնջիկ:

Դուն էլ զգացիր տանջում իմ կրծքից
Ինչեր է բղխում սիրոյ վերքերից,
Որը մինչ օրս առանց սպեղան
Մաշում է ինձի հեռու քո գրկից:

169. Օ Ր Ը Մ Ե Կ Ի Ն.

Օրը մէկին սիրելով բան չի լինիլ,
Մէկին սիրէ, լաւին սիրէ, լաւ սիրէ,
Շատերի պէս դիւրահաւան մի լինիլ,
Մէկին սիրէ, լաւին սիրէ լաւ սիրէ:

Օրինակ առ հին պապի ասածներից,
Փախուստ կրէ անփորձ արարածներից,
Ում սիրում ես բաց մի թողիլ ճանկերից
Մէկին սիրէ, լաւին սիրէ, լաւ սիրէ:

Կը սխալուիս, լաւի տեղ վատին կերթաս,
Շնորքից զուրկ խելքի աղքատին կերթաս,
Քո Թառսիւնուդ անհամեմատին կերթաս
Մէկին սիրէ, լաւին սիրէ, լաւ սիրէ:

170. ՀԱՐՍԱՆԻՔ.

Մէկ աղջիկը մէկ տղին կ'ընէ, մէկ տղան մէկ աղջկան,
Այդ ասել են մեր նախնիքը, ընդունելով հաստատ ըան,
Քանզի տեսել են մարդկութիւն չունի վախճան աշխարհում,
Իսկ մարդ ունի մահ ու վախճան, մահ գալով բաժան բաժան:

Սուրբ գիրքն էլ խօսում է միշտ, թողիր զհայր և զմայր,
Որ նորան հաստատուի սուրբ կապը ամուսնական,
Էլ ինչո՞ւ համար չը լսենք, չը հաւատանք սուրբ գրոց,
Որը կենաց մի մուրհակ է, մարդկային երջանկութեան:

Ուրեմն եկ, ձեռք ձեռքի տանք, երթանք դէպի ժամի դուռ,
Թող տէր Դաւիթը մեր գլխին, կարգայ Սուրբ Աւետարան,
Քեզ թագուհի, ինձ թագաւոր, թող կոչեն այդ վայրկեանին,
Երանի տան մարդիկ սիրով, իմ ու քու վսեմ կոչման:

Բաւական է դաւալ բազան որքան մնաց սգաւոր,
Թող մեզ համար էլ ծրվայ, նոցա անպիտան զուռնան,
Մենք ճգնաւոր չենք, որ ճգնենք բարձր սարերի գլխին,
Որ ժառանգ ենք նորանց նման կեանքը յաւիտենական:

Ուրեմն եկ կապկապուենք կրօնական կապերով,
Ես ունենամ մի հօտ Մինա, դու Թառսիւնի մի գուտան:

171. Ս Ի Թ Ա Ր.

Սիթար, իմ Սիթար, աննման Սիթար,
Երկրի աստղ, փայլուն անխաւար,

Սրտիդ բաբախման կազմէ գաղափար,
Քեզ վնաս չի տալ ամենայն մի չար:

Տածիկ ես տածիկ, տածիր քո բաղձանք
Յուսարով որ դու կունենաս լաւ կեանք,
Եթէ անկեղծ է այս օրուայ խօստում
Եթէ շարժում է քո թոյլ խղճմտանք:

Նա մանաւանդ երբ աննուաղ անխախտ
Սպասել ես ինձ, անդադար անյալթ,
Էլ ինչ է պակաս, ինչո՞ւ ես կարօտ
Քանզի ամենից առաջ է քո բաղդ:

Ինչ պիտի անէ մեր հետան ընկած
Յիմար ու ցանցառ Ազալդ հարբած,
Որը իր այսպէս այնպէս կոչումով
Կարծում է ինքը մենակ է ծնունդ:

Ինչ կարծիր յայտնենք և ինչ գաղափար,
Քանզի մեզ համար խորթ է և օտար,
Խորթ է նորա միտք, խորթ է զգացմունք,
Խորթ է գիտութիւն, խորթ է և հանճար:

Թող նա վայելէ այստեղ մեծ անուն
Ճակտին կպցրած թիթեկ պսպղուն,
Ճանաչող շատ կայ, որ այդ թերութեամբ
Մի անհարազատ զուակն է Աւուն:

172. Ք Ե Ձ Է Ս Ի Ր Ո Ւ Մ

Քեզ է սիրում սաղ աշխարհի սիրելին,
Ոչ թէ մենակ Ղարաբաղի, ու Մինայ
Դուն էլ պաշտիր նորա սէրը թանկագին
Ոչ դադարի ոչ նուաղի, ու Մինա:

Բաղդ ու շնորք, գեղեցկութիւն ունեցող
Մարդին, պակաս մէկ բան ասել չես կարող,
Զանայ, ձեռնաս այդպէսին մեծարող
Մի շարժուիր նման դանդաղի, ու Մինա:

Յորեն հացը թող փորիդ վնաս չի տայ,
Բացի հաց քեզ համար չի գալ մանանայ,
Զուր մի տանջիր սիրահարիդ անխնայ,
Ծռացնող նման մանգաղի, ու Մինայ:

Վաղուց է սիրում քեզ, հասկացիր նոր չէ,
Տասնամէկ տարի է մենակ այսօր չէ,
Զեռքիցդ դուրս կուգայ, կերթայ կը կորչէ
Կը պատահես մէկ սարսաղի, ու Մինայ:

Քեզ սիրել է Թառսիւնի թառածողը
Ոչ թէ Ագալի պէս բաթան ծախողը,
Պապի ասած լաւին հետան ընկնողը
Կը հանդիպէ կոյրի, կաղի, ու Մինա:

173. Թ Է Ե Ի Ի Ն Ձ Հ Ա Մ Ա Ր.

Թէն ինձ համար նեղութիւն քաշած,
Տասնամէկ տարի իմ սէրը պաշտած,
Հազարին խափած, հազարից խափուած,
Հազարից հազար բան առած լափած,
Ի պատիւ ինձի նստած, սպասած,
Ի նախատ սիրոյ ազնիւ օրինաց:
Յշմարիտն ասած այդքանից դրդուած,
Սնդգամ Մինա աչքիցս ընկած,
Թէ կուզ նման ես երկնային հուրու:
Ցանկութիւն չունեմ էլ քեզ սիրելու:

Թէն ինձ համար դռանը նստած,
Դէպի Աղմահլան աչքերդ ձգած,
Սև քերծի տակին գուլպան ձեռք առած,
Ագալը, Զառին, մօտիդ մրափած,
Ազիզը հարբած, վայր գլորուած,
Մուսան նորանից աւելի հարբած:
Յշմարիտ ասած և այլն...

Թէն ինձ համար, մի հատիկ դառած,
Կարմիր ու կանաչ հագած փրուած,
Սանդերք մանդերքը, առաջիդ դրած,
Դէպի Աղմահլ տուն հայեացքդ ուղղած,
Ագալի կեղտոտ սրահում նստած,
Որսկան կատուի պէս, աչքերդ չռած:
Յշմարիտ ասած և այլն...

Թէկ ինձ համար, շորերդ փոխած,
Հայելու հանդէպ բացած քնուած,
Հօրդ տան մէջը Մանուն հետ նստած,
Խեղքիցը զրկուած, բանիցը պրծուած,
Հինգ, տասը փեսայ, գլխիդ հաւաքած,
Վերջը անփեսայ մնացած, նստած,
Յուդայ Ն. բէկի թալակը մտած,
Սգալի վերայ ջարմայ մնացած:
Չճարիտն ասած և այլն...

Թէկ ինձ համար, մաղերդ կոկած,
Երկար ու բարակ սանրով սանրած,
Ճակատդ սիրուն, ճաւերով պատած,
Թուխ թուխ ունքերի հետ միացրած,
Ծծերդ ճերմակ, կիտաբաց թողած,
Մոխրագոյն ցանցով հրենդ պատած,
Ի պատիւ ինձի, լաւ լուսաւորուած,
Իբր ֓արիկից, Լօնդօնից ևկած:
Չճարիտն ասած և այլն...

Թէկ ինձ համար, այրուած խորովուած
Սաղ օր ու գիշեր անքուն մնացած,
Ոտքերդ սառած, ձեռքերդ մրսած,
Պատի արանքում կապուտ բար կտրած,
Մեկրանց կտուրի ամբօխի գիմաց,
Մոլորուած ինչպէս, մի բան կորցրած:
Չճարիտն ասած և այլն...

Բայց ես կը սիրեմ, այն հայ աղջկան,
Որը կ'զգայ ամենայն մի բան,

Զի լինի շատի պէս, թոյլ դիւրահաւան,
Մէկ ընդունելով արժան, անարժան,
Նամուս ու զէյրաթ, գրած մի կուման,
Մինչ ամուսնանալ չի վատնիլ իրան,
Հինգ տասը մարդի եղած սիրեկան,
Կեղտ չը կ'պցնելով իւր բաժին կոշման:
Չճարիտն ասած և այլն...

174. ԱՆՂՆՈՐՔԻՅ ԴՐԴՈՒԱԾ.

Թէկ ինձ համար, թանկ ու աննման,
Ամեն մի բանից սիրուն, պատուական,
Կասեմ, կը խօսեմ ամեն տեղ ազատ.
Շնորքով մարդին ջանս իմ զուրբան:

Թէկուդ նա լինի ոչ հայ, կռապաշտ,
Շնորք ունենայ, միշտ կ'վարուեմ հաշտ,
Քացախը մեղրի տեղ ընդունելով
Ժայռերը որպէս տափարակ մի դաշտ:

Թող ընդիմանան շատ մարդիկ նորա
Անպէտք համարած աշխարհի վերայ,
Բայց կ'մեղանչեն, չ'հասկանալով,
Շնորքով մարդին խելը էլ կունենայ:

Շնորքով մարդը չի թողնիլ իրան
Անպէտք անուանած, ստոր անուն տան,
Մէկ տեղ հացկատակ, միւս տեղ շատախօս
Կեղծ անուններով շոհած ըստինքեան:

Մարդ կայ անիրաւ, մարդ կայ իրաւ է,
Ամենքին յայտնի, այս մի համբաւ է,
Շնորքով մարդի արած գէշ բանը
Անշնորք մարդի լաւիցը լաւ է:

Շնորքով մարդի տուած սև քարը,
Անշնորք մարդի մեղր ու շաքարը,
Մէկ համ, մէկ ճաշակ, մէկ հիւթ կունենայ,
Թէ կուղ իրար դայ բոլոր աշխարհը:

Ուրեմն դառնալ իմ այս պատուէրին,
Վատ ասել պէտք չէ, սիրուն պատկերին,
Որը շնորքի, խելքի ու մտքի
Շտեմարան է, պարգևը Տէրին:

175. Դօնի, Ղուբանի և Թէրէքի չրջաններում տարածուած խաչա-
գողների նկատմամբ:

Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր.

Թողել էք երկիր եկել այս կողմեր,
Անցուցել ձեռքով հազար մի գործեր,
Հային ո՞վ է տուել այդպիսի բաներ,
Երկրի անուն մրոտող դայեր:
Ձէք էլ հասկանում թէ ինչ էք անում,
Խախուչկաների հետ էք խաղ անում,
Վայ ձեզ, կատարեալ սրիկաներ էք,
Դուք պիտի ասէք, թէ մենք էլ հայ ենք:

Տուն, տեղ, անդատտան թողել էք եկել,
Սյա երկրի մէջ վրդներդ ճկել,

Ցեխոտ տրեխներդ կօշիկ դարձրել,
Մոթալ փափախներդ ցիլինդր շինել,
Ձէք էլ հասկանում և այլն...

Ազգ և ազգական, ընկեր, հարևան,
Աչքից ձգել էք եկել այս կուման,
Թէ ինչ գեշութեամբ, վատտակել մի բան,
Նոցա հետ սովորել, մայա, տվայան:
Ձէք էլ հասկանում և այլն...

Բօշայի նման սև քօսաւ դառած,
Բոլոր աշխարհի, զահլան Լք տարած,
Խաչեր էք ծախում, կեղծ սսկեջրած,
Հազար մի տեսակ անուն ընդունած:
Ձէք էլ հասկանում և այլն...

Գեղունակներին թողիլ էք, եկել,
Խախուչկաների աչքի մէջ մտել,
Սէր, հաւատ, յոյս, կեանք, նորանց պարգևել,
Ձեզ առաքինի ընկեր ճանաչել:
Ձէք էլ հասկանում և այլն...

Խելօք երկրին թէև մօտենում
Արտաքին տեսքով, քիչ զանազանում,
Հէնց էք իմանում այդքանի միջում,
Լուսաւորութեան մէջ էք պլպլում:
Ձէք էլ հասկանում և այլն...

Մէկդ Իւանիչ, մէկդ Եակովիչ,
Մէկիդ փորը հաստ, միւսիդ խելքը քիչ:

Վարակիչներ էք հայ ազգի համար,
Յիմար ու ցանցառ, դործիւ արարիչ,
Ձէք էլ հասկանում ե այլն...

Բարեբաղդաբար հայ էք անուանում,
Նստում հայի մօտ, հայի շրջանում,
Օր չի պատահում նստել խօսելիս,
Հայ բառ գտնուի ձեր լեզուի միջում:
Ձէք էլ հասկանում ե այլն...

Մի հայ լրագիր չէք էլ ստանում
Տեսնէք ինչ կողմից, ինչ բան են գրում,
Ինչ բանի համար կարիք են զգում,
Ինչ բանի կարիք, չափ է զգացվում:
Ձէք էլ հասկանում ե այլն...

Տարին մի անգամ, ժամ էլ չէք գնում,
Ձեր հոգու համար փրկութիւն հայցում,
Տաս կողմէկ տալիս, մի գոյգ մոմ վառում,
Մի հինգ կողմէկ էլ խաշհամբոյր ձգում:
Ձէք էլ հասկանում ե այլն...

Ո՞ր Ի Ր է.

Ո՛ւր է, չեմ տեսնում ես իմ նազելին,
Լօռուայ գաւառի մի հատ գեղանին,
Որի համար ես հինգ, տասը տարի,
Օրեր եմ վատնել, տրտում լալազին:

Ջալալօղլի.

176. ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ

Վատ թիւ կղար իննսուն երկու թուական,
Մտնելուն պէս մեզ հասցրիր տրտմութեան,
Նախ Թիֆլիսն անիծեց քո պալատեան,
Հանգիսելով նոր կամուրջի խորտակման,
Մատաղ տալով քեզ քանի մարդ պատուական,
Ձի մոռանալ քո հարուածը մշտական:

Սյդ քեզ համար իբր մի հիմնարկութիւն,
Հաստատեցիր, առանց նեցուկ, առանց սիւն,
Ընտրեցիր ազգի զիտուն իմաստուն,
Անհատներից, մեզ հասցրիր դառնութիւն,
Որոնց համար, ամբողջ ազգ ե ազգութիւն,
Պիտի ողբայ, պիտի սգայ յաւիտեան:

Քեզպէս տարին դնայ, մէկ էլ յետ չը վայ,
Որ մեզ բերի սարսափելի խօհրայ,
Որի ձեռքում քանի մարդիկ անխնայ
Ձոհ գնացին, այս լոյս աշխարհի վերայ,
Որը զիտուն, որը բաջ, որը հսկայ,
Որը անհատ, դործիւ բանիւ աննման:

Քո ինչքն էր Խորէն Նարայէ, Պարոնեան,
Գամառ-Բաթիպայի նման երգարան,
Խնչ էր անում Արծրունին պատուական,
Արդարութեան, ճշմարտութեան քաջ պաշտպան,
Տգէտների, անմիտների ախոյեան,
Թերուս, խաւարամիտների դաւաճան:

Միթէ քեզ էլ հարկաւոր է գործիչներ,
Ամեն տեսակ, վէրքերի փարատիչներ,
Խեղճ ու մոլոր, մի հատ ազգի փրկիչներ,
Խաւար, բթամիտների քարոզիչներ,
Ազգի ցաւը ասող, խօսող երգիչներ,
Որոնց տեղը թափոր լացում է համան:

Վատ թիւ եղար, գնաս, մէկ էլ յետ չ'գաս,
Տեղն ու տեղը չորանաս, խաւար մնաս,
Ո'վ չի տանջուել, ո'վ վիրաւորուել մաս մաս,
Կրելով քո բերած յիմար պատուհաս,
Որին աշխարհի չափ տուել հս վնաս,
Որի ձեռքից խլելով մի հատ տղան:

Զգուեց քեզանից ամբողջ մարդկային ցեղ,
Հալեցնելով, մաշեցնելով սրտի եզ,
Աշխարհի մէջ, էլ չը մնաց ցեղ մի տեղ,
Որ քեզ պարգեւած չը լինին, զոհ անմեղ,
Թառսիւնիս էլ կորցնելով մի չքեղ,
Անիծումս քո շուտափոյթ դալստեան,
Թող կործանուի քո հայրենի Հնդկաստան:

1892 թ. Դեկտեմբ. 19-ին
Գորիս առանձն.

177. Առ յաճորդ նախամեծար Մայր Աթոռի և Ատենապետ Սինօղի
Նորընտիր Տէր Տէր Մկրտիչ Ա. Վեհափառ Կաթողիկոսն Ամենայն
Հայոց.

Գերագոյն հայր սրբազան, մեզ համար փայլուն մնաս,
Պարկեշտագոյն անդրանիկ. անմար վառվուն մնաս,
Հոտիդ օժանդակաբեր, նոր կեանքի գարուն մնաս,

Համբաւաւոր քարոզիչ, մտքերով արթուն մնաս,
Գահակալ Հայաստանին, անբիծ վէհ ներհուն մնաս,
Սրտաշարժ եռանդիտ մէջ, աստի դիմացկան մնաս:

Կարգաւորիչ կանոնաց, վէհ սնունդ Արարատեան,
Պատմելով Աստուածաբան և քարոզ ճշմարտութեան,
Երջանկութիւն ստանայ քեզանից որը Հայաստան,
Սրժանանան սրբութեան, արփի լուսափայլութեան,
Թէմէ ի թէմ համբաւ, մնա միշտ անշարժական,
Ընդհանրական ժամի մէջ, որպէս իմաստուն մնաս:

Առ արհին սրբազնագոյն, Հայր Մկրտիչ նախազան,
Հայերուս կեանք նուիրող, մնացիք մինչև ցմահ,
Վէրքեր, վշտեր փարատող, վանեցնող սրտերից ահ,
Զեղ նման անթիւ լինի, Հայաստանի թիկնապահ,
Մեսրոպայ Պարթեանի պէս, մնացիք վառ մի ջահ,
Մանաւանդ Ներսէսների պէս բարի անուն մնաս:

Ո'վ նորընտիր ծայրագոյն պատրիարք նախամեծար,
Թռթռում է անժուժել, հայ որդիքդ անսատար,
Սարսափում է անհանդուրժ, քանի սրտեր քեզ համար,
Գթութեանդ կարօտում, օգնութեանդ անդադար,
Օգնութիւն, պաշտպանութիւն, խնկրում հեռանշար,
Որ դու չորացած, անգալար, ոստեր աճեցուն մնաս:

Յուսամ Աստուած, որ լինիս, վայելչական կաթողին,
Շնորհ ամենակալի, հաստատութեամբ սուրբ Սինօղին,
Օրհնեցող Կայսերութեան, սփոփիչ լինող ազգին,
Յուրացմամբ փայլող լինիս, որպէս ի յերկնից արփին,
Խոնարհմամբ խնկենիդ առ, մաղթէ Սինեաց աշխարհին,
Ճշմարիտ դաւանութեան մէջը, միշտ աճուն մնաս:

Ո՛վ խնկելի քաջ հովիւ, խնդրում եմ քեզանից զուտապահեմ
Աջահամբոյր ընդունիր ճշտ հուէրը խնձանից, լա՛ւ յախա՞ւ
Օրհնութիւնը անպակաս պահէ խեղճ Հայաստանից, աշտպօ
Մանաւանդ անմերժսան, չղթայած վարժարանից,
Քեզի Հայոց ազգի դետ, նախախնամող իշխանից,
Թառսինուն լեր սփռփիշ, լեր հմուտ, գիտուն մնաս:

178. Ն Ա Յ Ր Ի Կ.

Արշալոյսի կենարար

Մարութ հովիւ պատուական,

Հնչիր մերթ թինդ մերթ դադար

Դէպի Հայ ու Հայաստան:

Ա՛խ Հայրիկ, ջան Հայրիկ,

Ո՛հ Հայրիկ, Հայրիկ, Հայրիկ:

Մէյմը առաջ մէյմը եղ

Փշիր, փշիր փրկաւտ,

Դէպի Հայրիկը հայոց

Սաստկացիր հաւէտ հաւէտ:

Ա՛խ Հայրիկ, ջան հայրիկ...

Ընթացիր մեղմիկ մեղմիկ

Ով դու կենսատու հովիւ,

Նուաճիր մեր հայրիկին

Զգիր մեր սիրտ, մեր գրկիկ:

Ա՛խ Հայրիկ, ջան հայրիկ...

Ծով ու ցամաք զովացուր

Արանու դաշտ հովացուր,

Գահը լուսաւորչական

Երկար չը մնայ թափուր:

Ա՛խ Հայրիկ, ջան հայրիկ...

Ձոնէ, ձոնէ սուրբ հովիւ

Յորդորանք յուշիկ մուշիկ,

Աթոռը Հայաստանի

Թող ունենայ մի Հայրիկ:

Ա՛խ Հայրիկ, ջան հայրիկ...

Պերճացիր Հայոց Սիօն

Բարորութեան ամբիօն,

Շաղ սուր ամպը գլխիցդ

Սերսացուր հոս ու հոն:

Ա՛խ Հայրիկ, ջան հայրիկ...

Յնծա, Յնծա Արարատ,

Մինչ Շաւարշան, Արտաշատ,

Հիւրնիպէ շատ սիրով

Նորեկ հիւրերդ մեծաշխատ:

Ա՛խ Հայրիկ, ջան հայրիկ...

Յնծա, Յնծա ով Մանուկ

Ի պատիւ նորեկ հիւրի,

Որը չառ օր, չառ ամիս

Տանջել է իրան ձրի:

Ա՛խ Հայրիկ, ջան հայրիկ...

Վերջ տուր լացիդ Հայաստան,

Հայոց ազգի ապատան,

Քանզի Հայրիկն է Հայոց

Պետ գահուն Պարթևական:

Ա՛խ Հայրիկ, ջան և այլն...

179. Ա Զ Ա Ն Ա Մ Բ Ո Յ Ր.

Ապրէ դու Հայրիկ, ապրէ Հայրիկ ջան,

Ապրէ մշտական, ապրէ յաւիտեան,

Քանզի վեհ անունդ հո Արարատեան

Նոյան տապանի յաւերժ պատուանդան:

Վաղուց է թափուր լուսաւորչական,

Գահը քեզ համար ամուր ախոյան,

Վաղուց հայի վերբը զանազան

Եւ վաղուց մնում առանց սպեղան:

Արարսի լճիտ ջուրը անարատ

Միտանում է անարդարադատ,

Կարօտ երկրորդ մի հատ բազմաշխատ

Լուսաւորչի գալստեան ազատ:

Սպասում է քո ազգդ քո սիրած

Քեզ Հայրիկ կարծած, քեզ ապաւինած,

Խանդաղատագին հառաչանք պարզած,

Սրբազան սիրով աստանդանուած:

Ուրեմն, եկ, եկ, եկ կամաց կամաց

Երկար մի թողի մեր աչքերը թաց,

Գուցէ դադարի շատերի գիմաց

Հայի աղերսանք, հայի սուգ ու լաց:

Դուն ես այժմեան մեր արեւ, մեր լոյս,

Դուն ես այժմեան մեր հաւատ, մեր յոյս,

Դուն ես այժմեան պետը ամենուն,

Դուն ես դուն, Հայրիկ, դուն անտարակոյս:

Երբիչ Թառսիւնում մի հատ բարերար

Հայրիկը դուն ես, այժմ կենարար,

Դուն ես մէկ հատիկ պետ անդուգական,

Յոյս, հաւատ, սեր, կեանք, հայրիկը հայկեան,

Փառք ու պառճանքը հայի այժմեան,

Դուն ես մի հատիկ, կեցցես Հայրիկ ջան:

180. Ո՛վ ՍԻՐՈՒՆ-ՍԻՐՈՒՆ.

Քո սիրոյդ համար այրվում եմ, իրաւ անհուր անկրակ, ո՛վ

սիրուն սիրուն,

Թոյլ կիսակենդան, ուղառուած շնչով, կուրծքս աւերակ, ո՛վ

սիրուն սիրուն,

Երբ մի վայրկեան քեզի չեմ տեսնում, կանգնած համարձակ, ո՛վ

սիրուն սիրուն

Ոչ մի բերկրանք սիրտս չի շահում, չը տամ օժանդակ ո՛վ

սիրուն սիրուն:

Վշտացած սիրտս, ճախ քնարներով, չի բացվում էակ, ո՛վ

սիրուն սիրուն,

Դուք էլ կարող էք, բայց չէք կամենում օգնել շարունակ, ո՛վ

սիրուն սիրուն:

Շատին եմ տեսել, շատին նկատել, ոչ մէկը չունի վարդա-

գոյն այտեր,

Երկայնաբարդուկ, անձ պատկանելի, ոսկրտակ կոկորդ, կաթ-
նաբուլիս շրթեր,
Ծաղկած են ճակատ, ճաւերուկ պատած, ունի կամարակաւ,
սակու սաթ հերքեր,
Բամբակ պարանոց, քաթանի պէս ծոց, փափկասուն մարմին,
գեղեցիկ պատկեր:

Քաղցրաբարոյութիւն, հնազանդութիւն, բաղդ հրջանկութիւն,
քեզ տաւել է Տէր:
Որ դուն էլ սիրես քո սիրերանիդ, ընծայես բերկրանք, ու
սիրուն սիրուն:

Ինչքան մտածում եմ, ինչքան խորհում եմ, ոչ մի տեղ քեզ-
պէս սիրուն չեմ տեսնում,

Ոչ Անգղիայում, ոչ Ամերիկայում, ոչ Աւստրիայում, ոչ Ուն-
գարիայում,

Ոչ Մերսիկայում, ոչ Բելգիայում, ոչ Բրազիլիայում ոչ Յու-
նաստանում,

Ոչ Գերմանիայում, ոչ Իտալիայում, ոչ Նորվեգիայում, ոչ
Սերբիայում,

Ոչ Դանիայում, ոչ Եսպանիայում, ոչ Պարսկաստանում, ոչ
Տաճկաստանում,

Բայց Հայաստանի մէկ նոր աւանդում, ունեց անունակ, ու սի-
րուն սիրուն:

Ուրեմն արի, ու իմ նազելի, ինձ պահած ունեմ սէր ապա-
գային,

Որ պիտի լինիս դու ինձ ան մատնիք, ան ոսկի նշան սր-
տակից տիկին,

Կը փայլէ պայծառ ինձ ու քեզ համար, խնամք արարչից,
կեանք մեր արտաքին,

Եթէ կ'ըսես ողբը Թառսիւնու, կաւպիս նորա մանուկ հա-
սակին,

Ել ու կը նայէ այլազանների դեպ ու ռանգով, սրած երեսին,
Կունենամ քեզի աղբի մէջ պարծանք, թշնամու դանակ, ու
սիրուն սիրուն:

181. Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ.

Ծայրերը լաշակիդ երկարացրաւ
Թող տափերից ելնէ մոխրադոյն փոշի,
Արագ բայլէ աչքերը կուրացրու
Ամենայն մի նախանձուտ պառաւ փուշի:

Որոնք ինձ ու քեզի համար քէն նախանձ
Միշտ գործադրել են հանդուգն անսանձ,
Քանզի չունին ոչ սալոր և ոչ էլ տունձ
Իսկ քեզ ունիս համ նունի համ նուշի:

Ինչ առում եմ լսիր այնպէս շարժուիր
Ամեն ասած տուն նեղութիւն մի համարիր,
Փափուկ սրտիս կոտրուած տեղերը կոծկիր
Հոգիս, սիրտս բարակ է նման շուշի:

Խնդրում եմ աղաչում եմ ու մաքուր
Թառսիւնիդ եմ քեզնից հեռացած տխուր,
Խօսածներս սրտիդ միջում ամրացուր
Սէր մի յայտնիր ամենայն մի ապուշի:

182. Հ Ո Ք Ի Ս.

Հուժկու բաղուկներդ, լայնալիճ կուրծքդ
Սրտայայտում են ինձ մեծ գեղեցկութիւն,
Խիտ թանձր մազերդ, վարդագոյն դէմքդ
Մի առանձին պարզութիւն, փսմութիւն:

Մանաւանդ հրացայտ թուխ թուխ աչքերդ,
Կիսալուսնի նման կեռ կեռ յոնքերդ,
Շաղ եկած ճաւերդ, նախշուն այտերդ
Յայտնում են կատարեալ առաքինութիւն:

Ի՞նչիս է նարդուր, նարդիլը վախկոտ,
Համասլիւրի նման ծաղիկը անհոտ,
Որոնք բեզ պէս չունին երկշոտ կրակոտ
Ունքեր կամարակալ, աչքեր սիրասուն:

Ել ինչո՞ւ ինձ աշխարհում երջանիկ
Մարդ համարեմ քեզ մօտ, ով իմ աղանիկ,
Քեզի քոտ ինքեան մի չնաշխարհիկ
Ծաղիկ ես ստեղծուած համար թառնիւնուն:

183. ՔԵՁ ԵՄ ԱՍՈՒՄ.

Դուն ես չլացնում
Իմ աչք և իմ ունք,
Որ քիչ էմ'նում
Զգամ ցնորմունք:

Դուն ես պարզ լուռին
Կապոյտ երկնքում,
Աստղերանց միջին
Փայլում անտրտում:

Դուն ես արեգակ
Հեռու երկնային,
Ոչ թէ մի ճրագ
Վառ գաղանային:

Դուն ես հրեշտակ
Երկնքից իջած,
Ոչ թէ գեղունակ
Հողից ստեղծուած:

Դուն ես մի անհատ
Մէկ ու միայնակ,
Շարժվող անընդհատ
Ինչպէս արուսեակ:

Դուն ես դուն, հոգիս
Այո, դուն ես դուն,
Դուն ես որ խեղճիս
Թողել ես սահուն:

184. Գ Ո Վ Ե Ս Տ.

Ի՞նչպէս գովեմ քեզի ազնիւ բարեկամ
Հայրդ սիրուն, մայրդ սիրուն, դուն սիրուն
Մի ծաղիկ ես պճնագեղեալ անթառամ
Ծառդ սիրուն, ճիւղդ սիրուն, դուն սիրուն:

Զըկամ տեսած յեղի նման գեղեցիկ
Աշխարհի մէջ ամեն բանով երջանիկ,
Համեմատաբոյն անդրանիկ ես, անդրանիկ
Գեղգ սիրուն, տեղդ սիրուն, դուն սիրուն:

Մէկ բան էլայ Աստուած չէ խնայել
Մի հատ քեզ է գեղեցիկութիւն պարգևել,
Թառսիւնուս ասածներից էլ առաւել
Աչքդ սիրուն, ունքդ սիրուն, դուն սիրուն:

185. Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք.

Իմ անդրանիկ անուանուած հայրենիք
Մինչ երբ մնաս անուսուցիչ անդալոց,
Զուրանալով քո ինձ տուած երախտիք
Ոգեորում յիշում եմ ամեն միջոց:

Մինչ երբ պիտի շարժուես դու անգուարդ
Զունենալով հաւատարիմ մի հատ մարդ,
Ոչ ծեր, ոչ մանչ կսեն, ոչ երիտասարդ
Միակերպ կ'տանջեն, փողոցից փողոց:

Շարժուիր հոգիս, վէճ կոչմանդ համեմատ
Թառսիւնուս պէս դիզելով շատ հարազատ,
Թող չքաշեն օրը երկու երեք հատ
Որդիքդ կապուած դէպ սպանդանոց:

186. Մ Ի Հ Ա Տ Հ Ա Ր Յ.

Ում չը ծառայեց խոնարհ
Որին մէկ որին վեց դար,
Այն հայր ան հայ տղան
Որին կոչում են վատթար:

187. Հ Ա Յ Հ Ա Ր Ս Ե Ր.

Դասէ դաս դասէ դաս անցնող, գնացող
Հայի հարսեր, ձեր մէջ մի հատ աղջիկ կայ,
Միջնորդ եղէք իբր բարի ակնածող
Ընտրեցէք նորա համար ինձ փեսայ:

Ափսոսում եմ երբ տեսնում եմ միայնակ
Գովէ քով է մանկալիս արագ արագ,
Մէկ ձեռքում հովանոց միւսում պայուսակ
Կարաւի պէս քայլում է ինչպէս հսկայ:

Նա էլ ձեզ պէս, մի մօր մի հօր անդրանիկ
Աղջիկն է ձեզի նման գեղեցիկ,
Թողէք, նա էլ ձեզի նման երջանիկ
Օրեր տեսնի այս լոյս աշխարհի վերայ:

Խնդրում եմ աղաչում եմ, հարսեր ջան,
Որ շուտափոյթ երթաք հարսնախօսութեան,
Մեզ հաոցրած յաւիտենական միութեան
Թառսիւնուս պէս ձեզ կունենար մի ծառայ:

188. Դարերի ընթացքում փոփոխութեան չը ենթարկուող Շիրեաստայ
կոչուած երգի եղանակաւ:

Հասկանում ես հիւնադ եմ,
Ինչ քննեմ ինչ քանդեմ,
Թողիր գիրկդ ընկզմութիւմ
Թէկուղ հոգիս աւանդեմ:

Համ աղբիւր ես համ զետ ես
Համ կերթաս համ կը գիտես,
Ամեն բան ասել չուզեմ
Դուն ինձանից լաւ գիտես:

Թէն հեռու երկրում,
Յարգում եմ համակրում,
Քանդի կրակ ես վառել
Թարմ սրտիս խորքերում:

Ի դուր մինչի Սսխասպատ
Գնացիր անհամեմատ,
Տասը տարի սիրածիդ
Ցաւ ու դարձր թողիր շատ:

Հովհարիս զեփիւռից
Պաղ պաղ աղբիւրի ջրից,
Սիրուն ես կտրմիր վարդից
Նախշուն ես Համասփիւռից:

Աւաղիր չքաւոր եմ
Վառուած եմ սղաւոր եմ,

Աչք է տեսնում սիրտ սիրում
Ել ես ինչ մեղաւոր իմ:

Այսօր քեզ տեսած պիտի,
Հետդ քիչ խօսած պիտի,
Սրտիս միջի ցաւերը
Մէկ մէկ քեզ ասած պիտի:

Համասփիւռս իմ դուն ես
Համասփիւռից նախշուն ես,
Շատ տուն քար ու քանդ կանես
Այդ գոյնը որ քեզ ունես:

Ինձ միայնակ թողեցիր
Ինձ ոտքի տակ թողեցիր,
Քանդեցիր հօրս տունը
Դռները փակ թողեցիր:

Գեղունակ ես ինձ համար
Ազունակ ես ինձ համար,
Ինչ կնեմ սե ազոււր
Դուն ոտխակ ես ինձ համար:

Հաց կուտան խեղճ սովածին
Ջուր կտան ծարաւածին,
Այսքանը հասկացրէք
Այն տունը քանդուածին:

Գիշերը կարճացել է
Քունս քաղցրացել է,
Ցաւեր չ'տեսած սիրտս
Շատ ցաւի տիրացել է:

Գարունը բացուելու էլ

Ծառերը ծաղկելու էլ,

Մէկ եկար հիւանդ թողիր

Մէկ էլ հոգիս տալու էլ:

Ես Մինան եմ կին Թինուն

Գրում եմ մի պատմութիւն,

Սիրոս ցաւերով լցուած

Աչքերս արցունք արին:

Նստած մի անապատում

Բաղդիցս եմ դանդաղում,

Հալածուած հայրենիքից

Աւերակ Առխարատում:

Տանջուում եմ գիշեր ցերեկ

Օրեր վատնում սրտաբէկ,

Յիշելով առաջ անցկացրած

Աղբիւ ժամերս մէկ մէկ:

Կորցրել եմ իմ նախկին

Սիրած եարս թանկագին,

Որի համար օր, օր, օր

Արտասվում եմ լալաղին:

Բաժանուած սիրեկանից

Թանկագին սիրեքանից,

Որի սէրը մինչ ցմահ

Ձի հեռանալ ինձանից:

Թէև մտած գերեզման

Վերստ ձգած մի արձան,

Սիրեկան պիտի դռամ

Սառ զերեզմանի խորքան:

Ես եմ, տարաբաղդ մի ջան,

ձարած մի հատ նոր Թինան,

Որի հետը յաւիտեան

Պիտի մնամ դաւաճան:

Թէև անկարգ անկանոն

Ինձ տուած աշպաղ Թինուն,

Մի կարծիք կը մոռանամ

Իմ եարի անմահ անուն:

Վարդ ունիւմ ուրիշ համի

Վախում եմ չուտ թառամի,

Քանզի վաղուց է վարվում

Բաղդս ինձ հետ թշնամի:

Շատերին մի սպասիր

Դուն ինքդ քեզ վիտսիր,

Արի իմ մօտս նստիր

Ինչ ուզում ես ինձ ասիր:

Նստել եմ, վեր եմ կացել,

Շատ բաներ եմ իմացել,

Ինձի կմաղք դարձնող

Վէրքերի եմ դիմացել:

Լսիր սոխակիդ ջանքը,

Ընդունիր արշաւանքը,

Քեզ վարդ ասել չեմ կարող

Կարճ է շինում վարդի կեանքը:

Իբր ծով հանիր կոհակ
Ծեփիր սրտիս համարձակ,
Թույլ այգիքանով իմ սիրտը
Ստանայ քեզնից փափակ:

Դռնն նաւ եղիր ես նաւակ,
Կամ դռն մակոյի ես թիակ,
Մերթ աջ, մերթ ձախ, մերթ առաջ
Ընթանանք արագ արագ:

Անպիտան քաղաքիս վերայ
Մարդ չ'կայ չը զարմանայ,
Ումին սրտով սիրում եմ
Տանջում է ինձ անխնայ:

Մի տոնջիր ինձ աննման
Մի չարչարի սիրեկան,
Կեղծ սիրով կեղծ խօսքերով
Խօսմունքդ չէ բաւական:

189. Հ Ր Ա Ժ Ա Ր Ա Կ Ա Ն Ե Ր Գ.

Մնաս բարեաւ իմ նազելի
Իմ մանկական աշխատանք,
Հեռանում եմ անտանելի
Քեզ մօտ թողնում սէր և կեանք:

Զիմանալով, որ դու խարդախ
Սիրեկան ես ինձ համար,

Ամեն օր աներկիւղ անվախ
Ինձի տանջող չարաշար:

Հէնց այս մասին թքում եմ քու
Փարթամ մեծ մեծ ծծերիդ,
Ճանաչելով քեզ անհլու
Եւ ունեցած կեղծ սէրիդ:

Որը տասը տարի թամամ
Պաշտեցի պէս հերոսի,
Զիմանալով որ անզգամ
Աղջիկն ես դու Բագրսի:

Հեռանում եմ, պիտի գնամ
Ով գիտէ ինչպէս աշխարհ,
Բայց մի կարծիր կմոռանամ
Գէշ անուկդ ով Սիթար:

Որը մինչ օրս ինձ համար
Թանկ էր ամեն մի քանից,
Թանկ էր ինչպէս լալ ու գոհար
Աղամանդ շնդկաստանից:

190. ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հ Ա Ր Ց.

Ի՞նչն է ստիպում մարդ վատ լինելուն
Եւ ի՞նչն է չարժում քէնը նախանձը.
Ի՞նչն է նպաստում այդպէս լինելուն
Եւ ի՞նչուց է առաջանում թախանձը:

ՊԱՏԱՍԽԱՆ.

Տգիտութիւնն է ստիպում մարդ վատ լինելուն
Զրկամութիւնը շարժում քէն ու նախանձը,
Եսականութիւնն է նպաստում այդպէս լինելուն
Ռամկութիւնն է առաջ բերում թախանձը:

Հ Ա Ր Յ.

Այն ով է աշխարհում ապրել չի կարող
Նորան պէտքէ մի հատ ուրիշ ցոյց տուող,
Այն ով է չի ուզում թէ և ունի փող
Ումին է շատ սիրում կայքը ու զանձը:

ՊԱՏԱՍԽԱՆ.

Կեանքի անծանօթը ապրել չի կարող
Նորան պէտքէ մի հատ ուրիշ ցոյց տուող
Մուտան է, չի ուտում թէ և ունի փող,
Նորան է շատ սիրում կայքը ու զանձը:

Հ Ա Ր Յ.

Այն ինչ մարդ է ինչ տեսնի կ'զարմանայ
Մանանին հաց կասէ, հացին մանանայ
Կը հարցնէ այս ինչ է այն ինչ բանայ,
Արձակ թողած, լայն բերանի մեծ սանձը,

ՊԱՏԱՍԽԱՆ.

Զ'տես մարդը ինչ տեսնի կը զարմանայ
Մանանին հաց կասէ, հացին մանանայ,

Կը հարցնէ այս ինչ է այն ինչ բանայ
Արձակ թողած, անհամ բերանի սանձը:

Հ Ա Ր Յ.

Այն ով է աշխարհում պատուի արժանի
Արժան մեծ գովեստի մեծ գովասանքի,
Այն ով է, որ վատ չի ասիլ մէկ բանի
Այն ով է, որ միշտ կ'գովի իր անձը:

ՊԱՏԱՍԽԱՆ.

Բարեգործիչ մարդն է պատուի արժանի
Արժան գովեստի մեծ գովասանքի,
Խելօք մարդը վատ չի ասիլ մէկ բանի,
Յիմար մարդը միշտ կ'գովի իր անձը:

191. Օ Ր Ե Ք.

Մէկը մէկից նախշուն մէկը մէկից լաւ
Օրեր եմ անցկացնում խաւարի նման,
Որի արթիւ աշխարհի ամեն մի ցաւ
Քաշելով տանջվում եմ տկարի նման:

Առտանդանուած ընկած այս ու այն կուճան
Բաղդ եմ փնտռում, տէր ամեն մի տրտմութեան,
Մէջ այս երկբայութեան մէջ այս տխրութեան
Տատանում եմ պանդուխտ, օտարի նման:

Ի՞նչպէս մակոյկ ընկզմուած խոր ծովում
Անմխիթար տակն ու վրայ եմ լինում,

Մերթ կոհակի, մերթ ալիքների ճանկում.
Շարժումս հմ մոլոր շուարի նման:

Թառսիւնին հմ, ասլուդ այս կերպ, այս տեսակ
Հալիւդ մաշիւդ անհամար հոգսերի տակ,
Շատի մօտ անխօս հմ, շատի մօտ խօսնակ
Շատի մօտ չ'լարուած քնարի նման:

192. Ա Ղ Օ Թ Ք.

Արբայ Արարածոց, Արբայ երկնային
Քեզ հմ խնդրում, Քեզ աղաչում ամեն օր,
Բաւ է որքան ինձ թողիր աստին անդին
Զեւրս դատարկ. ոյժս հատած, գլխակոր:

Խղճայ խեղճիս, մի թող աստանդանուած
Դայնից հիասթափուած պատկերից զրկուած,
Տանից, տեղից, հայրենիքից անջատուած
Դջլտուած մնացած ոլոր մոլոր:

Օգնութեանդ նայելով մնացած հմ
Մոլոր, շուար, օտար աշխարհ ընկած հմ,
Բացի քեզնից, էլ ում զիմեմ ում հայցեմ
Որ թողի զիս ուրախ անարտասուած:

Թառսիւնին հմ, Տէր իմ, զլխաքարշ խոնարհ
Կարօտ օգնութեանդ անքուն անդադար,
Քանզի Դուն հս անմահ, Դուն հս կենարար
Դուն հս թագաւորաց անմահ Թագաւոր:

193. Հ Ե Ղ Ի Ն Ա Գ Ի Ն.

Բմաստուլթեան զիտուլթեան հեղինակին
Պարզեում հմ իմ բոլորը, իմ դատը,
Հետեկելով ինձ տուած հա դանակին,
Շատ է և շատ կ'մնայ իմ գանգատը:

Քանզի պաշտպանելով այդ օրինակը
Սյդ մարդաշահ նախատակը, փախազը,
Ինձ մօտ հիմնուեց, յիմարների բանակը
Հատազլուխների ամուր շտատը:

Ունենալով հս ձեր փայլուն եռանդը
Քաղափարը, զիտուլթիւնը, տաղանդը,
Անշարժ լծագեց իմ ժպտը, իմ խանդը
Խեղ ու մարի և ճնորհրիւ աղքատը:

Որը իմ միջոցաւ իրան կարափեց
Ամեն գործի, ամեն բանի շօշափեց,
Արիւնս իմ ծծեց, սիրտս իմ լափեց
Վայրենի զազանի խիստ համեմատը:

Անկոչ կերպով եկած, նստած իմ դասում,
Ինչ որ բերանն է դամ, այն է ինձ ատում,
Մէկին գիծ անուանում, միւսին բամբասում,
Իրան շինած երկրի սպառազատը:

Արծուին տատրակ, տատրակին առձիւ
Ատում, աղմուկ է հանում ինչպէս անիւ,
Վիճում, հակառու է անհամար, անթիւ,
Զ'իմանալով բանի հիմը հաստատը:

Ամեն հաղից գողանալով մի հատ բառ
Իրան բանաստեղծ է անուանում կայտառ,
Ունեմ հանճար, ունեմ տաղանդ, եռանդ վառ
Զիմանալով ով է Հայկը, Տրդատը:

Սանձը արձակ թողնելով լայն բերանին
Թթու չասիլ իւր մածունին, իւր թանին,
Շահը խանին կտայ, խանը սուլթանին
Մէկ կարծելով Ալին ու Մուհամմատը:

Ինքն իրան կ'անուանէ հանճարեղ
Յովսէփից գեղեցիկ, Արայից շքեղ,
Մէկին գեղ անուանելով, միւսին տգեղ
Իրան շինած Վրաստանի թաւաղը:

Ինչ տեղ նստէ իրան գիտուն կանուանէ,
Գիտունների մէջ բանի բուն կանուանէ,
Թառսիւնուս տունին հաւի բուն կանուանէ
Իրա տունը մեծ արքայի պալատը:

1893 թ. Դեկտեմբ. 25-ին

Ղ. Ղ. Ս. Ս.

194. ՂԱԼԱՐԻ ԲՈՒՐԹՈՒՆԱՅԻՆ.

Շուռ արի, պտուտ արի,
Բուրթունային լաւ պարի,
Թող քեզանով շահուն
Մարդիքը մեր Ղալարի:

Նայողի սիրտը շահի,
Աստուած եղբայրդ պահի:

Այսօր կանք վաղը չ'կանք
Մահը մերն է, մենք մահի:

Դէ՛հ արի, արի մօտս
Մտիւր սառած խտիտս,
Լաւ պարի Բուրթունային
Լքցրու իմ կարօտս:

Արի, արի խորոտիկ,
Արի, պարի ինձ մօտիկ,
Կրկրչայ կաքաւի պէս
Թռթռայ ինչպէս լորիկ:

Հոգիս առաւ աչքերդ
Ուշ ու միտքս ունքերդ,
Ինձ այս օրին հարցրուց
Վարդանման պատկերդ:

Արի, աննմանս դու
Ազնիւ սիրեկանս դու,
Անսպեղան ցաւերիս
Դեղատու լողմանս դու:

Քեզ նման չ'կայ մի հատ
Շատ բանով ինձ համեմատ,
Որ ջան ասեմ, ջան լսեմ,
Համբուրեմ ազատ ազատ:

Բացիր կուրծքդ լայնալիւծ
Փարէ գիւ ինչպէս մահիւն,
Այսպէս, այսկերպ, այստեսակ
Կանուանես ինձի բժիշկ:

195. Թ Ա Ս Ն Ի Յ (Կեկելի եղանակաւ).

Մինչ երբ մնամ քեզ սիրահար, Կեկել ջան,
Մինչ երբ թողես ինձ խելագար, Կեկել ջան,
Մինչ երբ մնամ այսպէս տկար, Կեկել ջան,
Մինչ երբ չանհոս վշտերիս ճար, Կեկել ջան:

Թերի չես, որ նոր խրատ տամ ես քեզի,
Գառնամ մի հատ, նոր բարեկամ ես քեզի,
Ասած կ'լինիմ քանի անգամ ես քեզի,
Ինձնից աւել չունիս մէկ հար, Կեկել ջան:

Արի հոգիս, հետդ մանւար եմ ուղուս,
Շամամներդ մէկ մէկ ձեռքդ տալ եմ ուղուս,
Խակ է հասած, ողջ իմանալ եմ ուղուս,
Իբր զնոց մի սովորարար, Կեկել ջան:

Արի, արի, մենք մեզ լինինք վարժապետ,
Մի տեղ գտնենք, առաձնանար իրար հետ,
Ես քեզ պարկեմ, դու ինձ պարկես շահաւետ,
Զ'բամբաստին մեզնից Ղղար, Կեկել ջան:

Ձէ, մի ասիր, վատ բան է, իմ անտիկայ,
Ձէ, չէ բանից աշխարհում վատ բան չ'կայ,
Միայն եթէ քո սիրտն էլ բան զգայ,
Զ'թողնես խալխին անսատար, Կեկել ջան:

Արեւմտայտեղ հառ ու հաս չ'կայ
Նոր ուսալու կարգալու դաս-մաս չ'կայ,

Բացի օգուտ մի հատ բան վնաս չ'կայ
Ունքերդ կեռ, նախշուն նիկար, Կեկել ջան:

Ուր զնում ես, ինձ էլ հետդ տար, կուգամ
Զգում եմ որ քեզի շատ յարմար կուգամ,
Մէկ օր թառով մէկ օր առանց թառ կուգամ
Իբր քեզի սփոփարար, Կեկել ջան:

196. Ն Ե Մ Կ Ա Յ Խ Ա Ն Ո Ի Մ.

Նեմկայ, խանում որտեղացի ես
Սիրուն ես Գերմանացի ես,
Ոչ Հնդիկ, ոչ Չինացի ես:
Զեր տուն չ'կանչուած եմ գալու,
Հագած ու փրուած եմ գալու,
Խմած, լուլ դառած եմ գալու:

Երբ նստում ես պատուհանում
Մերթ գիր գրում, մերթ կար անում,
Հոգիս ինձանից ես հանում,
Զեր տուն չ'կանչուած եմ գալու և այլն...

Դուն ինձ մօտեցիր, ես քեզի,
Իմացած վերջն զի է զի,
Թշնամի շատ ունինք մեզի:
Զեր տուն չ'կանչուած եմ գալու և այլն...

Արի այդ վարմունքը բռի
Վայելինք աշխարհում ձրի,
Առանց պատժի ընկնենք գերի:
Զեր տուն չ'կանչուած եմ գալու և այլն...

Թողիր խալիսը ինձ քեզ տանն

Իմ քո սէրը անհատատանն,

Մէկ մէկու անհամեմատանն:

Ձեր տունն չ'կանչուած եմ գալու և այլն...

Ուր գնաւ ինձ էլ տալու հետո

Նստեմ վերկենամ քո մօտը, քո գոգ

Երկար չքաշեմ կարօտը:

Ձեր տունն չ'կանչուած եմ գալու և այլն...

Գիտացիր ես նոր չեմ ընկերդ

Որ դրեմ հակադատներդ,

Մաշելով դիս անտէր սէրդ,

Ձեր տունն չ'կանչուած եմ գալու և այլն...

Թէ խելք ունիս մի վազդի,

Խելքդ կապիր բարակ մազի,

Թիւնին քեզի հայր կ'սազի:

Ձեր տունն չ'կանչուած եմ գալու և այլն...

Յետ այնու թող մեզի Ղզլար

Որոնէ ընկած քարէ քար,

Ինչ փոյթ նորանց, չեն դինազար:

Ձեր տունն չ'կանչուած եմ գալու և այլն...

197. ՀԱՅ ԱԶԽԱՐՀ.

Օր մը մեզի ուրախ լուր

Չը աւետեց Հայ աշխարհը:

Որ մեր սրտերը տխուր

Ստանաւ մի սխալմանը:

Քաշ մ'նաց գլուխներս

Օր օր, օր վիզ ճկելով,

Կարճ մ'նաց ձեռքներս

Ուր ու ձեռք համբուրելով:

Պրին գլխակար խոնարհ

Պաշտեցինք վեց գար թամամ,

Նա մեզի անգլծարար

Հալից, մաշեց անխնամ:

Ու մօթը դրադ դրած

Յոյց տուաւ ամեն մի բան,

Սիրուններով Հայկազանց

Լցնելով հարեմխանան:

Պահել ու պաշտել տուաւ

Մեզ իւր անուէր գութանը,

Որի մէջ չ'կայ բնաւ

Օրէնք ու դատաստանը:

Ոյժմ ինչպէս վիշապ օձ

Մեզի կապտալ կը ցանկայ,

Որ զայց տայ արբարածոց

Էլ աշխարհում հայ չ'կայ:

198. ԵՐԱՆ ՈՒԹԻԻՆ.

Երանի նորան, ով որ իւր աչքով

Կտեսնի թուրքին բնաջինջ եղած,

Չար վաղիչահը նազիր վաղիրով

Աշխարհքի միջում մի խելքի եկած:

199. ՄԱՅԻՍԸ ՂԶԼԱՐ.

Ապրիլը անցաւ, Մայիսը եկաւ
Իւրաքանչիւրին իրանը բերաւ,
Հողս ունեցողին հողս, վէրք ունեցողին վէրք,
Դարդ ունեցողին դարդ, ցաւ ունեցողին ցաւ:

Այս ի վերուստ է երկրին ընծայ,
Այսպէս եկել է, այսպէս էլ կերթայ,
Թէն շատ մարդիկ շատ բան մտածեն
Ամեն մարդ իրա դարդը կունենայ:

Մէկը միշտ ուրախ, գուարթ, անտրտունջ,
Կունենայ վարդից քանի քանի փունջ,
Միւսը մի անհոտ ծաղիկի կարօտ
Օրեր կը վատնէ, անտէր անտէրունջ:

Այսպէս է անցնում Մայիսը հալարտ,
Շատերի համար չ'բերելով վարդ,
Հէնց այս պատճառով, այսքանի առթիւ
Իժպոհ է ինձ պէս քանի քանի մարդ:

Կարծես այսքաննէ հէնց արգելք լինում,
Հպարտ Մայիսը երկար չէ ապրում,
Շուտ գամ է բացւում, շուտ էլ թառամում
Յուլիսի փուշոտ աօթերին հասնում:

Սոխակը միշտ վարդին, վարդը միշտ սոխակին
Երես չ'տեսած իր ժամանակին,

Յանկարծ կ'տեսնես մայիսը անցաւ
Թողեց խեղճերին տխուր լալապին:

Ահա բեղ ամբողջ մէկ տարուայ կայտառ
Շքեղ մայիսը, ծաղիկը պայծառ,
Որի մէջ վարդը, սոխակը տրտում
Մէկ մէկու կարօտ ապրում են թշուառ:

1893 թ. Մայիսի 15-ին
Ղ զ լ ա թ.

200. ԲՈՂՈՔԸ ՎԱՐԴԻ.

Թէն մինչ կոկորդ օգտի մէջ խրուել
Ոչ մարտը մարտ է, ոչ ապրին ապրիլ,
Ոչ մայիսի պէս միշտ գոհնիկը
Որի մէջ վարդը դժբախտ է մեռել:

Կարօտ մի անմեղ տխուր սոխակի
Մեղեղի երգին անուշ հուապի,
Կնքել է հողին սոխակ վայ տալով
Շրջանը մտած փուշի տատասկի:

Ել լինէն առեմ գոռոզ մայիսի,
Որի մէջ վարդը, անբաղդ պիտ մեռնի,
Թէն տասնիմէկ ամիս սպասած
Ընկնելու համար գիրկը սոխակի:

201. Մ Ո Ւ Խ Ա Մ Մ Ա Ջ:

Էս թողացած ոտքերովս դէպ քեզ ընթանալ եմ ուզում,
Ամեն օր, ամեն գիշեր, քեզ մօտ դնալ զալ եմ ուզում,
Մեծի մօտ, փոքրի մօտ նստել, տրտնջալ եմ ուզում,
Պատահողից հարցնում եմ, տեղդ իմանալ եմ ուզում,
Եթէ դժուար ես երևում, կատարեալ ողբալ եմ ուզում,
Գիտմամբ ոչ թէ անգիտութեամբ քեզ գրկած մանկալ եմ ուզում:

Յանկանում եմ, որ դու լինիս ողջ աշխարհի մեծ իշխանը,
Արեւելքից մինչ արեւմուտք, շարժուի քո հրամանը,
Թէ տեղի, թէ անտեղի, բունը լինի դատաստանը,
Թշնամուդ դրախտը դառնայ կօշիկներէիդ պատուանդանը,
Որ քեզ մօտ դանն դիարաթ, երանի, շահը սուլթանը,
Երկնային իշխանի մօտ էլ գործդ անսխալ եմ ուզում:

Քեզ ատողի տունը քանդուի, երեսները եթիմ մնայ,
Անունը, ցեղը և ծուլը ջնջուի աշխարհի վերայ,
Մէկ կտոր չոր հացի կարօտ, գուռէ ի դուռը մուրանայ,
Որ լաւութեան փոխարենը, վատութիւն գտնէ անխնայ,
Յիշէ Աստուծոյ գաղատտանը, ինքը իրանից զարմանայ,
Ստանալան չարիքներում, նորան չքանալ եմ ուզում:

Հասկացիր, լինչ եմ ասում, լինչ է ուզածս անդրանիկ,
Դօստի մօտ, դուշմանի մօտ, Տէրք քեզ պահէ երջանիկ,
Օգից, արեւից գրկուած, ծաղիկի նման չնաշխարհիկ,
Թանկագին անուն ունենաս աշխարհի միջում մի հատիկ,
Թառսիւնի երգիչիս համար դուն ես, դուն հոգիս գեղեցիկ,
Այդ մասին էլ Աստուածանից քեզ բարի աւհալ եմ ուզում:

202. ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳԻ ԳՈՎԵԱՏՔ:

Գովաբանեմ սուրբ անունդ, որ ինք գովական սուրբ Գէորգ,
Եւ օտար ճանապարհորդի լինիք պահապան, սուրբ Գէորգ,
Մեծ անուանի սուրբեր շատ կայ. դուք էլ նոյն նման, սուրբ
Գէորգ,

Շատ ուխտաւորներ ունին, ողջին գովական սուրբ Գէորգ,
Կստանաք դուք սուրբ մատաղներ, հոգեւոր իշխան, սուրբ
Գէորգ,
Ուղիղ սրտէ ուղտաւորին կտար անգին բան, սուրբ Գէորգ:

Ձորս բոլորը սուրբ տաճարիդ բոյնն է անուշահոտ ծառ,
Որոնք գնան պղտոր սրտով, միշտ յետ կուգան դժբաղդաբար,
Մէջ նեղութեան մնացողի, ով դու սուրբդ արա մէկ ճար,
Որոնելով այս աշխարհս կ'վկայեն խղճմտաբար,
Իսկ ճշմարիտ վկայողին, խելոյն կ'ձգեն դարիվար,
Ձեր սրբութեան շնորհիւր օգնէք զանազան, սուրբ Գէորգ:

Խնդրեմք ի քէն աղերսանօք, սաղատանս թերի չանէք,
Սրտաբոլբոջ դիմեալ սէրս, պահել անյայտ վերի չանէք,
Լսելով ջինջ աղերսանքս, չար նուխադաց գերի չանէք,
Բարի նախանձս կատարէք, չար իշխանաց սէրի չանէք,
Երջանկութեանս զարմանան, անյաջող անդերի չանէք,
Դուք ջերմեռանդ հայցեցողին հղիք պահապան սուրբ
Գէորգ:

Թառսիւնիս քեզ է տեսնում, պատմական վանքը Աղլարի,
Մեծի մօտ, փոքրի մօտ, պարծանք ու փառքը Աղլարի,
Մերթ վնասը հալածող մերթ տառապանքը Աղլարի:

Յաւից, փորձանքից հեռու պահպանող, կեանքը Ղզլարի,
Լսելով սրտաբուլիս ջինջ, պապատանքը Ղզլարի,
Պահել ես սուրբ զորութեամբ, չքեղ մենաստան սուրբ Գէորգ:

1894 թ. Յունիսի 15-ին
Ղզլարում.

203. Ղ Ո Ղ Մ Ա Յ.

Յովմունքը արեւի, պարզ լոյսը լուսնի
Ծածանուիլ չը կամի ինձ փերայ կայտառ,
Նոյնպէս միշտ ցոլացող արփին երկրնի
Կամենում է ծածկել իր դէմքը պայծառ:

Սև ամպերով ծածկուած իմ երկնականար,
Փչել չուզէ անգամ մի հով կենարար,
Դիչերներն նման օրերս խաւար
Անցնում է, գնում, թողնում զիս թշուառ:

Թառսիւնիս այս եմ վայելում չարաչար,
Թէև նորափթիթ մանուկ մի նկար,
Հենց այդքանի առթիւ, այդքանի համար
Տատանվում եմ առած մի թառ, մի շաւառ:

204. ԱՌ ԱՐԺ. Գ. Բ. Մ...ԵՍՆՅԻՆ, ՂԶԼԱՐՈՒՄ.

Ասում են այսօր մի թուրք ես հայացրել,
Հին հաւաւը փոխել, նորը հաւցրել,
Մինչև օրս պահած, պաշտած, ընդունած
Մհամադին հէր մոռացաւ, չես հարցրել:

Ինչո՞ւ թողեց այն թշուառի Ղուրանը,
Նորից սիրեց մեր սուրբ Աւետարանը,
Ի՞նչ պատահեց, ինչ հասկացաւ նորանից
Մեծութիւնով ընդունեց Աւագանը:

Այդպէսները միթէ բիշ է մեղանում,
Ոչ ազգային դորձումը կան ոչ բանում,
Թողած ամեն մարդավայել գրազմունք,
Ինչո՞ւ քիչ նմանին են դաւաճանում:

Նամանաւանդ բանիւր կայ Ղզլարում,
Բօշ ու պարապ ման են գալիս բազարում:

Որոնց նորից մկրտիլ է հարկաւոր,
Նշանակել հայկական մեծ դաւթարում:

Այդպէսներին մկրտեցէր դուք նորից,
Ինչ են, ինչ հեն պտրտեցէր դուք նորից,
Դժուար բան չէ, սուրբ Գէորգ պնալ գալիս
Վատ արմատը կտրտեցէր դուք նորից:

Ես գժգո՞հ եմ, որ թողեց Մուհամմադին,
Մարից գցած համ մուլային, համ դադին,
Շատ չի քաշիլ մեր մեծ պատից դուրուած
Կ'մոռանայ նաև թաղայ հաւատին:

205. ԱՐԺ. Գ. Բ. Մ...ԵՆՑԻՆ

Սուրբ Աստուածածնայ եկեղեցում ասած մի հատ քարոզի տպաւորութեան տակ.

Լաիր զիտուն, թող վաստակդ, քեզնից լաւը գողն է հիմա,
Քեզնից ինձնից ընդունակը, գողի պահանջողն է հիմա,
Ճշմարտախօս քարոզիչը, մարդի տունը քանդողն է հիմա,
Բարօրութեան զեկաւարը, ամէն բան խօսողն է հիմա,
Աստուածապաշտ արարածը, ազգի միաստուն է հիմա,
Արժանապատիւ բահանան, պատուհան կոտորողն է հիմա:

Ինչքան որ դուն գիտուն լինիս, յիմար ու տգէտ կ'կոչեն,
Պարկեշտութեան տիպար լինիս, քեզ անշահաւէտ կ'կոչեն,
Հմուտ բժշկապետ լինիս, քեզ անփրկաւէա կ'կոչեն,
Լինիս ցաւոց սպեղանի, վարակիչ աղէտ կ'կոչեն,
Ուղղութեան կարապետ լինիս, չար մի արահիտ կ'կոչեն,
Պատուի, գովեստի արժանին, մարդ խափող, լափողն է հիմա:

Գիտուն լինիս պատիւ չունիս, յարգ չունիս աշխարհի վերայ,
Թէև լինիս գործիւ բանիւ, դեղեցկութեամբ ինչպէս Արայ,
Խօսիր, քարոզիր օգտաւէտ, քեզ կանուանեն սուտ մարդարայ,
Բացի այդքանը անտեղի, հազար բան կասն քեզ վերայ,
Ամեն օր ժամ հաճախէ, մոմեր վառէ, աղօթք արա,
Սրբակրօն ստեղծուածը, չար սերմ սերմանողն է հիմա:

Զուր բան է խելք գիտութիւնը, գործադրել ամեն ժամ,
Սպասելով տարեդարձի, յօբելանի ամէ ի ամ,
Թշուառ գլխիդ ժողովելով, հազար պատկերի չարակամ,
Անյայտ կանցնես այս աշխարհում, ջիւղ առանց թաղման դրամ,

Երջանիկը նա է այժմ, ով չի հարցնում հալալ հարամ,
Ժամանակիս ճգնաւորը, շուտիւն անողն է հիմա:

Թառսիւնի այդպէս խօսելով, մի կարծիր անհատ կ'անուանեն,
Իմաստութեան շտեմարան, գիտութեան արմատ կ'անուանեն,
Խիզարից էլ խելօք լինիս, խելքի աղքատ կ'անուանեն,
Վսեմ լինիս քան զմուսայ, անհամեմատ կ'անուանեն,
Լաւ երգես, լաւ նուագես, էլի քեզ վատ կ'անուանեն,
Գորեշտինը, Ազլարի գարմոն ածողն է հիմա:

206. ՅՈՒՍԱՀԱՏԻ ԱՂԹԹԲԸ.

Աղաչում եմ քեզ Աստուած
Խնդրում եմ բազկատարած,
Կամ աղատիր ինձ այս ցաւից
Կամ առ հոգիս քո տուած:

Ինչո՞ւ համար մի ժամանակ
Արժանի ե ընդունակ,
Լսում էիր դու իմ ասած
Լսում էիր ե աղաղակ:

Ի՞նչ պատահեց ե ինչ կղաւ
Որ մոռացար ինձ, իրաւ,
Յետ առար բոլոր տուածդ
Պարգևեցիր հոգս ե ցաւ:

Աղերսում եմ կանչում կրկին
Քեզի, ով Տէր Միածին,
Թէ մեղք ունեմ աղատիր ինձ
Թող չ'տանջուի իմ հոգին:

Բացի քեզնից էլ ում դիմեմ
Ում աղաչեմ, ում խնդրեմ,
Անթիւ անհամար հոգսերից
Որ ինձ աղատուած գտնեմ:

Ուրեմն տուր ինձ այն հացը
Որը շահ է իմ կենաց,
Թող այդ մատիւրից պարտ մնամ,
Ոչ թէ աշխարհի մարդկանց:

207. ՀԱՅ ԷՂՋԻԿ.

Թեթև քամուց տրորող շուրի նման,
Ի՞նչ ես ծովառովում աննման աղջիկ,
Կիտաղալար աշխան տերևի նման
Թռթռալով ընկնում մի կուման աղջիկ:

Տրորող շուրի նման,
Ոչնախ տերևի նման,
Աչքեր ունիս հրացայտ
Կիզիչ արևի նման:

Ի՞նչ ես մանգամ մենակ մենակ Ղզլարում,
Մի կողմը ցեխ, մի կողմ չոր բուլուարում,
Ձեռ հարցնում Երուսաղեմեան համարում
Ով կայ նստած տրտում, դովաղան աղջիկ:

Գարունը բացուելուց եկ,
Ծառերը ծաղկելուց եկ,
Մէկ եկար հիւանդ թողիւր
Մէկ էլ հոգի տալուց եկ:

Գեղեցիկ թիւնդ հարստութիւն է ինձ համար,
Վարդ ու բարդ գիտութիւն է ինձ համար,
Խոհանութիւնդ երանութիւն է ինձ համար,
Թէ կը սիրես Թառիւնի գուտանն, աղջիկ:

Համ աղբիւր ես համ դետ ես,
Համ կերթաս, համ կ'դիտես,
Սմեն բան ասել չէ պէտք
Դուն ինձանից լաւ գիտես:

1894 թ. Օգոստոսի 11 իմ
Ղ. Ղալարում.

208. ԳԻՆՈՒ ՄԱՋԱՆԴԷՆ ՂԱԼԱՐ ՔԱԼԱՔՈՒՄ.

Մ ու լ ա մ մ ա գ .
Էս մաղանդէն մաղանդայ չէ, որ դու հանեցիր այս տարի,
Էս մաղանդով բան չի լինի, մէկ ուրիշ մաղանդայ ճարի,
Բազարը խարար մի անիլ, հօլայ գնա մարդավարի,
Քանզի հերթը քեզ է հասել, այս տարի լաւ կառավարի,
Մինչև աղաների գալը, մի անուն վաստակի բարի,
Որ ապրել կարողանան, քասիր բուսուրը Ղզլարի:

Եթէ քեզ էլ ունիս իշտահ, որ հետագ կանչեն աղա ջան,
Պէտքէ լաւ մաղանդա հանես, որ քո հօրը սղորմի տան,
Յիսուն կապէկը մի բան չէ, եթէ նորից որ զաս վերան,
Սյո էլ թանկ չէ, որ ասում եմ, ութսուն է լինում վեղբան,
Մէջ տեղը ալ ու սև բաներ կան, պղտորը զինա մի գուման,
Որի համար մի կվարտը, գուրս պիտի զաս անպատճառի:

Հասկանում եմ, որ դու չոքողով թողի՞ս ես կապել նոտարիւսով,
Ալ ու սև շիրան առել, գնիցը մի բան պակասով,
Որին զադատիով ես խաբել, որին վաւած պատիրոշով,
Եւ որին իբրեւ աղքատ փող չունենալու հաւատով,
Մարդիս այդ աղաթը թողիր, մանարի քո մեծի դասով,
Որ վայելել էլ կարողանաս երջանկութիւնը աշխարհի:

Ձեռքդ մէջքիդ դրած, քեզ աղայ ես անուանում,
Խալխին խափելու համար օրը մէկ մազանդայ հանում,
Մէկ երկու տակառի համար այս բազարն ես խարաք անում,
Քո գործը առաջ տանում, խալխի գործն ես խափանում,
Դորան առ ու տուր չեն ասիլ, իզուր բան ես ապականում.
Որ դուն էլ շատերի նման Տէր դառնաս հարիւր հազարի:

Թառսիւնին խնդրում է գինի առնելուց հեռանաս,
Փողդ շատացնելու համար, բաւական է ստորանաս,
Ով որ քեզ տալու է առնես, ումին տալու ես մոռանաս,
Դու ես ինձ պարտ, ես քեզ երբէք, ասելը հաստատ իմանաս,
Էլ աւել կը հարստանաս, թէ գնաս ազդդ ուրանաս,
Ինչպէս Վասակը ուրացաւ, սիրելի դառաւ Ղաճարի:

1894 թ. Հոկ. 5-ին Ա. Գլարում

209. ԲԱՆՈՒՆԵՆԱԿ.

Սարգիս Զինկիրեանցի վաթսուն և վեց ամաց պանդխտութեանը.
Տ Ա Ս Ի Թ Ա Ն Ը:

Հաղար ութ հարիւր վաթսուն մէկ թուին
Դառնութիւնը բաղդիս իջնելով արեան,
Փնտրելով ամբողջ Բալուայ միջին
Մենակ ինձ ցոյց տուեց դառն տեսարան:

Ամենածանր հիւանդութիւնը
Խոր և արմատացած թշուառութիւնը,
Սովը և ընդհանուր քաղցածութիւնը,
Մանաւանդ անխաղաղ կեանք ընտանեկան:

Բացի այդ, շատ բանից, շատ գործից զրկուած,
Պանդխտիկ ուղեցի նոր ամուսնացած,
Ձեռքն ամուսնուս մի գաւաթ լցուած
Ստացայ ըմպելու բաժակ անջատման:

Մայրիկս ախ ու վախ թափում շրթերից,
Քրօջս կուսական քնքոյշ այտերից,
Ամուսինս օձի թոյներ աչքերից
Ընկճուած ձեռքախաչ բազմոցի վրան:

Ասում են, մի գնալ դուն օտար աշխարհ,
Թողնել հայրենիքդ ընկնիլ քարէքար,
Մենք մինչ երբ սպասենք անքուն անդադար,
Մէկ օր քաղցած, մէկ օր ծարաւ այլոց տան:

Պակասութիւնը թոյլ չ'տուաւ լսելու
Մօր և քրոջ քաղցը խօսքը ահարկու,
Մնաս բարեաւ ասեցի, ով իմ Նազկու
Լոկ բալու թողնելով մի ապաստարան:

Մայրիկս սիրալիր թափում էր կրակ
Դողդոջուն ձեռքերով առանց թաշկինակ,
Մի գնալ հեռու տեղ, սիրելի որդեակ,
Մեզ պարգևած տրտմութեան մի օթեան:

Քոյրիկս միակերպ լալով, ողբալով
Հեկեկալով հեկեկանք կուլտալով,

Աղերսում էր վախկոտ վախկոտ մօտ գալով,
Ու խնդրում, մի թող մեզ անօգնական:

Բարեկամ, չարակամ ժողովուած մեր տուն

Ասում խօսում էին մէկ մէկուց սիրուն,

Ամենի խնդիրը թողած ասլարդին:

Դէմքս իմ շրջեցի դէպ Ռուսաստան:

Զը լսեցի ոչ մէկի աղիողսրմ

Աղերսանքը, որոնք ցնդեցին ի կողմ,

Ընկած թողի լալով ամենին մի կողմ

Առած ձեռքս պանդխտութեան գաւազան:

Մնաք բարեաւ, գոչեցի կրկին անգամ,

Մէկ համարած չարակամ ու բարեկամ,

Մէկ օր բոբիկ, մէկ օր քաղցած ման եկամ

Ընկերացած թուրքի, բրդի հետ համան:

Բանի ամիս անցուցի ցործ չճարած:

Տուն նամակ չգրած, թէն խօստացած,

Այսօր չեղաւ վաղը աչքի տակ առած

Յոյսերով ինձ միշտ շահեւով մշտական:

Առաջիկայ տարում չապաշաւած

Գործում էի ամեն բան, ասլած ու մաշված,

Լաւ կ'իյնեմ Աստուծով, գեռ նոր եմ եկած

Խօսքերն էր թվում ինձ մխիթարական:

Երկրորդ տարումը ինձ կառափելով,

Աչքերիցս կից կից արինն թափելով,

Մէկից խափուելով, միւսին խափելով

Ապրում էի մէկ կերպ անբնական:

Երրորդ տարուն հասած, իմ անմեղ սրտին

Մէջը մի վառվռուն կրակ գցեցին,

Կախարդեցին նայած չար բաղդիս կամբին

Սառցըրած կրծքումս ազդ իմ, աղբակն:

Զորորդ տարում իմ անգին առարինի

Մի հատ չնաշխարիկ ապագայինս,

Նազու անուանուած խեղճ ամուսինս

Մոռացայ, գտնելով մի հատ այլադան:

Հինգերորդ տարումը կարօտ հայրենեաց

Գրաւեցին սիրտս չեղք այլազանց,

Մոռացայ բոլորովին սէր բարեկամաց

Իբր թող կամբի տէր, մի դիւրահաւան:

Վեցերորդ տարումը տխուր, սրտաբէկ

Յիշում էի կորցրած օրերս մէկ մէկ,

Լալում էի արտասուած գիշեր ու ցերեկ

Վիզս ծռած, ընկած այս ու այն կուման:

Եօթներորդ տարումը ձեռք բերած կայինք

Ցանկացայ զրկել դէպի հայրենիք,

Ասելով առ, ով անբաղդ իմ ընտանք,

Բաւ է էլ մի ուղասիր դու իմ գալստեան:

Ութերորդ տարում փոխարկուեց կրկին

Համաձայն ինձ մաշող չար բաղդի կամբի,

Աստանդանուած ընկած աստին ու անդին

Երջում էի ընդունած ամեն ատեան:

Իններորդ տարուն հասած ժամանակ

Բան չ'կար, որ ինձ չ'թուար դառնորակ:

Հալուստս հնացած, գրպանս դատարկ
Սիրտս դառած շատ հոգսերի դանձարան:

Տասներորդ տարում թէ ինչ նեղութիւն
Ենթարկուած վերք ստացած բազմազան,
Տանջուեցի, չարչարուեցի անդաման
Անիծելով շահերին պանդխտութեան:

Տասնեմեկերորդ տարու հաս կեանքով,
Ամեն մի բան ընդունում էի տանջանքով,
Կաշկանդուած օտարութեան կապանքով,
Ողբում էի կորցրած օրեր պատուական:

Տասներկուերորդ տարուն էլ հասայ,
Մաս ստացած ամենայն մի պատուհասայ,
Ամեն բան գրեցի, ամեն բան տեսայ,
Որպէս արսորական մտած ի գնդան:

Տասներեքերորդ տարում նուազուած
Հոգսերի մէջ, դարդերի մէջ շաղախուած,
Ուժս հատած, սանձը շրթուերիս թաղուած
Ընկած արիւնհարբու գայիերի բերան:

Տասնհորսերորդ տարում անօգնեայ
Շուարուած մնացած աշխարհի վերայ,
Յոյսս հատացրած, կամայ աւանայ
Բարուս չինած ինձի Արմաւիր աւան:

Տասնուհինգերորդ տարու վերջերում
Ձայն ունեցայ քանի մի պանդոկներում,
Մեռցրած մի անդամ սրտիս խորքերում
Սէրը Նազուկի պէս մի ընկերութեան:

Տասնևկէցերորդ տարում նորենոր
Ձգում էի յանցանքս, մեղքերս բոլոր,
Օգնութեան կանչելով երկնային մեծ Հօր,
Խեղճ թողած իմ ընտանիքին անպաշտպան:

Տասնևօթերորդ տարում ցնծութիւն
Ունէի տեսնելու իմ խիղճ ամուսնուն,
Գորան էլ չ'օգնեց նիւթականութիւն
Որի առթիւ կմայք դարձած եմ համայն:

Տասնևութերորդ տարում, իմ աչքին
Առաջը, ու ամպով պատած անազին,
Մնացի միայնակ տրտում լալազին
Տատանուելիս բան կորցրածի նման:

Տասնևիններորդ տարուն ենթարկուած
Շարժումսի գոյնաթափ հէրքս ճերմակած,
Մէջքս ծռուած ուժերիցս զրկուած
Կապկապուած մէկ նեցուկի օգնութեան:

Քսաներորդ տարում գնացի Բալու
Անմխիթար թողածներիս տնտեսու,
Սյդ Լի, թալուած բաղդ ունեցայ գտնելու
Իմ հայրենիք Հայաստանում Տաճկական:

Քսանեմեկերորդ տարուն էլ հասանք
Ալ կարմիր հագնելու տեղ կապոյտ հագանք,
Մեր կարծած յուսածը բոլջի մէջ գրանք
Գոնեայ չ'ստացած անուն Հայկական:

Քսաներկուերորդ տարու սկզբում
Գրականումս հացի փաւայ չէր շարժում,

Թէ՛ն այդպէս յարգվում էի համակրում
Շատի համար եղած իբր պատմաբան:

Քսանեքերորդ տարում յետզհետ,
Կրեցի աշխարհի ամեն մի աղետ,

Բրոնհիով բան չ'զտայ փրկաւէտ
Անթիւ, անհամար ցաւիս հանդիման:

Քսանեքերորդ տարուն երբ հասայ,
Տեղն ու տեղս հանգստանալ սկսայ,

Ամեն կոշում ընդունելով ինձ վերայ
Աննպատակ ինձ հանցրի այս օրուման:

Քսանեքերորդ տարում դառնորակ
Հիասթափուած կեանք էի վարում մի տեսակ,
Հալվում, մաշվում, չարչարվում էի միայնակ
Անթիւով հեղինակին օտարութեան:

Քսանեքերորդ տարիս էլ անցուցի
Լաւ լաւ օրեր, լաւ լաւ ժամեր կորցրի,
Սիրտս քար դարձրի, խիղճս մեռցրի
Ծաղր ու ծանակ եղած շատերի նման:

Քսանեքերորդ տարուն չ'հասած
Ստացայ կրելու ամեն մի հարուած,
Պանդխտութեան քաղցր ճաշակէն խափուած
Ես ինքս ինձ հասցրի անպատուութեան:

Քսանեքերորդ տարուայ մտնելուն
Սպասում էի լղձերիս մէջ հաստատուն,
Զիմանալով թէ ինչ կուգայ իմ գլխուն
Որք մինչ օրս կրած է ամեն բան:

Քսանեքերորդ տարիս էլ հասաւ,
Արագ արագ պարզեցիւմ ինձի ցաւ,
Մէկ օր քաղցած թողելով, մէկ օր ծարաւ
Յիշել տալով իմ անցեալը և ներկան:

Երեսուներորդ տարիս էլ անցաւ գնաց
Անցեալի և ներկայի հետ միացած,
Ես մնացի խեղճ ու մոլոր վայր ընկած
Կապկապած զիս պանդխտութեան կող չղթան:

Բաղդ ունեցայ վաթսուներկեց հասակի
Տէր մարդ դառնալ, առանց մի նպատակի,
Ոչ տէր մի կտակի, ոչ յշատակի
Եւ ոչ էլ դրամի իմ բաժին թաղման:

Յոյսս հատաւ, այսօր վաղը անելով,
Մէկը միւսից աւել գերադասելով,
Այսօր չեղաւ, վաղը կերթամ առելով
Ինձ հասցրած այս պատուին ու այս կոման:

Այժմ իբր պանդխտութեան մի տիպար,
Ինձ հասցրած այս կոշմանը չարաչար,
Չեմ ցանկանում այս բաղդը ես քեզ համար,
Հեռու ընկած եմ սիրելի ազգական:

Ինչ տեղ ծնուած ես, ինչ տեղ եղած ես
Որոնելով, ինչ որ ուզես կ'զտնես,
Անդից հեռու բնաւ փրկութիւն չունես
Թէկուզ լինես աշխարհի տէր մի իշխան:

Ապրիլ այնտեղ ինչ տեղ երջանկաբար է,
Օղբ, ջուրը մարդու սննդաբար է,

Ամեն բանից առաւել կենարար է
Մի հատ առիթ մարդկային երջանկութեան:

Հետեւելով օրինակին նախնեաց
Օձիբը բաց մի թողիք հայրենեաց,

Անիծելով մեզ նմանի օրինաց
Ի՞նչ ուզում էք որոնեցէք Հայաստան:

Դուն էլ լսիր այս դաստանը Թառսիւնի
Ում կարօտ ես դու նորան տես, նա քեզի,
Ոչ մէկին էլ քեզի կարօտ մի թողի
Քաղզ վնասելով ընկած այսու այն կուման:

210. ԱՐՑԱԽԵՅԻՆ ՈՒ ՍԻՆԵՑԻՆ.

(Թթու ջրի լանջակում վիճաբանութիւն).

Մէկ Սիւնեցի Արցախցու հանդիպելով,
Ես միշտ տեսայ նրանց վիճելու ժամանակ,
Իրար վիրաւորիչ խօսքեր ուզողելով
Ու գզելիս մէկ մէկու բուրդ ու բամբակ:

Արցախցին ասում է. «քանդուի ձեր տունը
Որ չը հիմնուի մէջը Վասակների բունը,
Որոնք իզուր ծծեցին անմեղի արիւնը
Ընդունելով ամեն մի հատ շահատակ»:

Սիւնեցին ասում է. «Արցախցի պարոն,
Դուք շատ էք ճանաչում աղզ և աղզութիւն,
Ինչ ժամանակ դուք ստացար կեղծ անուն
Քացակայ էր մեզանից ամեն Վասակ»:

Արցախցին ասում է. «չէք էլ դարմանում,
Որ մեզ մօտ է ամեն մի բան լոյս տեսնում,
Մեզ մօտ է կանաչում, մեզ մօտ է ծաղկում:
Նոր նոր մօղի բաներ, օրը մի տեսակ»:

Սիւնեցին ասում է. «լաւ եմ հասկանում,
Որ ձեզ մօտ է ամեն մի բան լոյս տեսնում,
Բայց ինչքան խորհում եմ, ինչքան մտածում
Ձեմ տեսնում ես միջին բարի օրինակ»:

Արցախցին ասում է. «ով դու անգգայ
Ձեր գործերին երկիր աշխարհ է վկայ,
Տեղ չ'մնաց, ողջ արիւր տակն ու վրայ
Առած աղքատութեան մէկ գէշ պայուսակ»:

Սիւնեցին ասում է. «ով անամօթներ,
Ցորեն հացը թողող, դարի ուտողներ,
Աշխարհիս յայտնի են ձեր վատ արարքներ
Որ դուք էք սրիկայ, գող և աւաղակ»:

Արցախցին ասում է. «դուք ձեր մեղարով
վնասներ էք հասցրել մեզ հաղարով,
Ձեզի պէտք չէ, ոչ ողջոյն տալ ոչ բարով
Որովհետեւ պատուի էլ է հակառակ»:

Սիւնեցին ասում է. «իրաւ է, իրաւ
Որ մեր մեղարն է ձեզ համար մի ցաւ,
Ապա յիշէ տեսնեմ ձեր ինչն է լաւ,
Որ մարդկային շարքում լինի ընդունակ»:

Արցախցին ասում է. «ինչեր ես թողած
Ինչեր ասում, ինչեր խօսում իմ դիմաց,

Օրի կէսը ծարաւ, իսկ կէսը քաղցած
Թափառում էր կեանք վարելով այլանդակ:

Սիւնեցին ասում է. «աշխարհիս վերան
Պէտք չէ ձեզի մտցնել մարդի շրջան,
Մարդկային կոչմանը, ճիշդ մի անարժան
Ստեղծուած էր շատ ցեղերի նմանակ»:

Արցախցին ասում է. «շատ չեմ խօսում,
Քեզի նման խօսքերով սրտի վնասում,
Միայն այն եւս դասում եւ այն եւս ասում
Վատ էք, վատ էլ պիտի մնաք շարունակ»:

Սիւնեցին ասում է. «ով յիմար դուռ
Միթէ կիսեմ կիսեմ դուր չէք խօսում,
Ձերը թողած, մերն էք հէնց բլբլում,
Մէկ համարած աշխարհում սե ու սպիտակ»:

Արցախցին ասում է. «յիմար էք, յիմար,
Ոչ գիտութիւն տաժեղ գիտէք, ոչ հանճար,
Ոչ մարդ գիտէք, ոչ մարդկային զաղափար
Ոչ օգուտ, ոչ վնաս եւ ոչ օժանդակ»:

Սիւնեցին ասում է. «յիմար անպիտան,
Ի՞նչ էր ձեր անցեալը եւ ի՞նչ է ներկան,
Բացի մի տմբալի մի Սողանդարեան
Ել ով կայ ձեզանում բարի յիշատակ»:

Արցախցին ասում է. իբր հարեան
Մէկ մէկ ասել չեմ կարում ամեն մի բան,
Դժուրի արժան ժառանգ էք ըստինքեան
Եւ պաշտպանող նոցա հրեղէն կրակ:

Սիւնեցին ասում է. «ձեր դործ ու բանը
ձարած ունի արդէն իւր պատմաբանը
Սուտ եմ խօսում, թող վկայէ Խաչանը
Իբր խալիսի խէյր ու շառի հեղինակ»:

Արցախցին ասում է. «աղա պիչ լակուտ,
Ի՞նչեր ես գլխիցդ դուրս տալիս սուտ մուտ,
Միթէ էլ չես գալու գնալու մեզ մօտ
Որ յիշես գոնեայ իմ հիւնի մահակ»:

Սիւնեցին ասում է. «ես չեմ կուտւմ
Քեզի նման հունի մահակ միտ բերում,
Գուցէ Սիւնեցին քաջ գտնուի այդ բանում
Քան թէ Արցախի այլակերպ հայ զաւակ»:

Արցախցին ասում է. «կորիւր այս տեղան
Ամեն բանի համար մի բաց իմ բերան,
Երբ չունէք դպրոց, չունէք վարժարան
Ոչ մարդիք էք, ոչ էլ մարդի նմանակ»:

Սիւնեցին ասում է. «եղբայր թանկագին
Բաւ է որքան գիմեցինք աստին անդին,
Աստուած տանէ մեր Օհանը, ձեր Թիւնին
Որոնք մեզ էլ ձեզ էլ, արին խայտառակ»:

Արցախցին, լիճող Սիւնեցու դիմացին
Խօստացաւ էլ չի խօսի կացին, կացին,
Երբ տեսաւ մենակ Թիւնին չէ դրացին
Սիւնեցուն անկիւնը ձգեց յապթանակ:

Թառսխնիս այսրանին մօտ գալով անվախ
Մէկին աջ վանեցի, միւսին դէպի ձախ,

Սիւնեցին դէպ Սիւնիր, Արցախցին Արցախ
Ամեն մէկին տալով, միւ թեթի ապտակ:

211. Հ Ա Յ Ի Վ Ի Ը Տ Ը,

(Վարժապետեանի յիշատակին):

Հայաստանի արեգակը
Արևմուտքէն խաւարեց,
Տաճկահայոց յոյս Ներսէս
Իւր սուրբ հոգին աւանդեց:

Այս էր գրել կրիտիկան
Հայի ներկայ վիճակից,
Մեծն Ներսէս գտաւ վախճան
Զրկուած մայր աթոռից:

Ո՛հ, վաշ աւաղ, թողեց գնաց
Հանգեաւ ի տէր վշտացած,
Մեզի թողած աստանդանուած
Դռնէ ի դուռը ընկած:

Արեմն, մեզ հարկաւոր է
Ողբալ, սգալ ու գոռալ,
Դէպ նենգ Եւրոպ օր ըստ օրէ
Աղաչել անինքնակալ:

Որովհետեւ բազմը հային
Շատ վաղուց է քնած է,
Այն օրուանից հայի հոգին
Թմրած ու աւանդուած է:

Հայի տղան այն օրուանից
Սոված դայի ճանկ ընկած,
Զրկուած է Հայաստանից
Կոյր դանակով ու մորթուած:

Հայ տղան այն օրից է
Շատերի մօտ վիզ ճկած,
Ոչ թէ հայ տղան շորից է
Ոտ ու ձեռքը կապկապուած:

Հայ տղան այն օրուանից
Խղճացած դժբաղդացած,
Հալածուած է հայրենիքից
Զէնքը ձեռիցը խլուած:

Հայի տղան այն օրուանից
Նստած մահու դարպասում,
Երեք քսան մէկ հարուածից
Ընկզմուած է խորին բուն:

Հայ աղջկայ կարմիր ու ալ
Հզուստները սև դառած
Բերկրանքը սուգ է, լաց, լալ
Հերքերը քայքայուած:

Այն օրից է տաճկահայի
Օրը նման խաւարի,
Արեգակը Հայաստանի
Պայծառ աստղը Խաս գիւղի:

212. ԹԱՄԱԶՈՎԻ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ.

Հարիւր հազար նազդ, դու մի բան թողիր,
Հարիւր հազարի էլ անգաստան թողիր,
Բայց տես, քանիսին մուրացկան թողիր
Քանիսի տուն, տեղ, աննշան թողիր:

Քաղաքի մէջ տեղը մի մառան թողիր
Քունջ ու պուճախը անսահման թողիր,
Բայց տես, քանիսին ցիր ու ցան թողիր
Քանի թշուառի զործ խափան թողիր:

Քանի հաստալիզ աղգական թողիր
Քեզպէս անպիտան մի իշխան թողիր,
Բայց տես, քանիսին անգութան թողիր
Ազրարը առանց մի լծկան թողիր:

Ոչ ամուսնացար գերդաստան թողիր,
Ոչ էլ մի ժառանգ օգնական թողիր,
Բայց պանդոկներում բազմադան թողիր
Ամեն ցեղից էլ սիրեկան թողիր:

Երկու երեք կառք սլալան թողիր,
Ոսկեզօծ սանձ ու երաստան թողիր,
Բայց տես, քանիսին պարտական թողիր
Գռները ընկած մուրացկան թողիր:

Որբայաւայել ննջարան թողիր
Պառաւած մօրդ գովական թողիր,
Ինչ շահ, քանիսին անգազան թողիր,
Քանիսի զաղան, զրկաման թողիր:

Այսքան բանը դու հաշտարխան թողիր,
Բոյիզ համեմատ մի նշան թողիր,
Բայց տես, քանիսին անգրպան թողիր
Գրպանը առանց մի թուման թողիր:

Քեզպէս քանիսին քեզ պաշտպան թողիր
Քեզ նման մատնիչ, դաւաճան թողիր,
Ինչ շահ, քեզ նման չար դաժան թողիր,
Երկրորդ վասակ, Մեհրուժան թողիր:

Քանի քանի բան դուն կենդան թողիր
Աշխարհում անմահ քն լախճան թողիր,
Բայց քեզ յիշելու ինչ արժան թողիր
Ասորախանն առանց վարժարան թողիր:

Մեռար վնացիր, լոկ արձան թողիր
Անունդ քեզ հետ գերեզման թողիր,
Բայց հոգուդ համար վառարան թողիր
Թառսիւնուս ձերսրում գաւազան թողիր:

Հաշտարխանում.

213. Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք.

Ա՛խ իմ հայրենիք, անուշ հայրենիք,
Ես մինչ երբ մնամ տեսնելուդ կարօտ,
Ոչ օրս ուրախ, ոչ կեանքս երջանիկ
Միայն քո սիրով վառում եմ անգութ:

Ա՛խ քո զլխիդ ամպը անպակաս
Սարերը տեսնամ մի արև ընկած,

Մի կողմը Կաղբէկ, մի կողմը Թումաս,
Շատերի նման ծաղիկներ բացուած:

Ա՛խ քո դաշտերում ինչքան լաւ կ'լինէր
Երբ ես տեսնէի հայեր բնակուած,
Ոչ թէ պարսկի պէս ապականուածներ
Տեսնէի լաւ լաւ տեղեր պաշարած:

Մի կողմը Գիլան, մի կողմը Կեկան,
Մի կողմը Սիւնիք, մի կողմը Ղափան,
Իրանց համարած անվախ աներկիւղ
Իբր մի երկիր, իրանց սեփհական:

Ա՛խ, քո վշիշան որոտն գետակ
Քանի մի սրսկէ յւր ջուրը մաքուր,
Օտքուղի պղտոր ջրի նմանակ
Մինչի Ս. Բաբսը մնալով թափուր:

Ա՛խ քո քուրդ, պարսիկ լցուած ձորերում
Ինչ կ'լինէր հայեր տատանուին ազատ,
Գայլերով լցուած խիտ անտառներում
Որսալ կրնալով ամեն բան առատ:

Ա՛խ քո գնացողք գէտ համալսարան
Միտք ունենային գնալու գալու,
Ոչ թէ շատի պէս, շատերի նման
Անյայտանային անգից էլ հեռու:

Ա՛խ, ինչքան, ինչքան, ինչքան լաւ կ'լինէր
Երբ ես այսքանը տեսնէի իմ աչքով,
Էլ ինչ դարդ, ինչ հոգս, ինչ վիշտ, ինչ վերքեր
Երբ ես կ'լսէի մայրենի լեզուով:

214. Գ Ի Տ Ո Ւ Ն.

Լաւէ յիմար լինես փողով, քան թէ առանց փողի գիտուն,
Քանզի փողի մէջ է փայլում աշխարհի վայելչութիւն,
Ուտել, խմել, հագնիլ, մանգալ, անվախ աներկիւղ խօսել,
Փողատիրոջ ճակատին է պարզ գրուած պոպոզուն:

Ոչ թէ բարեմիտ գիտունի, իմաստուն ազգասէրի,
Որոնք մարգատիրութիւնով տատանում են միշտ սահուն,
Աշխատելով, ծայրը ծայրին հասցնել չ'կրնալով,
Տրտում, տխուր օր է վատնում, միշտ կրելով դառնութիւն:

Վայելչութիւն, զուարճութիւն, երջանկառիթ շատ օրեր,
Անտէր փողի հետ է հաղում, թէն տէր անասուն,
Իսկ առանց փողի գիտունը, զրկուած շատ բաներից,
Իւր սե օրը միշտ կ'ողբայ, նման երգիչ Թառսրենուն:

215. ՄԷԿԸ ԶԻ ՄԵՌՆԻ ՄԻԻՍԸ ԶԻ ԱՊՐԻ ՀԱՆԴԷՊ ԺԼԱՏԻ.

Եթէ ունենամ ես քեզ նման
Սնդուկներս լի քանի բիւր թուման,
Մինչ մահս նորան չեմ թողիլ քնած,
Յետոյ կտակիլ մի հիմնարկութեան:

Ի՞նչ օգուտ, ի՞նչ շահ, ի՞նչ վառք ու պարծանք,
Այն օրհասական վարկեաններում,
Որ ես կտակեմ այդքան ճիւղ ու ջանք,
Վայելեմ հռչակ սե հողի խորքում:

Տեղի, անտեղի կտամ վաղօրօք,
Իմ աչքերովս տեսնելու համար,
Ոչ թէ կմերժեմ շատերի բողոք
Զճանաչելով առանցի սատար:

Ում հարկաւոր է իմ ձեռքով կտամ
Աջակցած նորա թշուառ կոցութեան,
Ոչ թէ քեզ նման կ'ընեմ անխնամ,
Դառնամ աշխարհում անօգուտ իշխան:

Կ'ընեմ սոված ծարաւ մնացած
Որբերի ճիշը ու աղաղակը,
Ոչ թէ քեզ նման կ'ապոյտ քար կտրած
Զեմ զգալ նոցա դառը վիճակը:

Որոնք գէպ երկինք հառաչանք պարզած,
Աղաղակում են գլխաբար խոնարհ,
Հարուստ մեռնողներ շատ արաւ, Աստուած,
Նորանց կտակով եղիր մեզ սատար:

Մենք սպասում ենք այդ օրհասական
Պանծալի ժամին ու ժամանակին,
Որի մէջ մեր ջիւը, մեր դատարկ գրպան
Ծառայիլ կուզէ այդ նսլատակին:

Թողէք պճնուի, թողէք զարդարուի
Նորանց գլուխը մեր պսակներով,
Քանզի չեն ուզում արհամարհուի
Մեր գրպանները այդ կտակներով:

Այս մեր ուզած փափազի մի մաս
Որ միշտ բխում է մեր սրտի խորքէն,

«Բիրի օլմասայ, բիրի դիրիլմադ»
Առածը պարզ է, թէն պարսկերէն:

216. Գ Ծ Ո Ի Ծ Ք Ա Ր Ո Ի Ս Տ.

Հարիւր հազարդ տուր ինձ, ես պահեմ,
Տես, քանի մարդի սիրտ պիտի շահեմ,
Քանի մարդի տուն, քանի մարդի տեղ,
Եւ քանի մարդի պիտի զրահեմ:

Թէ չես հաւատում, տուր ինձ, և փորձի,
Միայն մօտ մի գալ, հեռուից նայի,
Տես, թէ ինչ կանեմ առաջ քո աչքի
Եւ ինչպէս կ'օգնեմ քանի մի գործի:

Ի՞նչպէս ես կարծում, մինչև մէկ տարին
Կարող եմ վատնել քո այդ գումարին,
Որը մինչ օրս ժանգ ու դուլ դառած
Փլթում է, տան մէջ քեզ պէս յիմարին:

Ի՞նչ համբաւ ունես և ի՞նչ մեծ անուն,
Որ դու ապրում ես աշխարհում թաքուն,
Եղած չ'եղածդ թողնում օտարին,
Ամուլ մնալով. ի՞նչ շահ քո հոգուն:

Այնպէս ես կարծում ողորմի կուտան
Իբր քեզ սիրող ժառանգ պատուական,
Ամիս չի քաշիլ, որ կ'մոռանան
Քո վատ անունը աշխարհիս վրան:

217. Վ Ա Ր Դ Ա Ն.

Նուէր պ. Մկրտիչ Գէորգեան Մովթանեանցի անդրանիկ Վարդան
որդու անուանակոչութեան մեծ տօնի առթիւ.

Պարկեշտ մօր!, ծնեալ Վարդան,

Եկ, շուտ դառուիր օրօրանից,

Հեռացած այդ հնադարեան

Մարդ կաշկանդող օդանից:

Բաւ է հոգիս, քիչ կապկապուիր,

Քնքոյշ շորերով փաթաթուիր,

Վեր կաց, գիր գրիր, գիր կարգիր

Վսեմացիր քեզ նմանից:

Ընկերներդ գրքեր առած

Պայուսակի մէջը դարսած,

Կարմիր կանաչ հագած, փրուած

Գնում են գալիս վարժարանից:

Քնքոյշ, քնքոյշ իրար գրկած

Հաղում են զոյգ զոյգ միացած,

Կարծես վարդի պէս փունջ կապած

Բերած լինեն վարդարանից:

Դուն էլ վեր կաց, արա այդպէս

Շատ քնելով ինչ պիտ սովրես,

Տես, աշխարհում ինչ կ'տեսնես

Քո հայրենի Հայաստանից:

Անունդ գրիլ են Վարդան

Մեծանաս Վարդանի նման,

Խորտակես լուծը պարսկական
Օրինակ առած Վարդանից:

Քեզի սիրտդ, աղբ Սրամեան

Քող կարծէ քեզ մի նոր նշան,

Մեծ Վարդանի պէս անման

Մամիկոնեան աղգականից:

Որը խաչն ու թուրը ձեռքին,

Ջարդում էր թշնամու զօրքին,

Մէկը տադին միւսը անդին

Ամէն մէկը մի աւանից:

Որոնք ահ ու երկիւղի մէջ

Սարսափուած իջնում են էջ, էջ,

Կարծես հագած կրակ անշէջ

Մշտալուռ մեծ վառարանից:

Դէ՛հ, զօրանաս, սիրուն մանկիկ

Մի հօր, մի մօր անդրանիկ,

Տէրը քեզ պահէ երջանիկ

Գնաս դաս համալսարանից:

Փարատիր հօրդ վշտերը,

Յրիւ տուր մօրդ հոգսերը,

Գրաւիր Ղզլարցոյ սէրը

Օգուտ րաղած ամեն բանից:

Տէրը քեզ պահէ անսասան,

Մեծանաս դառնաս մեծ իշխան,

Զի նեղանաս շատի նման

Ներսէսի նման գուսանից:

Թառսիւնին հմ քեզ հաւատար,
Հեռատես և հեռանշմար,
Խնդրում եմ ասլիս երկար
Երկնային մեծ իշխանից:

1894 թ. Փետրուարի 24-ին
Ղ. Գլարուն.

218. Ի Զ Ո Ի Ր Է.

Խելքի կարօտ, շնորհքից զուրկ մարդի հետ
Իմ կարծիքով, երկար մնալն իզուր է,
Մի բանով էլ եթէ լինի օգտաւէտ,
Դարձեալ նստիլ և խօսալն իզուր է:

Պաշտպանելով այդպիսի զաղափարին
Ամեն մի բան կ'դառնայ անհնարին,
Այդպիսի վերաբերեալ այսպէս տարին
Կարճ ու բարակ միտք ունենալն իզուր է:

Այսպիսի մի դժուամի սէր տածելով,
Դուն ինքզ քեզ վերք տալով, հարուածելով,
Բան չես չինել նստելով մտածելով
Քանզի անդից մի բան յուսալն, ի զուր է:

Թառսիւնի հեռացիր այդպիսիներից
Մենակ չարժուիր բաժին ուզած Տէրից,
Փախիր այդպէս հաստափիլ ընկերից
Որի հետ քս գնալն ու գալն, իզուր է:

219. ԸՆԿԵՐԻՑ ԴՐԴՈՒՄԸ.

Թէն չունի արժէք ու արժողութիւն
Մանկական օրերս վատնեցի ի զուր,
Որոնք այժմ իբր մի մեծ պատմութիւն
Գրաւում է ուշքս թողնում ինձ տխուր:

Մէկ օր տգէտի հետ, մէկ օր յիմարի,
Մէկ օր բոլորովին խելքից տկարի,
Մէկ օր խելագարի, մէկ օր տխմարի,
Մէկ օր ցաւ ու դարդս թողնելով հարկւր:

Ումին մինչ օրս կարծեցի բարեկամ
Հանդիսացաւ ինձի դահիճ չարակամ,
Թէն գոված, պատուած, հաղար մի անգամ
Ելի ոտիս տակը, փորել է անլուր:

Խեղճ Թառսիւնի, այդպէսիներից խորշիւր դու,
Թէ միտք ունես մեծահամբաւ լինելու,
Անկեռիք գայլեր են խիստ արիւնարբու
Լափած պրծած քս հայրենիք Զանգեզուր:

220. ԷԼԻ ՆՈՐԱՆ ՂԱԼԱՐՈՒՄ.

Ով քօռի կարապետ, սալի թորբաբաշ
Անջուր ջաղացի անվարձ ջաղացական,
Դուն էլ պիտի անես սիրտս հալ ու մաշ
Վէրքերս թողնելով առանց սպիկան:

Ուլ ախօռի միջի դաշիւ գողացող
Երկու երեք էշի գարի բաժանող,
Դուն էլ պիտ քեզ գոչես երգեր յօրինող,
Յետ ընկած Սիւնիքի երգահան գուսան:

Ուլ փրուած խրճիթի անուղիղ նեցուկ,
Հաղար մի ձայն հանող պատրուած թմբուկ,
Դուն էլ պիտ թշնամի դառնաս ինձ յատուկ
Եւ մինչ ցմահ խեղճ Թառսիւնուս դաւաճան:

221. Գ Զ Ե Զ.

Իմաստութեան սղեղ, զիտութեան ճահիճ,
Մինչ երբ պիտի դու անպիտան մնաս,
Խեղքի կարօտ, շնորքի ծարաւ դահիճ,
Քաւական չէ քեզի չար դաժան մնաս:

Շատ էլ եկար, մտար իմ ասպարէզը,
Մէկ պիտի համարես արդար ու հեզը,
Ախար ի՞նչ քո բանն է ա՛յ անպող եզը
Որ գուն էլ գաս ինձ մօտ պատմաբան մնաս:

Ուլ մունջի առաջնորդ, կաղի դեկաւար,
Տգէտ նաւափարի անմիտ նաւափար,
Դու էլ պիտ անուանես, քեզ մեծահանձար,
Նմաններդ շարքում գիտնական մնաս:

Ուլ ճիճու շամբերի անատամ սլուկ,
Արիւնարբու շինճու մի հատ տգրուկ,
Դուն էլ պիտ գաս ծծես արիւնս յատուկ
Համ էլ հետո նստես չար գազան մնաս:

Հեռացիր ինձանից, դող և աւազակ,
Քեզ պատիւ չէ հեռու կենաս ինձ ներհակ,
Քեզ համար անուն է, քեզ համար հռչակ
Թէ շատերի նման հանդիման մնաս:

Քանի մին ներեմ քեզ, հաստավիղ ապուշ
Տգիտութեան տիպար, շինճու պառաւ փուշ,
Յարգ չէ քեզի անես վաստակս անուշ
Առանձնացած ինձի դաւաճան մնաս:

Շատ մի յուսալ, որ շատերի նմանակ
Կստանաս աշխարհում անուն ընդունակ,
Եւ մի յուսալ վատնելով թուղթ ու թանաք
Թառսիւնուս պէս պիտի հայ գուսան մնաս:

222. Տ Ի Գ Ա Ր.

Կարապետ կոյրերի, առաջնորդ կաղի,
Հաստազուլաների մեծանուն տիպար,
Թարգման համբների, ընկեր դանդաղի
Ձեռք բեր նոր միտք, նոր խելք և նոր գաղափար:

Սանձահարէ քո այդ թարս բնութիւնին,
Դա հաստատ չի թողնիլ հիմքը քո տունին,
Լսիր քեզ օգտաւէտ խօսքը գիտունին,
Ժառանգիր շատի պէս քո բաժին աշխարհ:

Քանի մին համբերեմ, բանի մին տանեմ,
Քանի մին անտեղի քեզ գովաբանեմ,
Քանի մին քեզ ազնիւ ընկեր անուանեմ
Դիտմամբ, ոչ թէ անգիտութեամբ, ով յիմար:

Ըմբռնելով իմաստը սուրբ գրքերին,
Տունս քանդուեց սիրելով քեզպէսներին,
Մէջ այս խորհուրդներին, մէջ այս մտքերին,
Թառսիւնին իրան թողեց անսատար:

223. Ա Ղ Օ Թ Ք.

Ճշմարտութեան արքայ, արդարութեան պետ
Երկնի և երկրի Արարիչ Աստուած,
Բացի քեզ ես ում ճանաչեմ փրկաւէտ,
Արքայ անմահ, արքայ գլխած, ողորմած:

Ո՛վ արքայից արքայ, իշխանաց իշխան,
Արև արքայութեան, լոյս արդարութեան,
Քեզ եմ խնդրում քեզ աղաչում մշտական:
Կարօտելով գլխութեանդ ողորմած:

Բացի քեզից ում ճանաչեմ անսխալ,
Ըմբռնեմ քղանցքը, ցոյց տամ լաց ու լալ,
Թառսիւնիս գէպ քեզ եմ ուզում ընթանալ
Խնդրելով մշտական մի պատառ հաց:

242. ՄԱՆԳԻՉԼԱՂՈՒՄ.

Մի հատ ուր-սխարար նամակի տարաբնուութեան տակ

Հրճվում եմ հողով, հրճվում սրտով,
Մեր գիւղում բացուած դպրոցի առթիւ,
Որի համար շատ տարիներ վիճելով
Կոչել տուի ինձի անմիտ անապիւ:

Թշնամի էի կարծում հեռու կանգնողին,
Դահլճ անուանելով չ'նպաստողին,
Հայ չ'անուանելով արգելք լինողին
Շանթեր էի արձալում անհամար անթիւ:

Օրերս վատնելով թանկ ու աննման
Սիրով ընդունում էի ամեն մի չրջան,
Ասում էի խօսում էի գէպի վարժարան
Աղմուկ բարձրացնում ինչպէս մի անիւ:

Ասում խօսում էի վախկոտ ու երկչոտ
Կիսապատիւ եղած Սհանների մօտ,
Ասում, վատնում էի ամեն խոչնդոտ,
Վարժարանի համար քառորդ տար լրիւ:

Վայ էր թէ կոչէի պէտքէ վարժարան
Կը բացուէր ինձ վերայ ամեն մի բերան,
Տարիներով մնալով ինձ դաւաճան
Կը մղէին բիւր տեսակ, անտեղի կռիւ:

Երբեմն մեծ սիրով, երբեմն անսխալ
Հալածել են ինձի հասցրել վէրքեր,
Յրիւ տալով ծագած ամեն մի մտքեր
Ասած խօսածներս քցելով արխիւ:

Ամեն մի թերիմաց, ամեն աղղուրաց
Հանգիմանել է դիւս, կանգնել իմ դիմաց,
Անպատուաբեր սուր-խօսքերով որընթաց
Լափել են թարմ սիրտս անհաշիւ:

Դեռ չ'ուսահատուած խօսել եմ դարձեալ
Իմ ուժի չափ, թէ սխալ, թէ անսխալ,

Անհրաժեշտ է մեզի այդ ունենալ
Որի առթիւ դարեր է վատնուած վաղիւ:

Զգում եմ ինձ ուրախ, ուրախ, շատ ուրախ,
Մեռած անուանելով ամեն մի խարդախ,
Որոնք անգլխաբար, աներկիւղ անվախ,
Ոտի տակ են տուել, իմ յարգ ու պատիւ:

Թառսիւնիս այս տեսակ ամեն չարչարանք
Ամեն հայհոյանք ու ամեն զրպարտանք:
Ընդունել եմ, յարգած շատի բամբասանք
Մթնկած թողնելով իմ արև իմ տիւ:

✓ 225. ՀԱՅԿԱՏԱԿՆԵՐԸ ԽՆՁՈՐԷՍԿ ԳԻՒՂԻ.

Ինչ ասես, ինձ չեն ասել լսացրել,
Հէնց իմ երկրացի հացկատակները,
Միտս կերել, ոսկորներս են հասցրել
Յարգելով իրանց գէշ նպատակները:

Գարձեալ ինձ են արել, ինձ վատաբանել
Ինձ անպատիւ արել, ինձ հանդիմանել,
Ինձ յանցաւոր կարծել, ինձ հանդիմանել:
Ծանր յանցանքի տէր, աւազակները:

Ինչ որ առան, յետ չ'ըրբին որ ինձ տան,
Իբր պարտաճանաչ մարդիք աննման,
Այդ մասին էլ ինձ մատնեցին խեղճութեան
Նոր լոյս ընկած, երկրորդ Վասակները:

Միով բանիւ Թառսիւնուս աղբատ թողին,
Փողից բանից գրպանս փարատ թողին,
Օրս խաւար, գրութիւնս վատ թողին,
Անիական բեռնակիր, աւանակները:

226. ՊԱՐՏԱՃԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ ՍԻՆԵՆՑ ԱԶԽԱՐՀՈՒՄ.

Ով որ ինձի պարտէ, ուզել չեմ կարում
Զեմ կարում որ ասեմ տուր գոնէ մուրհակ.
Իսկ որին ես պարտեմ, ամեն մի դէպքում
Ասում ու խօսում է արձակ համարձակ:

Զէ ուզում անցնել, անգամ չէ ուզում ներել,
Զէ ուզում ժամանակ տալ, չէ ուզում համբերել,
Առանցի ամաչել, առանցի կարմրել
Վարժվում է հանդուգն անդուսպ, սանձարձակ:

Կեանքի առօրեայ ամեն գործերում
Ամեն հարցերում ու ամեն փորձերում,
Զի ամանչում միշտ առածն է կրկնում
Թէն ինձ անախորժ թէն դառնորակ:

Մարդ համարած, ոտը ձեռքը համբուրեն
Յարգեն, պատուեն մեծարեն հրապուրեն,
Նա չի վարուիլ դարձեալ անկուրօրէն
Ինչ տեղ նստէ, կ'սօսէ իբր կատակ:

Իսկ Թառսիւնիս եթէ ունեմ պարտական
Պահպանում եմ առանց ազգի խտրութեան,
Զեմ ստիպում թէկուզ լինի դաւաճան
Ներում շնորհում եմ երկար ժամանակ:

227. ՀԱՅԿԱՏԱԿԻՆ Խ. ԳԻՒՂՈՒՄ

Կոյրերի առաջնորդ, սաղի բեռնակիր,
Ինչքան պիտի ինձ հետ հակառակ մնաս,
Լուծել չ'կրնալով մի հատիկ խնդիր
Փոխարէնը պիտի ինձ ներհակ մնաս:

Ով նոր շինած տունի մուկ թակած սութուն,
Քանի մին անուանես դուն քեզի պիտուն,
Առանց իմացութիւն առանց կրթութիւն
Շատերի շրջանում հեղինակ մնաս:

Փոխիր վարք ու բարք, վարուիր իբր մարդ,
Մարդկութիւնով եղիր այս աշխարհի դարդ,
Թէ չէ՛ շատի համար լարելով թակարդ,
Մի կարծիր, որ պիտի մեծ հռչակ մնաս:

Ընկեր ես համարում, ընկեր անուանում,
Ընկեր գոյով, շատ պատուի արժանանում,
Նստած բովս ամենայն մի շրջանում,
Ամօթ չէ քեզ, այդպէս այլանդակ մնաս:

Անունդ գրել ես դաւթարի դուստն,
Ոչ ապօլօն ես ճանաչում, ոչ մուսան,
Դադածդ պահելով սիրելով մուստան,
Բաւ չէ Թառսիւնուս մօտ, հացկտտակ մնաս:

228.

Մ. Ա. Դ. Խառն Լեզուակ ԳՈ

Սյունհետե ինձանից չհեղանաս
Ես էլ քեզի նման պիտի վատ մնամ,
Քեզանից ոչ աւել, և ոչ էլ արտաս
Կատարեալ քիչ պիտի համեմատ մնամ:

Բաւական է որքան թոյլ եմ շարժուել
Ինչ արել ես, ես անել չեմ կամեցել,
Սյրքանը մինչ օրս պարտք չեմ համարել
Դործադրել, որ քեզ հետ հաստատ մնամ:

Սյունհետե ինչ ասես, լսելու եմ, ինչ ասես զէջ
Վատաբանելու եմ, բամբասելու եմ;
Պատահողին կարամ, վնասելու եմ
Որ քեզ նման ես էլ բաղմաշխարհ մնամ:

Փռչին վարդ պիտ ասեմ, վարդին պառաւ փուշ
Նուշին սալոր, իսկ սալորին քաղցր նուշ,
Թէկուզ այդ մատին ինձ անուանեն ապուշ
Հոգ չէ, բաւ է քեզնից անաղատ մնամ:

Ամօթ չեմ զգալու կանչուած տեղը
Առաջս քաշելով փլաւի եղը,
Ընտրելով քաբաբի մէջ չքեղը,
Մարտիրոսիդ պիտի հարազատ մնամ:

Նամանականդ առաջին վերջին թիրքան
Շաքից Շաքեմ թողնիլ որ մի մարդ ձեռք ձգէ նորան,
Կը հետեւեմ քեզի առ այժմ այսքան
Որ կարամ քեզ նման պայազատ մնամ:

Այս օրուանից խօստանում եմ այսրանը
Որ կատարեմ մտած ձեր մեծ շրջանը,
Թէ խախտուած տեսնես դու այս պայմանը
Թող խելքից զուրկ. չնորբի աղքատ մնամ:

Թառսիւնիս պիտի շարժուեմ անշահաւէտ
Ընդունելով պատուէրներդ հետզհետ,
Ազնիւ, խոհեմ, պարկեշտ, խելօք մարդի հետ
Խօստանում եմ այս օրուանից եադ մնամ:

229. ՔԱՆԻ ՕՐ ՓՈՐԹՈՒՄ.

Ինչէր ասես որ չի անցնում իմ մտքով
Փորթում նստած, մէկ սենեակում անսատար,
Եւ ինչեր չէ անցնում իմ տխուր սրտով
Որը ինձ տանջում է, մաշում չարեշար

Բացի յաջողութեան մի մեծ արշաւանը
Մի բան չի գայ ինձի հասցնէ փրկանը.
Որի առթիւ խաւար է իմ օր, իմ կեանք,
Եւ պատած ինձ համար իմ երկնակամար:

Թէև հեռանշմար, թէև բազմաշխատ,
Վէրքս անրուժ անցնում. ցաւս անփարատ,
Օրս դէշ է անցնում, դրութիւնս վատ,
Թանկ ժամիրս մէկը միւսիցը վատթար:

Թառսիւնիս եմ, ոլոր մոլոր մնացած,
Տրտում տխուր ապշած ու մաշուած ընկած,
Մերթ դէպ ծովը, մերթ դէպ ջուրը, աչք ձգած,
Մի բան չի երևում ինձի սփոփարար:

230. Փ Ի Ս Ը.

Ինչից է ինձ պատահում, չեմ գիտում, ընկերի փխր,
Թէև ջոկում վերցնում եմ, մարդկանց մէջի խալիւր,
Որը գող, որը աւազակ, որը շուն է դուրս գալիս,
Որը ծախած, կերած եկած, Հայաստանը Բիթլիսը:

Հարցնեմ ինչ տեղացի ես, կ'սէ բուն Հայաստանից
Ձուրցելուց չեմ լսել կ'սէ, ոչ Կիլիկեան ոչ Սիւր,
Երկար ու կարճ կը բլբլայ տակից, գլխից ու կողքից,
Մերթ եթաքը կը գործածէ, մերթ Ղարաբաղի բիւր:

Մերթ կ'սէ Երևանցի եմ, Երևանի մէջ տեղից,
Մերթ կ'սէ դեռ տեսած չ'կամ Արարատը, Մասիսը,
Աշխարհատես մարդ եմ կ'սէ, բան չը կայ ինձ անձանօթ,
Թէ հարցնես չի ճանաչիլ Գուրջստանը Թիփլիսը:

Նորից էլ մէկին ճարել եմ, ընկերասէր Թառսիւնիս,
Բօքշ ուտելիս ջուր չէ սիրում, սիրում է միայն միւր:

231. ՄԱՆԳԻ ԶԼԱՂՈՒՄ.

Նուէր Մեծ. պ. Յովհաննէս Ստեփանեան Արաբեանցին.

Մանգիշլաղում ապրող եղբարք թանկագին,
Արիք մէկս մէկու պահապան մնանք,
Պաշտպաններ ճարածին, փնտռենք կորածին,
Աջակցած իրարու, միաբան մնանք:

Վատ համարած անմիութեան արդիւնքը
Սուրբ համարած միութեան իրաւունքը,

Սիրած այդ մեծ միտքը, մեծ զգացմունքը,
Շատի նման մենք էլ գովական մնանք:

Սիր փափազիլ շատի կեղծ հրանութեան,
Ստած փառաբարոյ զրդի շրջան,
Հերքելով առաջոտ երկիրը հառուկան,
Բաւական է մեղի ժրաշահ մնանք:

Մեր լինին է փրկանքը այդ ծովափին,
Թողած տրտում մեր պնշարած վան, չարին,
Օժտուած այս մեծ յոյսերով միտքին,
Գնանք, գնանք, դարձերի դարձան մնանք:

Թողէր հոգիս, առաջաշար Կոստանի լեռնակց խի ճիգով
Երկիրները, հողը ջուրը անպիտան,
Ընթանանք մեծ խիրով դէպ Մոռ, դէպի վան,
Գործիւ, բանիւ, հոգով անբաժան մնանք:

Շանաչած այդ արքայական աղարանը,
Փլուած, բէկուած, դադար թերած ուրախայրը,
Որոնենք անդ մեր բազմ, մեր փառք, մեր պարծանք,
Շատի նման գնանք, օգնական մնանք:

Ձատ չ'մնանք հայրենի երկրիցը,
Հայրենակիցների, ազնիւ սերիցը,
Օգտուած Մշակիլ յօգնածներիցը,
Բաւական է մեղի գաղթական մնանք:

Հետենք Թառսիւնու լաւ օրինակին,
Պաշտպաններ վարդանին, ատենք Վասակին,
Ստած պանդխտութեան մեծ հեղինակին,
Հայ ենք, հայի կոչմանը արժանի մնանք:

